

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Վ. Հ. ԳՈՒԼԲԱՆՅԱՆ

Ի. Վ. ՄԻՉՈՒՐԻՆԻ ԵՎ Տ. Դ. ԼԻՍԵՆԿՈՅԻ
ՈՒՍՄՈՒՆՔԻ ԼԱՅՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1949



57(47)(092 Վիշնյուս)

Գ-86

Վ. Հ. ԳՈՒԼՔԱՆՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

Ի. Վ. ՄԻՉՈՒՐԻՆԻ ԵՎ Տ. Դ. ԼԻՍԵՆԿՈՅԻ
ՈՒՍՄՈՒՆՔԻ ԼԱՅՆ ԿԻՔԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ



А 5856

В. О. ГУЛКАНЯН
ЗА ШИРОКОЕ ПРИМЕНЕНИЕ
УЧЕНИЯ И. В. МИЧУРИНА

и

Т. Д. ЛЫСЕНКО
(На армянском языке)

Изд. АН Арм. ССР, Ереван, 1949 г.

Ի վան Վլադիմիրովիչ Միչուրինի և Տրոֆիմ Դենիսովիչ Լիսենկոյի ուսմունքը հնարավորություն է տալիս հասկանալու բույսերի և կենդանիների կյանքն ու բնույթը: Ավելին, այդ ուսմունքը հնարավորություն է տալիս փոփոխության ենթարկելու կենդանի օրգանիզմները, այլև ստեղծելու նորերը՝ ըստ մարդու կարիքների և պահանջների:

Ի. Վ. Միչուրինը և Տ. Դ. Լիսենկոն այսպիսի ուսմունք են ստեղծել շնորհիվ այն բանի, որ նրանք զարմանալի խոր կերպով հասկացել են և պարզաբանել բույսերի բնույթը: Նաև շնորհիվ այն բանի, որ նրանք բացահայտել են այն միջոցները, որոնք հնարավորություն են տալիս բույսերի և կենդանիների նոր արժեքավոր տեսակներ ստեղծել՝ ըստ մարդու կարիքների, վերջապես շնորհիվ այն բանի, որ նրանք այդ խնդիրները լուծել են սոցիալիստական գյուղատնտեսության առաջ կանգնած հարցերի զիտական և դործնական ուսումնասիրության հիման վրա:



Ի. Վ. Միչուրինը և Տ. Դ. Լիսենկոն ունեցել են արժանավոր և մեծ նախորդներ, որոնք աշխատել են հասկանալ և բացատրել բույսերի և կենդանիների կյանքը: Այդ նախորդներից ամենամեծադույնը Չարլզ Դարվինն է: Դարվինը բույսերի և կենդանիների կյանքը հասկացել է ու բացատրել հանճարեղ կերպով, նա ջախջախիչ հարված է հասցրել կրոնականների ու մետաֆիզիկների հայացքներին, հիմնավոր կերպով ապացուցելով բույսերի և կենդանիների փոփոխականությունը, զարգացումը, նա տվել է բուսական և կենդանական աշխարհի էվոլյուցիայի տեսությունը, բույսերի և կենդանիների փոփոխականության, ժառանգականության և բնական ու արհեստական ընտրության տեսությունը, նա ստեղծել է մի ուսմունք, որի հիմնական կորիզը մատերիալիստական է, մի ուսմունք, որի հիման վրա մարդիկ կարող են հասկանալ և բացել բնության շատ գաղտ-

նիքներ, ամենից առաջ այն գաղտնիքը, թե ինչպես է, որ բույսերը և կենդանիները զարմանալի կերպով համապատասխանում են արտաքին պայմաններին:

Սակայն, գիտնականները մեծ մասամբ բավարարվել են նրանով, որ աշխատել են հասկանալ և բացատրել բույսերի և կենդանիների զարգացումը, պատմությունը: Կարելի էր, արդյոք, բավարարվել դրանով: Ոչ, չէր կարելի: Եվ ահա, սլոուենտարիատի մեծ առաջնորդ Կարլ Մարքսն առաջինն է, որ հստակ կերպով նշել է՝

«Փիլիսոփաները միայն տարբեր ձևով բացատրել են աշխարհը, բայց բանը կայանում է նրանում, որ փոխեն այն»:

Իվան Վլադիմիրովիչ Միշուրինը հենց այդպես էլ վարվել է, նա չի բավարարվել միայն բույսերի զարգացման պատմության ուսումնասիրությամբ, նրանց կյանքի ու բնույթի բացատրությամբ: Չի բավարարվել նաև նրա գործի լավագույն շարունակողը՝ ակադեմիկոս Տրոֆիմ Դենիսովիչ Լիսենկոն: Նրանք խնդիր են դրել՝ ոչ միայն հասկանալ և բացատրել բույսերի և կենդանիների զարգացումը, նրանց բնույթը, այլև պարզել այն ճանապարհները, որով կարելի է փոփոխության ենթարկել նրանց և հարմարեցնել սոցիալիստական տնտեսության կարիքներին, մարդու կարիքներին: Այդ նպատակը նրանք դրել են՝ ելնելով այն մեծ նշանաբանից, որ Իվան Վլադիմիրովիչ Միշուրինը այսպես է արտահայտել՝

«Մենք չենք կարող շնորհների սպասել բնությունից, նրանից այդպիսիները վերցնելն է մեր խնդիրը»:

Այս արդեն մի նոր շրջան է բույսերի և կենդանիների կյանքին վերաբերող գիտության, այսինքն բիոլոգիական գիտության զարգացման մեջ:

Եվ իսկապես, շատ գիտնականներ կարողացել են ճիշտ կերպով բացատրել բուսական և կենդանական օրգանիզմների զարգացման հետ կապված բազմաթիվ երևույթներ, բայց ոչ ոք Ի. Վ. Միշուրինի և Տ. Դ. Լիսենկոյի չափ չի գիտեցել, թե ինչպես պետք է փոխել բույսերի և կենդանիների բնույթը: Եղել են մեծ փորձարարներ, ինչպես, օրինակ, ամերիկացի գիտնական Բերրանկը, ֆրանսիացի գիտնական Վիլմորենը և ուրիշները, որոնք խորը կերպով հասկացել են հիբրիդիզացիայի նշանակությունը բույսերի ժառանգականությունը խախտելու և այդ հիման վրա նոր, օգտակար բուսական ձևեր ստեղծելու գործում:

Նրանք հասկացել են, որ խախտած ժառանգականություն ունեցող բույսերը ստիպված պետք է լինեն հարմարվել արտաքին միջավայրի այն պայմաններին, որոնք արամադրվում են նրանց։ Նրանք պարզել են, որ այս եղանակով հնարավոր է ստեղծել բազմապիսի բուսական նոր ձևեր։ Նրանք ստանալով այդպիսի ձևեր ու նրանց մեջ բնորոշյուն կատարելով, իրոք որ կարողացել են ստեղծել բույսերի բազմաթիվ նոր սորտեր։ Սակայն նրանցից ոչ մեկը չի արել այն, ինչ արել են Իվան Վլադիմիրովիչ Միչուրինը և Տրոֆիմ Դենիսովիչ Լիսենկոն, որոնք ստեղծել են դարմանալի խոր դիտություն՝ բույսերի և կենդանիների նպատակադիր փոփոխության և դաստիարակության մասին, բույսերի ժառանգականության ղեկավարման մասին։

Իվան Վլադիմիրովիչ Միչուրինը և Տրոֆիմ Դենիսովիչ Լիսենկոն ստեղծել են այն դիտությունը, որը կոչվում է միչուրինյան բիոլոգիա։ Նրանք դիտություն են ստեղծել բույսերի ժառանգականության մասին, դարգացնելով Դարվինի ուսմունքի հիմնական, ճշմարտացի, մատերիալիստական կորիզը։ Պետք է միշտ հիշել, որ Ի. Վ. Միչուրինը և Տ. Դ. Լիսենկոն կարողացել են այդ անել շնորհիվ այն բանի, որ նրանք հարցերին մոտեցել են Մարքսի, Էնգելսի, Լենինի և Ստալինի ուսմունքի տեսակետից, դիալեկտիկական մատերիալիզմի տեսակետից։

Այստեղ պետք է ասել, որ բուրժուական դիտականներն ևս առաջ են քաշել բույսերի և կենդանիների ձևադոյացման հարցը, բույսերից և կենդանիներից նոր ձևեր ստանալու հարցը։ Սակայն նրանք այդ խնդիրը դրել են՝ ելնելով իդեալիստական, մետաֆիզիկական տեսակետից։ Նրանց սխալը բխել է նաև նրանից, որ նրանք կարծել են, թե՛ եթե բույսերի վրա ազդեն դաշնադան միջոցներով, օրինակ՝ ռենտգենով, կամ այլևայլ քիմիական նյութերով, ապա, դուցե թե ստանան նոր ձևեր, շեշտում ենք՝ դուցե թե, քանի որ նրանք ելնում են «դուցե թե ստացվի» սկզբունքից, այլ խոսքով՝ պատահականությունից։

Ի. Վ. Միչուրինը և Տ. Դ. Լիսենկոն ապացուցել են, որ այդ սխալ է, որ չի կարելի բույսերի նոր, օգտակար ձևեր ստանալ, ազդելով նրանց վրա բույսերի բնույթի համար անբնական միջոցներով, որ օգտակար ձևեր կարելի է ստանալ բույսերի դարգացման արտաքին պայմանների փոփոխման միջոցով, առհասարակ այնպիսի միջոցներով, որոնք թեև ղեկավարությամբ, բայց կարող են յուրացվել բույսի կողմից, կարող են օգտակար լինել

բույսերի սնման և զարգացման համար, կարող են ասիմիլացվել բույսի կողմից: Վաղուց հայտնի է, որ շատ քիմիական նյութեր արժեքավոր սնունդ են բույսերի համար: Օրինակ՝ ազոտ, կալի, ֆոսֆոր և այլն նույնպես քիմիական նյութեր են, որոնք գյուղատնտեսության համար անհրաժեշտություն են դարձել: Հնարավոր է, որ գտնվեն այնպիսի նոր քիմիական նյութեր, որոնք ընդունվելով բույսի կողմից արմատների կամ տերևների միջոցով, դրական կերպով ազդեն նրա զարգացման վրա և մեծ արդյունք տան: Սակայն մորգանիստ-մենդելիստները հաշվի չեն առել այդ բանը, ձգտել են կիրառել այնպիսի նյութեր, որոնք կործանարար թույն են բույսի համար, որոնք որոշ դոզաներով գործադրվելու դեպքում, ճիշտ է, ազդում են բույսի վրա և փոփոխված սերունդ առաջացնում, բայց այնպիսի սերունդ, որը որպես օրգանիզմ՝ կուլտուրայի համար ընդհանրապես անպետք է, դեգեներատ է, այլասերված է, և միայն երբեմնակի, պատահաբար ստացվում է որևէ բուսական ձև, որը պիտանի է լինում այս կամ այն նպատակի համար:

Ինչ խոսք, որ պետք է մերժվեն այն բոլոր նյութերը, որոնք բույսերի վրա այնպես են ազդում, որ նրանք կամ կործանվում են, կամ այլասերված սերունդ տալիս: Բիոլոգիական գիտությունը կարիք չունի այդպիսի անբնական միջոցների: Դիալեկտիկական մատերիալիզմից ելնող միջուրինյան բիոլոգիական գիտությունը, ագրոբիոլոգիական գիտությունը, չի կարող ելնել պատահականությունից: Չի կարող, քանի որ, ինչպես ասել է Ի. Վ. Միչուրինը՝ «Այժմ հասել է այն ժամանակը, երբ մարդը կարող է ոչ միայն պատրաստել զանազան մեքենաների մեռած մեխանիզմներ, այլև ստեղծել բույսերի նոր տեսակների կենդանի օրգանիզմներ, իսկ ապագայում հավանաբար կհասնի նաև իր կյանքի համար ավելի օգտակար կենդանիների նոր ցեղեր ստեղծելուն»: Ահա այս է եղել ճշմարտացի բիոլոգիայի զարգացման ուղին և այս էլ կլինի:

Պետք է ասել, որ բույսերի և կենդանիների բնույթը նպատակադիր փոփոխության ենթարկելու հնարավորությունը պարզելու հետ միասին պետք էր ջախջախել մետաֆիզիկաների այն կարծիքը, թե բույսերի տեսակներն ու անասունների ցեղերն անփոփոխ են: Մետաֆիզիկական դադափարներին ջախջախիչ հարված է հասցրել Չ. Դարվինը: Սակայն, Ի. Վ. Միչուրինի ժամանակ ևս մետաֆիզիկաները, հանդես գալով նոր ձևերով, շարուն-

հակում էին խոչընդոտներ հարուցել դիտության առաջ: Հենց այդ էլ նկատի է ունեցել Ի. Վ. Միշուրինը, որը գրել է. «Բուսական տեսակը մի ինչ-որ մշտնջենական և անփոփոխ բան չէ, ինչպես սովորեցրել են բոլոր ժամանակների մետաֆիզիկները, ինչպես մինչև այժմ փորձում են ապացուցել այդ հնամուսնիները՝ կատարյալական դիտության ներկայացուցիչները: Ինչպես ռամեն ինչ հոսում է, ամեն ինչ փոխվում է», այնպես էլ տեսակը փոխվում է»:

Դարվինը, հիմնովին հերքելով մետաֆիզիկների դադափարը, ստեղծել է իր էվոլուցիոն տեսությունը՝ բույսերի և կենդանիների դարդացման, նրանց բնական և արհեստական ընտրության մասին: Դարվինը, իսկ նրանից առաջ ֆրանսիացի մեծ դիտնական Լամարկը, նշել են, որ բույսերն ու կենդանիները արտաքին պայմանների ազդեցության տակ փոխվում են և որ այդ փոփոխությունները անցնում են սերնդից-սերունդ: Հատկապես Լամարկը պարզ կերպով գրել է այն խնդիրը, որ բույսերն իրենց դարդացման ընթացքում արտաքին բարենպաստ պայմանների ազդեցության տակ ձեռք բերած փոփոխությունները տալիս են հաջորդ սերունդներին: Սակայն Լամարկը և Դարվինը չեն կարողացել պարզել, և չէին կարող պարզել, ժառանգականության հետ կապված շատ հարցեր, քանի որ դիտության դարդացման այն ժամանակվա աստիճանն այդ թույլ չէր տալիս: Նրանք միայն այդ հարցը գրել են, ըստ որում գրել են ճիշտ կերպով: Ճիշտ կերպով են գրել, քանի որ նրանք շատ հարցերի լուծմանը մոտեցել են մատերիալիստական տեսակետից, իրենց ժամանակի առաջավոր դադափարների ազդեցության տակ՝ Լամարկը ֆրանսիական մեծ ուղղության ժամանակ առաջացած լուսավորչական դադափարների, իսկ Դարվինը անգլիական հասարակական-տնտեսական շարժման առաջավոր ձգտումներին:

Այսպես թե այնպես, նրանք՝ Լամարկը և Դարվինը, բույսերի և կենդանիների փոփոխության և ժառանգականության հարցերը առաջ են քաշել և նրանցից շատերը ճիշտ կերպով լուծել: Սակայն, ժառանգականության վերաբերյալ ծագել էին բազմաթիվ հարցեր, որոնք չափազանց հրատապ էին և որոնց լուծումը ծայր աստիճանի անհրաժեշտ էր դարվինիզմի հետագա դարդացման համար:

Այստեղ պետք է փոքր ինչ կանգ առնել այն բանի վրա, թե ինչ է կատարվել դարվինիզմի հետագա դարդացման հետ:

Պետք է հիշել, որ Դարվինը հրապարակել է իր «Տեսական-
րի առաջացումը» հոչակավոր աշխատությունը դասակարգային
կատաղի պայքարի պայմաններում: Տարբեր դասակարգերը և
նրանց ներկայացուցիչներն ու առաջնորդները տարբեր ձևով են
ընդունել այդ աշխատությունը, տարբեր ձևով են ընդունել
Դարվինի էվոլուցիոն ուսմունքը, որը նա հանճարեղ կերպով
հիմնավորել է այդ աշխատության մեջ:

Բանվոր դասակարգը հանդիսացել է Դարվինի ուսմունքի
միակ հետևողական պաշտպանը: Պրոլետարիատի մեծ առաջնորդ
Կարլ Մարքսը Ֆրիդրիխ Էնգելսին գրած իր նամակներից մե-
կում ասել է՝ «...այս գիրքը բնապատմական հիմք է տալիս մեր
տեսակետների համար»: Իսկ բուրժուազիայի ներկայացուցիչները
թե՛ Ռուսաստանում և թե՛ Նվրոպայում ու Ամերիկայում կատա-
ղի թշնամությամբ են ընդունել Դարվինի ուսմունքը: Դարվինի
ուսմունքի վերջնական հաղթանակը և հետագա ճիշտ զարգա-
ցումն ապահովվել է շնորհիվ այն բանի, որ մարդկային մեծա-
գույն հանճարներ Լենինի և Ստալինի ստեղծած բոլշևիկյան մեծ
պարտիայի առաջնորդությամբ տեղի է ունեցել Հոկտեմբերյան
Մեծ ռևոլուցիան և ստեղծվել է Սովետական իշխանություն:


Պետք է միշտ հիշել, որ դարվինիզմի շուրջը ծավալված
կատաղի պայքարը մինչև այժմ էլ չի դադարել:

Հպարտորեն կարելի է ասել, որ դարվինիզմը ամենից
ավելի ջերմորեն պաշտպանել են ու զարգացրել ուսմ մեծ գիտ-
նականներ Սեչենովը, Կովալևսկին, Մեչնիկովը, Տիմիրյազևը,
Միչուրինը, իսկ մեր օրերում դարվինիզմի առողջ կորիզը տա-
ղանդավոր կերպով զարգացնում է Տրոֆիմ Դենիսովիչ Լիսենկոն:

Դարվինիզմի դեմ կատաղի պայքար են մղել անգլիական
եկեղեցական Ուելքերֆորսը, Բետսոնը, Վեյսմանը, Մենդելը,
Դեֆրիզը, Իոհանսենը, Մորգանը և դանազան այլ ռեակցիոն
գիտնականներ: Մեր օրերում դարվինիզմի դեմ թշնամական
գործ են կատարում այնպիսի ռեակցիոն գիտնականներ, ինչպի-
սին են Դարվինգտոնը, Մյուլլերը և այլն:

Իդեալիստական հիմունքներից ելնող ռեակցիոն գիտնա-
կանները աշխատել են ջախջախել դարվինիզմը, իսկ մատերիա-
լիստական հիմունքներից, դիալեկտիկական մատերիալիզմի հի-
մունքներից ելնող առաջավոր գիտնականներն աշխատել են զար-
գացնել Դարվինի ուսմունքի ճշմարիտ կորիզը:

Այստեղ պետք է նկատի ունենալ, որ, ինչպես ասվել է



Կլիմենտ Արկադիիչ Տիմիրյազև

*«Իմ մտավոր գործունեության առաջին քայլերից
ես ինձ համար դրել եմ երկու խնդիր՝ աշխատել գիտու-
թյան համար և դրել ժողովրդի համար»*

Կ. Ա. Տիմիրյազև

*«Լենինի դմ կերպարը բոլորիս համար եմ և վստահ եմ—
աշխատում են ժողովրդի երջանկության համար և առ երջանկության կրե-
րեն նրան»*

Կ. Ա. Տիմիրյազև

վերևում, դարվի՛նիզմի հետագա զարգացման համար խոշոր նշանակութիւն ունի է ունեցել ժառանգականութեան հարցերի պարզաբանումը: Բնական⁷ է, որ ռեակցիոն գիտնականները պետք է աշխատեն ժառանգականութեան վերաբերյալ հարցերն այնպես պարզաբանել, այն ոգով բացատրել, որ ոչնչացնեն դարվինիզմի առողջ մատերիալիստական կորիզը: Նվ, ընդհակառակը, առաջադեմ գիտնականները պետք է ձգտեն ժառանգականութեան մասին այնպիսի լուսաբանում տալ, որ այն հանդիսանար դարվինիզմի առողջ մատերիալիստական կորիզի զարգացումը: Միանգամայն պարզ է, որ այս երկու ձգտումները հակառակ են, բացասող են, հակամարտ են միմյանց ճիշտ այնպես, ինչպես հակամարտ են կապիտալիզմը և սոցիալիզմը, քանի որ ռեակցիոն ձգտումը բիոլոգիայի մեջ կապիտալիզմի արտահայտութիւնն է, իսկ առաջավոր ձգտումը՝ սոցիալիզմի արտահայտութիւնը:

Ահա այս է պայքարի էութիւնը:

Այդ պայքարը մղվել է և մղվում է այն կոնկրետ հարցի շուրջը, թե հնարավոր է արդյոք, որ բույսերի և կենդանիների կյանքի ընթացքում արտաքին միջավայրի պայմանների ազդեցութեան տակ ձեռք բերված հատկութիւնները և հատկանիշները ժառանգաբար փոխանցվեն, կամ այլ կերպ ասած, կախված է արդյոք կենդանական և բուսական օրգանիզմների որակական փոփոխութիւնը արտաքին միջավայրի այն պայմաններից, որոնք ազդում են նրանց վրա:

Ահա այս հարցին ռեակցիոն գիտնականները՝ առաջին հերթին Վեյսմանը, Մորգանը, Մենդելը պատասխանել են բացասական կերպով, ժխտողական կերպով: Նրանք ասել են, որ այն փոփոխութիւնները, որ բույսերը և կենդանիները ձեռք են բերում իրենց զարգացման ընթացքում՝ արտաքին պայմանների ազդեցութեան տակ, ժառանգաբար չեն անցնում: Այդ անհնարին բանն ապացուցելու համար նրանք առաջ են քաշել այն կեղծ տեսութիւնը, թե օրգանիզմները կազմված են մարմնական մասսից (որն անվանել են նաև սոմա, կամ տրոֆոպլազմա) և ժառանգակիր մասից (որն անվանել են իդիոպլազմա) և որ, իբրեւ թե, օրգանիզմի ժառանգակիր մասը՝ իդիոպլազման անփոփոխ է, ենթակա չէ այն արտաքին պայմաններին, որի մեջ ապրում է օրգանիզմը, որ ենթակա չէ նույնիսկ սոմային, օրգանիզմի մարմնական մասին, որին ինքն է սկիզբ տալիս, բայց սկիզբ տալով, նրանից միանգամայն անկախ է և ինքնուրույն և միա-

ժամանակ անփոփոխ է, հարատև, մշտական, ինչպես հարատև ու
մշտական է մտացածին աստվածային ոգին: Իդեալիզմը հենց
այս է, և վեյսամանիստներ-մորզանիստներն այս էլ ցանկանում են
ասպացուցել ու քարոզել և դրանով իսկ հիմք ստեղծել կապիտա-
լիզմի մշտնջենականության գաղափարն ասպացուցելու համար:

Վեյսամանիստներ-մորզանիստներ-մենդելիստները մի բան
էլ են պնդում, այն, որ իբր թե իդիոպլազման, անկախ լինելով
օրգանիզմի մարմնից և արտաքին պայմաններից, ինքն է իրեն
սկիզբ տալիս, այսինքն՝ իբր թե, տվյալ օրգանիզմի իդիոպլազ-
ման առաջանում է նախորդ օրգանիզմի իդիոպլազմայից և
սկիզբ է տալիս օրգանիզմի հաջորդ սերունդի իդիոպլազմային
և այսպես շարունակ, սերնդից-սերունդ: Վերջապես ասենք, որ
վեյսամանիստ-մորզանիստները ընդունում են, որ իդիոպլազման
թեև անփոփոխ է, բայց տարբեր արտաքին պայմաններում
տարբեր ձևերի սոմա է առաջացնում, իսկ առաջացնելով տար-
բեր տիպի սոմա, ինքը մնում է միշտ նույնը, ոչ մի ազդեցու-
թյուն չկրելով այս կամ այն տիպի սոմայից: Նվ ահա, քանի
որ օրգանիզմի փոփոխությունները ժառանգաբար չեն անցնում
հաջորդ սերունդներին, ապա այստեղից էլ այն եզրակացու-
թյունը, թե՝ օրգանիզմների բնույթը արտաքին պայմանների մի-
ջոցով սերնդից-սերունդ փոխել չի կարելի: Օրգանիզմը,—ասում
են վեյսամանիստները,—կարող է փոխվել այն դեպքում, երբ փոխվի
իդիոպլազման, իսկ այդ փոփոխությունը շատ սակավ է, հազվա-
դեպ, պատահական ու անիմանալի և համարյա թե անկախ մար-
դու կամքից ու ցանկությունից:

Վեյսամանիստների այս ուսակցիոն տեսակետը խիստ վտան-
գավոր է գյուղատնտեսության դարգացման համար, քանի որ
դինաթափ է անում գյուղատնտեսության բնազավառում աշխա-
տողներին: Նվ իբրք, էլ ինչու պետք է գյուղատնտեսները, կոլ-
խոզնիկները աշխատեն բարձր ագրոտեխնիկայի և զոոտեխնի-
կայի միջոցով բարելավել բույսերի և անասունների հետագա
սերունդը, փոխելով արտաքին պայմանները այս կամ այն ուղ-
ղությամբ, եթե այդ պայմանները նշանակութուն չունեն ժա-
ռանգականության համար: Բարեբախտաբար գյուղատնտեսու-
թյան առաջ ծագող պրակտիկ հարցերի լուծողները այս ուսակ-
ցիոն ուսմունքին երբեք չեն հետևել և չեն հետևում, հակառակ
դեպքում մենք չէինք ունենա բույսերի այնպիսի տեղական
սորտեր, ինչպիսին են, օրինակ, ցորեններից՝ «Սպիտակահատը».


«Զարդան», «Սլֆահատը», մրզատուններից՝ «Երեանի» («Շալախ») ծիրանը, խաղողներից՝ «Երեանին», «Արարատին», «Ոսկեհատը», անասուններից՝ ոչխարի տեղական «Մաղեխ» և «Բալբաս» ցեղերը, տավարի՝ Ղազախի, Աղարաբայի տեղական ցեղերը, ձիերից՝ Ղարաբաղի տեղական ցեղը և այլն, և այլն:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ վեյսամանիզմ-մորզանիզմը ռեակցիոն լինելով իդեոլոգիական տեսակետից, ռեակցիոն է, անպտուղ է, անհետևանք է, անճար է նաև գործնական տեսակետից: Ուրիշ կերպ լինել էլ չէր կարող, այդպիսին է կեղծ գիտության բնույթը:

Վեյսամանիստական-մորզանիստական կեղծ գիտության անպտուղ լինելը գործնական տեսակետից շատ պարզ կերպով երևան է եկել Լենինի անվան Միութենական Գյուղատնտեսական Ակադեմիայի 1948 թվի հուլիս-օգոստոսյան սեսիայում: Նույն բանը երևան է եկել նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի գյուղատնտեսական և բիոլոգիական գիտությունների բաժանմունքների 1948 թվի օգոստոսի վերջերում կայացած միացյալ սեսիայում, որտեղ վեյսամանիստները և մորզանիստները ոչ մի արդյունք ցույց տալ չեն կարողացել: Այսպիսով, պարզորոշ կերպով ապացուցվել է վեյսամանիզմի-մորզանիզմի-մենդելիզմի լիակատար սնանկությունը:

Իսկ առաջավոր բիոլոգիան, Ի. Վ. Միչուրինը և Տ. Դ. Լիսենկոն, որոնք ելնում են դիալեկտիկական մատերիալիզմից, գտնում են, որ այն որակական փոփոխությունները, որոնք առաջանում են երիտասարդ, զարգացող օրգանիզմի մեջ միջավայրի արտաքին պայմանների ազդեցության տակ, ժառանգվում են, անցնում են սերնդից-սերունդ: Այս հիման վրա Ի. Վ. Միչուրինը և Տ. Դ. Լիսենկոն մշակել են ժառանգականության մի ճշմարտացի տեսություն, որը բխում է բազմաթիվ ու բազմապիսի փորձերից և սոցիալիստական գյուղատնտեսության առաջ կանգնած գործնական հարցերի լուծումից:

Ի. Վ. Միչուրինը զարմանալի խորությամբ հասկացել է և պարզաբանել այն բանը, որ օրգանիզմները իրենց սերունդների պատմության ընթացքում այս կամ այն չափով կրում են այս կամ այն փոփոխությունները, որոնք արտաքին միջավայրում համապատասխան պայմաններ գտնելով, հանդես են գալիս, արտահայտվում են օրգանիզմի տվյալ սերնդի մեջ: Օրգանիզմի անհատական զարգացումն ազդում է ժառանգական հատկու-



Իվան Վլադիմիրովիչ Միշուրին

«Մենք չենք կարող շնորհներ սպասել բնությունից»
 նրանից այդպիսիները վերցնելն է մեր խնդիրը»:

Ի. Վ. Միշուրին

«Նա տեսնում եմ, որ կոլխոզային կարգը, որի միջոցով կոմունիստական
 պարտիան սկսում է վարել երկրի նորոգման մեծ գործը, աշխատավոր մարդ-
 կությանը կհասցնի իրական հզորության՝ բնության ուժերի վերաբերմամբ»:

Մեր ամբողջ գիտության մեծ ապագան կոլխոզների և սովխոզների
 մեջ է»:

Ի. Վ. Միշուրին

թյունների վրա, այսինքն օրգանիզմն իր անհատական կյանքում, անհատական զարգացման ընթացքում, արտաքին միջավայրի պայմաններում ձեռք բերած հատկությունները փոխանցում է հաջորդ սերունդներին:

Այստեղից էլ պարզ է, որ օրգանիզմի անհատական զարգացումը սերմից մինչև սերմ (սերմ-բույս-սերմ), կամ ինչպես ընդունված է ասել՝ օնոպենենտիկական զարգացումը, մեծ նշանակություն ունի բույսի ժառանգականության համար, քանի որ այն փոփոխությունը, որ բույսը կրում է իր օնոպենենտիկական արտաքին միջավայրի պայմանների ազդեցության տակ, անցնում է հաջորդ սերնդին, գտնելով զարգացման նույն պայմանները:

Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն առաջին հերթին ուշադրություն ու քննության է առել բույսերի անհատական, օնոպենենտիկական զարգացումը, բացահայտել անհատական զարգացման օրինաչափությունները և ստեղծել բույսերի զարգացման ստադիականություն հռչակավոր տեսությունը:

Այդ տեսություն էությունը հետևյալն է:

Բույսերի տարբեր տեսակները որպեսզի նորմալ կերպով աճեն և զարգանան, պահանջում են արտաքին միջավայրի տարբեր պայմաններ: Պարզվել է, որ ոչ միայն տարբեր տեսակի բույսերն են տարբեր պայմաններ պահանջում իրենց աճման ու զարգացման համար, այլև միևնույն բույսերը իրենց անհատական, այսինքն օնոպենենտիկական զարգացման ընթացքում՝ ցանկունց մինչև սերմ տալը, նույնպես պահանջում են արտաքին միջավայրի տարբեր պայմաններ: Այս բանի հիման վրա ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն եկել է այն եզրակացության, որ՝ «Միամյա կուլտուրաների զարգացումը բաղկացած է առանձին էտապներից՝ զարգացման ստադիաներից»:

Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն ստադիա ասելով նկատի ունի ոչ թե այն, որ սերմից ստացված բույսը իր զարգացման ընթացքում գոյացնում է իր այս կամ այն օրգանը և այս կամ այն մասը, այլ այն, որ բույսն իր անհատական կյանքի ընթացքում ունենում է բեկումնային մոմենտներ, էտապներ, որոնք բնորոշ են նրանով, որ նրանցից յուրաքանչյուրը արտաքին միջավայրից պահանջում է իրեն անհրաժեշտ, իրեն հատուկ պայմաններ:

Ուրեմն, բույսի պահանջները արտաքին միջավայրի պայմանների նկատմամբ փոխվում են նրա կյանքի ընթացքում,

համապատասխան այն բանի, որ նրա զարգացման մի էտապը, մի ստադիան փոխվում է մի այլ ստադիայով: Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն սովորեցնում է, որ բույսի յուրահատուկ պահանջների փոփոխումը արտաքին պայմանների նկատմամբ՝ համապատասխան իր անհատական կյանքի զարգացման էտապների, պայմանավորված է տվյալ սերմի սաղմի նախընթաց ցեղային, տեսակային և սորտային պատմությամբ:

Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն սովորեցնում է նաև, որ բույսի աճեցողությունը՝ այդ նրա կշռի, ծավալի մեծացումն է, անկախ նրանից, թե այդ բանը բույսի սր օրգանի, սր մասի զարգացման հաշվին է տեղի ունենում: Աճեցողությունն ամբողջ բույսի կամ նրա առանձին օրգանների, առանձին մասերի ծավալի, կշռի, մասսայի մեծացումն է, ըստ որում բույսը կարող է դառնալ իր զարգացման այս կամ այն ստադիայում:

Բույսի ստադիան լրիվ և նորմալ կերպով անցնելու համար պետք է լինեն արտաքին միջավայրի բոլոր անհրաժեշտ պայմանները, ուրիշ խոսքով՝ պետք է առկա լինի բոլոր պայմանների կոմպլեքսը: Եթե այդ կոմպլեքսի համար անհրաժեշտ ֆակտորները չեն համընկնում, այդ դեպքում բույսի աճեցողությունը և զարգացումը նորմալ ընթացք չի ունենում, որն արտահայտվում է նրանով, որ բույսը արագ կերպով աճում է, բայց դանդաղ է զարգանում, կամ թե՛ դանդաղ է աճում, բայց արագ կերպով է զարգանում, լինում է նաև, որ բույսը արագ է աճում և արագ զարգանում:

Բույսի զարգացման համար անհրաժեշտ կոմպլեքսի մեջ մտնում են՝ հանքային սննդանյութերը, խոնավությունը, ջերմությունը, լույսը, ցերեկվա լուսավորությունը և գիշերային մթությունը՝ այնպիսի տեսողությամբ, որը անհրաժեշտ է տվյալ բույսի համար:

Տարբեր շույսեր տարբեր և յուրահատուկ պահանջներ ունեն կոմպլեքսի մեջ մտնող այս կամ այն ֆակտորի նկատմամբ: Շատ բույսեր իրենց զարգացման սկզբնական շրջանից սկսած՝ սերմի ծլելուց սկսած, մինչև վերջը՝ մինչև սերմ տալը, պահանջում են բարձր ջերմություն: Այդպիսի կուլտուրաներ են, օրինակ՝ բամբակը, ծխախոտը, ձմերուկը և այլն: Շատ բույսեր էլ իրենց զարգացման սկզբնական շրջանում պահանջում են ցածր ջերմություն և միայն զարգացման երկրորդ շրջանում են պահանջում բարձր ջերմություն: Այդպիսի կուլտուրաների թվին

են պատկանում, օրինակ՝ զարնանացան ցորենը, իսկ ավելի շատ՝ աշնանացան ցորենը: Եթե աշնանացան ցորենը իր զարգացման սկզբնական շրջանում, որոշ օրերի ընթացքում, ցածր ջերմության ազդեցության չենթարկվի, այլ սկզբից հետո՝ 11°—12° և ավելի բարձր ջերմության պայմաններում, ապա այն միայն կաճի, կթփակալի, բայց հասկ և սերմ տալուն չի հասնի: Ուրեմն, պարզ է, որ այդպիսի բույսերի պահանջը պետք է բավարարվի, որպեսզի նրանք նորմալ կերպով աճեն և զարգանան:

Ահա այս ամենի հիման վրա է, որ ակադեմիկոս Լիսենկոն եկել է այն եզրակացության, թե՝ բույսի զարգացումը բաղկացած է առանձին, տարբեր որակի էտապներից՝ զարգացման ստադիաներից: Բույսն իր զարգացման ընթացքում աստիճանաբար հանդես է բերում իր հատկությունները, հատկանիշները, մորֆոլոգիական զանազան փոփոխությունները: «Ստադիաները հանդիսանում են որոշակի, անհրաժեշտ էտապներ բույսի զարգացման մեջ, որոնց բազայի վրա էլ տեղի է ունենում բույսերի բոլոր մասնակի ձևերի՝ օրգանների և հատկանիշների զարգացումը» — ասում է ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն: Բույսերի զարգացման ընթացքում երևան եկող մորֆոլոգիական փոփոխությունները դեռևս չեն ասում այն մասին, որ նրանք, բույսերը, մի ստադիայից անցել են հաջորդ ստադիային: Մորֆոլոգիական հատկանիշները որոշ չափով կարող են զարգանալ հին ստադիայի հիման վրա: Մյուս կողմից էլ, բույսի զարգացման նոր ստադիան կարող է սկսված լինել, իսկ համապատասխան մորֆոլոգիական հատկանիշները կարող են հանդես գալ այս կամ այն չափով ուշ:

Ստադիան, ինչպես վերևում ասվեց, այն բեկումնային-որակական փոփոխությունն է բույսի կյանքի մեջ, որը պայմանավորում է բույսի նորմալ զարգացումը և ապահովում բույսի օրգանների, մասերի, հատկանիշների զարգացումը և հասցնում է մինչև պտղագոյացում: Որակական-բեկումնային այս փոփոխությունները տեղի են ունենում բույսի աճման գագաթում, աճման գագաթի բջիջներում:

Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն հայտարարել է սերմից ստացված միամյա բույսերի մեջ երկու ստադիա և նա ենթադրում է, որ այդպիսի բույսերը պետք է ունենան ես երեք ստադիա:

Հայտարարված ստադիաներից առաջինը կոչվում է յախվիղացիայի ստադիա, իսկ երկրորդը՝ լույսային ստադիա:

Յարովիդացիայի ստադիան կարող է անցնել նոր դարթնած հատիկը, կամ կանաչ բույսը: Այն հանգամանքը, որ նաև նոր դարթնած հատիկը կարող է յարովիդացիայի ստադիան անցնել, ինչպես հայտնի է, ունի հակայական գործնական նշանակություն:

Մինչև որ յարովիդացիայի ստադիան լրիվ անցած չլինի, հաջորդ ստադիան, լույսային ստադիան, անցնել չի կարող:

Ստադիական այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում բույսի մեջ, կամ նրա առանձին օրգաններում, անհետադարձ են, հետադարձ ընթացք չունեն: Բույսի բջիջները, որոնք անցել են որոշ ստադիա և ձևոք են բերել այդ ստադիային հատուկ, այդ ստադիայով պայմանավորվող բնույթ, չեն կարող վերադարձվել այն վիճակին, որը նրանք ունեցել են նախքան յարովիդացիան:

Բույսերի զարգացման ստադիականության տեսությունը մի հիմնադրի և ամրակուռ հիմք է բույսերի բնույթի գեկավարման համար: Այդ տեսությունն ըստ էության մի բանալի է, մի միջոց՝ դիտակցարար ու նպատակադիր կերպով լուծելու բույսերի ձևագոյացման հարցերը, բույսերի բնույթը:

Օրգանիզմներն աճում ու զարգանում են արտաքին պայմաններից վերցրած սննդի շնորհիվ: Տ. Դ. Լիսենկոն հանդել է այն եզրակացության, որ օրգանիզմի յուրաքանչյուր բջիջ զարգանում է ասիմիլացիայի և դիսիմիլացիայի միջոցով, այսինքն՝ սննդի ներծծման և բջջի մեջ կատարվող փոփոխությունների միջոցով: Նա եզրակացրել է նաև, որ սեռական բջիջների միախառնման տևող ընթացքում կարգի երևույթ է, երբ արական և իգական սեռական բջիջները միանալով, ասիմիլացիայի են ենթարկում միմյանց և կազմում դիգոտա, որն իր բնույթով ոչ արական բջիջին է նման և ոչ էլ իգական, այլ ըստ էության նոր է, որը և սկիզբ է տալիս նոր սերնդի: Տ. Դ. Լիսենկոն բացահայտել է, որ թե սեռական բեղմնավորությունը և թե սննդառությունը տեղի են ունենում ընտրողականության հիման վրա: Օրգանիզմը, օրգանիզմի յուրաքանչյուր բջիջը արտաքին պայմաններից սնունդ է վերցնում ընտրողաբար:

Ի. Վ. Միչուրինը և Տ. Դ. Լիսենկոն այն կարգի գործիչներ են, որոնք աշխատել են ակտիվ կերպով հարմարեցնել օրգանիզմները մարդու կարիքներին: Եվ ահա, Ի. Վ. Միչուրինը աշխատելով այդ ուղղությամբ, ապացուցել է, որ օրգանիզմ-

ները պետք է փոփոխութեան ենթարկել այն ժամանակ, երբ նրանք գտնվում են իրենց զարգացման սկզբնական շրջանում, երբ նրանք դեռևս մատաղ են, երիտասարդ են, դեռևս ձևավորված չեն: Նա եղբակացրել է նույնպես, որ կարելի է երիտասարդ օրգանիզմների զարգացումը տանել ցանկացած ուղղութեամբ, ստեղծելով արտաքին միջավայրի համապատասխան պայմաններ: Այդ հիման վրա նա առաջարկել է զանազան հնարամիտ մեթոդներ, որոնց մեջ նաև իր հոշակավոր մենտորի մեթոդը:

Շատ համառոտ պարզարանենք Ի. Վ. Միշուրինի զաղափարը մենտորի մասին:

Ի. Վ. Միշուրինը պարզել է, որ նոր բուսակը, մշակվելով արտաքին որոշ պայմաններում, ձևավորվում է այդ արտաքին պայմանների ազդեցութեան տակ և նրանից ստացվում է մի հասուն օրգանիզմ՝ համապատասխան այդ պայմանների. «Հենց միջավայրն է մայր դաստիարակիչ» — ասել է Ի. Վ. Միշուրինը: Բայց չի՞ կարելի արդյոք ստիպել, որ այդ բուսակի զարգացումը ավելի դեկավարելի դառնա: Նա գտել է, որ կարելի է. այդ նպատակով բուսակը պետք է պատվաստել մի հասուն բույսի, որն և իր ուղղութեամբ կդաստիարակի բուսակին, մենտոր կը դառնա նրա համար, իսկ բուսակի դաստիարակը (մենտորը), պարզ է, կարող է լինել և պետք է լինի այն հասուն բույսը, որն ունի ցանկալի հատկութիւններ՝ ցրտադիմացկունութիւն, պտղի քաղցրութիւն, ձև և այլն և այլն: Բուսակը պատվաստվելով այդ հասուն բույսի վրա, սնվելով նրա մատակարարած սնունդով, կզարգանա, կձևավորվի այդ բույսի՝ իր մենտորի ազդեցութեան տակ և ձեռք կբերի, կզարգացնի իր մեջ իր դաստիարակի հատկութիւնները:

Մենտորի երևույթը հանդես է գալիս ոչ միայն այն ժամանակ, երբ ընտրած հասուն պատվաստակալի վրա պատվաստվում է դաստիարակման ենթակա բուսակի կտրոնը, այլև այն ժամանակ, երբ դաստիարակման ենթակա բուսակի վրա պատվաստվում է հասուն ծառի՝ մենտորի կտրոնը: Որպես մենտոր ընտրած ծառի կտրոնը, հասկանալի է, մի կողմից սնվում է պատվաստակալի սնունդով, մյուս կողմից էլ նրան տալիս է իր տերեւների պատրաստած սնունդը, և քանի որ ինքը արդեն հասուն է և ձևավորված, ապա չի կարող փոխվել և չի փոխվում, բայց բուսակին փոխում է իր ուղղութեամբ:



Տրոֆիմ Դենիսովիչ Լխսնկո

«Վ. Ի. Լենինը ու Ի. Վ. Ստալինը հայտնագործեցին Ի. Վ. Միչուրինին և նրա ուսմունքը դարձրին սովետական ժողովրդի սեփականութիւնը: Իրենց ամբողջ հայրական մեծ ուշադրութեամբ դեպի նրա աշխատանքը, նրանք բխուղիալի համար փրկեցին միչուրինյան երեկելի ուսմունքը: Պարտեան և կառավարութիւնը, և անձամբ Ի. Վ. Ստալինը, շարունակ հոգ են տանում միչուրինյան ուսմունքի հետադադարգացման մասին: Մեզ՝ սովետական բխուղներին համար Զավելի պատմավոր խնդիր չկա, քան Միչուրինի ուսմունքի ստեղծագործական դարգացումը և մեր ամբողջ գործունեութեան մեջ կենդանի էակների դարգացման բնույթի հետադադարութեան միչուրինյան ոճն արմատավորելը»:

Տ. Դ. Լխսնկո

Ի. Վ. Միշուրինի գաղափարը մենտորի մասին հիանալի կերպով ապացուցվել է: Մենտորի միջոցով նա, Ի. Վ. Միշուրինը, ստեղծել է «Ռենեստ բերդամոտնի» սորաը, որը խնձորի ու տանձի հիբրիդ է: Այնուհետև, նա այս նույն միջոցով իր ստեղծած խնձորի «Բելֆլյոր-կիտայկա» սորտի պտղի կշիռը բարձրացրել է ու 154 գրամից հասցրել մինչև 222 գրամի և նույն սորտի պտղի պահպանելիությունը ավելացրել 75 օրով: Ի. Վ. Միշուրինն իր կողմից ստացած խնձորի մի այլ սորտի՝ «Կանդի-կիտայկայի» ձմռանային պահպանելիությունը բարձրացրել է շատ զգալի կերպով և, միաժամանակ, ավելացրել է պտուղների կշիռը և 35—40 գրամից հասցրել մինչև 210 գրամի: Բալի և կեռասի մի սորտի՝ «Կրասա սևերայի» գույնը, որը սպիտակ է եղել, դարձրել է վարդագույն:

Այսպիսի օրինակների թիվը կարելի է շատ մեծացնել:

Մենտորի երևույթին Ի. Վ. Միշուրինը մեծ նշանակություն է տվել: Մեկնաբանելով մենտորի էությունը և մենտորի ազդեցությունը բույսերի փոփոխականությունը ղեկավարելու տեսակետից, նա ասել է հետևյալը. «Պտղատու ծառերի հիբրիդների կազմությունը ցանկալի ուղղությամբ թեքելու այդպիսի եղանակը, որը իմ կողմից կոչվել է «մենտորների» տրամադրում, որն իր ազդեցության ուժի տեսակետից շատ թե քիչ չափով ստուգված է նաև բույսերի այլ ձևերի վրա, մեղ համար հանդիսանում է մարդու կողմից բույսի օրգանիզմի կառուցմանը տիրապետելու շատ արժեքավոր մի դործիք, որի հնարավորություն մասին առաջ երազել էլ չէր կարելի... և բացի այդ, հնարավորություն է ծագում բույսի ամբողջ օրգանիզմը լիակատար կերպով փոխելու, իսկ ոչ հեռու ապագայում, շատ հավանական է, մարդը այդ ճանապարհով կստեղծի բույսերի բոլորովին նոր տեսակներ, որոնք ավելի համապատասխան կլինեն իր կյանքի կարիքների համար և ավելի հարմարված կլինեն կլիմայական պայմանների անխուսափելի փոփոխություններին»:

Ի. Վ. Միշուրինը, գիտականորեն մշակելով բույսերի ժառանգականության ղեկավարման հարցերը, անողորք քննադատություն է ենթարկել մենդելիզմ-մորգանիզմը: Իր կողմից մշակած մեթոդների հիման վրա ստացած լինելով պտղատու բույսերի ավելի քան 300 սորտ, նա մենդելիզմի մասին այսպես է արտահայտվել. «Իսկ Մենդելի տխրահռչակ սլոռային օրենքների կիրառության մասին՝ բազմամյա պտղատու բույսերի նոր հիբրի-

դային սորտեր դուրս բերելու գործում, կարող են երազել միայն այդ գործի մեջ լիակատար տղաները: Մենդելի եղբակացու-թյունները չեն հաստատվել ոչ միայն բազմամյա պտղատու բույսերի խաչաձևման ժամանակ, այլև նույնիսկ միամյաների...»:

Մենդելիսաների-մորզանիստների մասին այսպիսի անողոք տեսակետ հայտնելու համար Ի. Վ. Միչուրինը հաստատուն հիմք է ունեցել: Բանն այն է, որ նա, հասկանալի է, որ պետք է կատարեր, և լայն չափերով կատարել է, նաև սեռական հիբրիդիզացիա տարրեր տեսակի բույսերի զանազան սորտերի մեջ, դաստիարակել է ստացած հիբրիդներն իր մշակած մեթոդներով և միամիտմանակ փայլուն փաստեր է դրել մենդելիզմ-մորզանիզմի անհեթեթություն ու անմտության վերաբերյալ:

Պետք է այստեղ նշել, որ մենդելիզմ-մորզանիզմի համա-ձայն՝ երկու ծնողական բույսերի, կամ կենդանիների խաչաձևու-մից ստացված հիբրիդն իր մեջ պարունակում է ծնողների հատ-կանիշները, որոնք միացած են միմյանց միայն պատահակա-նության հիման վրա և համարյա թե մեխանիկորեն: Հիբրի-դային օրգանիզմների էությունը Ի. Վ. Միչուրինը բացատրել է միանգամայն հակառակ իմաստով, արտահայտելով այս բանը հետևյալ կերպ. «Ամենից առաջ երկու արտադրողի խաչաձևու-մից ստացված պտղի սերմերից աճեցրած յուրաքանչյուր հիբ-րիդի հատկությունները բաղկացած են արտադրող բույսերի, այսինքն՝ հոր և մոր և նրանց ազդակիցներից ժառանգարար իրենց անցած այն մասերի կոմբինացիայից, որոնց զարգաց-մանը հիբրիդի աճեցողության ամենավաղ ստադիայում բարե-նպաստել են շրջապատող արտաքին միջավայրի պայմանները (այսինքն՝ շրջապատող օդի և հողի ջերմությունը, մթնոլորտի հազեցվածությունը էլեկտրականությամբ, իշխող քամիների այս կամ այն ուղղությունը և ուժը, լուսավորության աստիճանը, հողի կազմը և նրա խոնավության աստիճանը և այլն): Հետևա-պես յուրաքանչյուր հիբրիդ բուսակի օրգանիզմը դեմար է, իսկ նրա դեմարելիները արտադրող բույսերի և նրանց ազդակից-ների հատկանիշներն են և դրան ավելացրած շրջապատող մի-ջավայրի արտաքին ֆակտորները»:

Ահա թե որքան խոր և բազմակողմանի է մեկնաբանել Ի. Վ. Միչուրինը հիբրիդային օրգանիզմի էությունը:

Վերին աստիճանի կարեւոր է Ի. Վ. Միչուրինի այն միտ-քը, թե ավյալ վայրի համար սեռական հիբրիդիզացիայի միջո-

ցով սորա ստեղծելու նպատակով պետք է վերցնել այնպիսի ծնողներ, որոնք աշխարհագրական տեսակետից հեռավոր են միմյանցից և միանգամայն օտար այն վայրի համար, որտեղ նրանք պետք է խաչաձևեն և հիբրիդ տան: Այդ նշանակում է, որ այս ձևով ստացվում է մի հիբրիդ, որը չի գտնում ոչ իր մոր և ոչ էլ հոր միջավայրը, այլ գտնում է մի նոր միջավայր, որին համապատասխան նա ստիպված է լինում զարգանալ: Այս նույնպես բույսի բնույթի դեկլարման հաստատուն մի ձև է, որը բխում է Ի. Վ. Միչուրինի և Տ. Դ. Լիսենկոյի մշակած տեսությունից և նրանց կողմից մշակած բազմաթիվ մեթոդների հետ միասին բիոլոգիան դարձնում է ճշգրիտ և պատահականությունից ազատ գիտություն:

Ի. Վ. Միչուրինը պարզել է նաև, որ եթե որևէ պտղատու ծառի արմատներն իր սեփականը չեն, այլ վայրակի են, այդ դեպքում պատվաստված կտրոնը, նրա վրա առաջացած պտուղները և այդ պտուղներից ստացված սերմերը ազդվում են այդ արմատային սիստեմից և ստանում ոչ ցանկալի հատկություններ: Ի. Վ. Միչուրինը պարզաբանելով այն հարցը, թե վայրակային պատվաստակալը ինչպես է ազդում պատվաստացուի ձևավորվող սերմերի վրա, ասել է. «... ըստ էության, մենք կստանանք վայրակային պատվաստացուի վեգետատիվ հիբրիդ կուլտուրական սորտի հատկություններից շատ փոքր խառնուրդով»: Տ. Դ. Լիսենկոն շարունակելով և զարգացնելով Ի. Վ. Միչուրինի եզրակացությունն այս մասին, խորհուրդ է տվել հիբրիդիզացիան կատարել այնպիսի բույսերի վրա, որոնք ունեն սեփական արմատներ և ոչ թե պատվաստ են վայրակի վրա: Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն այդ միտքը այսպես է արտահայտել. «Միթե մեր խաղողագործ սելեկցիոներները եզրակացություն չպետք է հանեն այն մասին, որ, նախքան խաչաձևելը, անհրաժեշտ է սեփականարմատ վաղ ստանալ»:

Մենք այստեղ համառոտակի նշեցինք Ի. Վ. Միչուրինի և Տ. Դ. Լիսենկոյի աշխատանքի մեթոդներից մի քանիսը միայն: Եվ պետք է ասել, որ գիտություն այդ մեծ մարդկանց տված ուսմունքը մի մեծ և հարուստ շտեմարան է, որից օգտվել են և պետք է օգտվեն բոլոր միչուրինականները՝ բույսերի նոր սորտեր և կենդանիների նոր ցեղեր ստանալու, բույսերի և կենդանիների բնույթը փոխելու և միչուրինյան բիոլոգիան հարստացնելու ու զարգացնելու նպատակով:

Այժմ համառոտ կերպով կանգ առնենք այն նվաճումների վրա, որոնք ձեռք են բերված Հայկական ՍՍՌ-ում այն մարդկանց կողմից, որոնք ղեկավարվում են Ի. Վ. Միչուրինի և Տ. Դ. Լիսենկոյի ուսմունքով:

Հայկական ՍՍՌ-ում կատարած ուսումնասիրություններից մեծ հետաքրքրություն է ներկայացնում սեռական մենտորի հարցը: Այս հարցն առաջ է քաշել և ուսումնասիրել Հայկական ՍՍՌ Դիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Գ. Հ. Բարաջանյանը:

Սեռական մենտորի գաղափարը բխում է Ի. Վ. Միչուրինի ուսմունքից: Նվ իրոք, եթե վեգետատիվ հիբրիդիզացիայի ժամանակ գոյություն ունի մենտորի երևույթը, ապա գոյություն չունի, արդյոք, այդ նույնը սեռական հիբրիդիզացիայի ժամանակ: Պարզվել է, որ այսպիսի հարցադրումը բավականին հիմնավորված է:

Սեռական մենտորի էությունը հասկանալու համար մենք պետք է հարցի բացատրությունը սկսենք փոքր ինչ հեռվից:

Նկատի պետք է ունենալ, որ բիոլոգիական պրոցեսների ընտրողականությունը այժմ հանդիսանում է միչուրինյան բիոլոգիայի ամենաակտուալ հարցերից մեկը: Այդ հարցն այժմ պարզաբանում ու զարգացնում է ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն իր աշակերտների հետ միասին: Սեռական մենտորը հենց այդ բնագավառի հետաքրքրական խնդիրներից մեկն է:

Չարլզ Դարվինը բացահայտել է և պարզաբանել այն հանգամանքը, որ բույսերի համար երկարատև ինքնաբեղմնավորությունը փաստակար է, իսկ խաչաձև բեղմնավորությունը օգտակար: Նա արդեն ընդհուպ մոտեցել էր այն գաղափարին, թե գոյություն ունի ընտրողական բեղմնավորություն, որը օգտակար է բույսերի համար:

Ի. Վ. Միչուրինը, շարունակելով Չարլզ Դարվինի ուսմունքը, ավելի է խորացրել բեղմնավորությունը ընտրողականության հիման վրա կատարվելու գաղափարը: Եթե Դարվինը արձանագրել է միայն, որ երկարատև ինքնաբեղմնավորությունը փաստակար է, իսկ խաչաձև բեղմնավորությունը օգտակար, ապա Ի. Վ. Միչուրինը, որը Դարվինի նման բնության կարգացողը չէր, այլ նրա մեծ վերափոխողը, բացահայտել է մի շարք մի-

ջոցներ, որոնք հնարավորութիւնն են տալիս ղեկավարելու բույսերի բեղմնավորութեան և նրա ընտրողականութեան պրոցեսները:

Ի. Վ. Միշուրինը հետաքրքիր ձևով է լուծել հիբրիդիզացիայի միջոցով բույսերի նոր սորտեր ստանալու եղանակներից մեկը: Բանն այն է, որ բույսերի շատ տեսակներ, մասնավորապէս նրանք միմյանցից շատ հեռու են իրենց ծագումով և բնույթով, դժվարութեամբ են բեղմնավորվում միմյանց հետ: Իսկ հաճախ է լինում, որ այդպիսի բույսերն ունենում են շատ լավ հատկութիւններ և կարևոր է համարվում նրանց հիբրիդացման միջոցով ստանալ նոր սորտ, օժտված այդ լավ հատկութիւններով:

Ի. Վ. Միշուրինն այս հարցը լուծել է այդպիսի բույսերը սեռական ճանապարհով միմյանց մոտեցնելով, նրանց մեջ կամուրջ հանդիսացող բույսի միջոցով: Ի՞նչ է նշանակում այս: Նա մտածել է այսպես՝ թեև այս երկու տեսակի բույսերը միմյանց հետ չեն խաչաձևվում, բայց երկուսն էլ խաչաձևվում են մի երրորդի հետ: Ուրեմն կարելի է այս տեսակները խաչաձևել այդ երրորդի հետ և, ապա, այս ձևով ստացած հիբրիդը խաչաձևել միմյանց հետ չխաչաձևվող թե՛ մեկ և թե՛ մյուս տեսակի հետ:

Ահա այս նշանակում է, որ Ի. Վ. Միշուրինը զբաղւած է սեռական ընտրողականութեամբ և ստեղծել այնտեղ, որտեղ այն բացասական է, կամուրջ է ստեղծել միմյանց չընտրող տեսակների միջև:

Ի. Վ. Միշուրինը գտել է այս նույն հարցի լուծման մի այլ եղանակ, որը հնարավորութիւնն է տալիս միմյանց մոտեցնել չխաչաձևվող բույսերի տեսակները: Այդ եղանակը վեգետատիվ հիբրիդիզացիան է: Նա սեռական ճանապարհով չբեղմնավորվող սորտերի բույսերը պատվաստել է միմյանց վրա և այս ձևով ստիպել նրանց սնվել միևնույն սնունդով, հետևապէս մոտենալ միմյանց և հետո հաջողութեամբ կատարել է սեռական խաչաձևում: Այս ևս մի միջոց է, որով հնարավորութիւնն է ստեղծվել ղեկավարելի դարձնել բույսերի ընտրողականութիւնը:

Ահա այսպես է զարգացրել Ի. Վ. Միշուրինը Դարվինի ուսմունքը:

Բիոլոգիական պրոցեսների ընտրողական հարցերը ավելի ևս խորը լուսաբանութիւնն են ստացել ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի կողմից: Նա բացահայտելով և հիմնավորելով բույսերի դար-

դաջման ստադիականության տեսությունը, ցույց է տվել, որ
ընտրողականությունը ընդհանուր՝ բիոլոգիական երևույթ է և
հիմքն է բույսերի և կենդանիների կենսական բոլոր պրոցեսնե-
րի: Բույսերի սեռական զարգացման հիմքն ևս ընտրողականու-
թյունն է:

Հայտնի է, որ բույսերը և կենդանիները արտաքին պայ-
մաններին հարմարված են զարմանալի կերպով: Այդ նրանից է,
որ բույսերի և կենդանիների մեջ սերնդից-սերունդ կուտակվում
են այնպիսի հատկանիշներ, որ նրանց դարձնում են արտաքին
պայմաններին հարմար, հետևապես և դիմացկուն, կայուն: Այս
հարմարվելու մեջ մեծ դեր է խաղում խաչաձևումը, որի ժամա-
նակ քեղմնավորությունը կատարվում է ընտրողականության հի-
ման վրա, այսինքն սեռական բջիջները ընտրում են միմյանց,
միանում են այն բջիջները, որոնք ամենից հարմարն են իրար,
որոնք այս ձևով միանալով՝ դիզոտ են կազմում, որը հետո
զարգանում է և դառնում օրդանիդ: Ահա այս ձևով ստացված
օրդանիդը, պարզվում է, որ ավելի է հարմարված արտաքին
պայմաններին: Բանն այն է, որ ինքնարեղմնավորման հետևան-
քով ստացված բույսը արտաքին պայմաններին հարմարվելու
համար ունի միայն մեկ ծնողի, այսինքն միայն իր հատկու-
թյունը, որի պատճառով ավելի թույլ է, իսկ խաչաձև քեղմնա-
վորության հետևանքով ստացված բույսն ունի արտաքին պայ-
մաններին հարմարվելու ավելի բարձր ունակություն, պարու-
նակելով իր մեջ թե՛ մեկ ծնողի, թե՛ մյուս ծնողի հարմարվելու
հատկությունը, որի շնորհիվ էլ ստացվում են ավելի հզոր, ավե-
լի կենսունակ բույսեր:

Պետք է այստեղ ասել, որ վեյսմանիստներ-մենդելիստներ-
մորդանիստները մետաֆիզիկորեն դատելով ու չընդունելով զար-
գացման զաղափարը, արտաքին միջավայրի պայմանների ազ-
դեցության տակ առաջացած փոփոխությունների զարգացման
զաղափարը, չեն ընդունում նաև Դարվինի, Միչուրինի և Լիսեն-
կոյի ուսմունքը՝ ընտրողականության և մասնավորապես սեռա-
կան ընտրողականության վերաբերյալ:

Ահա այս հարցին է նվիրված Գ. Հ. Բարաջանյանի մի հե-
տաքրքրական աշխատությունը՝ «Գյուղատնտեսական բույսերի
քեղմնավորման ընտրողական ընդունակությունը» վերնադրի
տակ, որի մասին նրա ուսուցիչ ակադեմիկոս Տ. Գ. Լիսենկոն
ասել է՝ «Ընկեր Գ. Բարաջանյանի աշխատությունը ներկայաց-

նում է մեծ հետաքրքրութիւն ինչպէս բեղմնավորութեան հար-
ցերի հետագա տեսական մշակման, այնպէս էլ սելեկցիոն գործի
մեջ անմիջականորեն օգտագործելու համար:

Եւ ահա թե ինչու մէկ է կայանում Գ. Հ. Բարաջանյանի աշ-
խատանքի էութիւնը. օգտակար է, որ մայրական սեռական
բջիջը բեղմնավորվի ոչ իր ծաղկափռոցով, այլ օտար բույսի ծաղ-
կափռոցով, այսինքն՝ խաչաձև: Այնուհետեւ, օգտակար է, որ այդ
բեղմնավորութիւնը կատարվի ազատ և ոչ հարկադիր, որպէսզի
բույսը հնարավորութիւն ունենա բեղմնավորման պրոցեսը իրա-
կանացնելու անկաշկանդ ընտրողականութեան հիման վրա: Օգ-
տակար է նույնպէս, որ բեղմնավորութիւնը տեղի ունենա ծաղ-
կափռոցների խառնուրդով փոշոտում կատարելու միջոցով, մա-
նավանդ այն դեպքում, երբ հիբրիդացվող բույսերը իրենց բնույ-
թով հեռավոր են միմյանցից և դժվարութեամբ են խաչաձևվում
և, այս պատճառով, վատ սերունդ են տալիս, կամ շատ մոտ են,
մոտիկ արնակից են և այս դեպքում էլ շատ մոտիկութեան հե-
տեանքով են թույլ սերունդ տալիս:

Այս հարցերը Գ. Հ. Բարաջանյանը վերցրել է այնպէս,
ինչպէս նրանք կան Չ. Դարվինի, Ի. Վ. Միչուրինի և Տ. Դ.
Լիսենկոյի աշխատութիւններում: Առաջ գնալով նրանց նշած ճա-
նապարհով, Գ. Հ. Բարաջանյանը պարզել է, որ եթե բեղմնավորու-
թիւնը տեղի է ունենում այնպիսի ծաղկափռոցների ներկայու-
թեամբ, որոնք տարբեր տեսակի բույսերից են վերցրած, ապա
այդ բոլոր ծաղկափռոցներն էլ, այս կամ այն չափով, մասնակցում
են բեղմնավորութեանը, ըստ որում, բեղմնավորութիւնը տեղի
է ունենում մեկ կամ մի քանի ծաղկափռոցով, կամ եթե մի
ծաղկափռոցի անմիջականորեն չի մասնակցում բեղմնավորութեա-
նը, ապա այնուամենայնիւ ազդում է բեղմնավորման պրոցեսի
վրա, հաճախ մեկ ծաղկափռոցի ինքը անմիջականորեն չի մաս-
նակցում բեղմնավորութեանը, բայց օգնում է, ճանապարհ է
ցույց տալիս այն ծաղկափռոցին, որը կատարում է բեղմնավո-
րութիւնը, այսինքն մենտորի դեր է կատարում նրա համար:

Պարզվել է մի այսպիսի կարեւոր երևույթ, երբ աշորայի
բեղմնավորութիւնը կատարվում է իր ծաղկափռոցով, այսինքն,
երբ ինցուխտ է տեղի ունենում, ապա այդ դեպքում ստացվում
է, ինչպէս հայտնի է, թույլ սերունդ, բայց երբ այդ բեղմնավո-
րութիւնը կատարվում է սեփական ծաղկափռոցով, բայց օտար
ծաղկափռոց ներկայութեամբ, այդ դեպքում ստացվում է ավելի

կենսունակ սերունդ: Այս արդեն մի բնականուր բխլոգիական երևույթ է, որը վերաբերում է բոլոր բույսերին: Այս ունի նաև մեծ նշանակություն սելեկցիայի դործի համար, որը և ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն նշել է վերևում մեջ բերված գնահատականում՝ Դ. Հ. Բարաջանյանի աշխատության վերաբերյալ:

Ի. Վ. Միչուրինի և Տ. Դ. Լիսենկոյի ուսմունքը բույսերի բնույթի փոփոխության մասին, նոր ավելի բերքատու սորտեր ստեղծելու մասին կարող է լուծվել բաղձաթիվ ուղղությանն: Այդ ուղղությաններից շատերը բացահայտված են, շատ շատերն էլ կհայտարարվեն, և պարզ է, որ միչուրինյան բխլոգիայի առաջընթացի ուղին կդարձարվի բաղձաթիվ գեղեցիկ մեթոդներով, միջոցներով և դործնական արդյունքներով:

Ահա այս մեթոդներից մեկն է նաև այսպես կոչված ժամկետային ցանքը, ավելի ճիշտ արտահայտած՝ բույսերի ցանքը խիստ անսովոր ժամկետներում:

Պետք է ասել, որ անսովոր ժամկետներում ցանք անելը վաղուց է, որ հայտնի է գիտությունը: Յանքի այդ եղանակը լայնորեն կիրառել է ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն դեռ այն ժամանակ, երբ նա, ուսումնասիրելով բուսական օրգանիզմների բնույթը, հայտնաբերել է միամյա բույսերի դարդացման ստադիականությունը, սահմանել բույսերի ստադիական դարդացման հոչակավոր աևությունը:

Այդ հարցի փորձնական ուսումնասիրության ժամանակ ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն բույսերը ցանել է տարվա բոլոր ամիսներին, ելնելով այն բանից, որ արտաքին միջավայրի պայմանների մեջ մտնող ֆակտորների (սննդանյութերը, խոնավությունը, ջերմությունը, ցերեկվա լույսի և գիշերվա մթնոլորտի աևողությունը և այլն) կոմպլեքսը տարվա տարբեր ժամանակներում տարբեր է և որ այդպիսի փոփոխված պայմաններում բույսը փոխելով իր սնվելու եղանակը, սնվելու տիպը, սկսե է ենթարկվի փոփոխության: Հենց այդ փորձերի ընթացքում ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն հայտնաբերել է բույսերի դարդացման ստադիականությունը և այն, որ բույսերը այդ ստադիաների հիման վրա երևան են բերում իրենց հատկությունների, հատկանիշների և արտաքին նշանների դանաղան փոփոխությունները:

Հայկական ՍՍԽ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Մ. Գ. Թումանյանը օգտագործել է բույսերը խիստ ան-

սովոր ժամկետներում ցանկելու միջոցը, նրանց մեջ ձևագոյացման պրոցեսներն առաջացնելու և այդ պրոցեսները դեկավարելու նպատակով: Նա ևս ելել է այն բանից, որ արտաքին միջավայրի պայմանների կոմպլեքսի փոփոխումով բույսերի մեջ առաջ է բերվում բազմաթիվ փոփոխություններ, բույսերի նոր ձևեր, որոնք իրենց հետադա սերունդների մշակության ընթացքում գտնելով նույն արտաքին պայմանները, նույն ձևով էլ հանդես են գալիս, երևան են բերում նույն հատկությունները և հատկանիշները:

Բույսերի այն փոփոխությունները, որոնք նկատվում են Մ. Գ. Թումանյանի հետադոտությունների ընթացքում, հատկանշալի են դառնում ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի ուսմունքի հիման վրա: Այդ փոփոխությունները բացատրվում են նրանով, որ բույսերը զրկվում են իրենց համար սովորական զարգացման պայմաններից և ընկնում անսովոր պայմանների մեջ, երբ որ այլ է օդի և հողի խոնավությունը, այլ է ցերեկվա և գիշերվա տևողությունը, իսկ այս ամենը նշանակում է, որ այլ է նաև բույսի սննդառության տիպը:

Այստեղ պետք է շեշտել, որ դեռ մատաղ, դեռ չձևավորված վիճակում գտնվող բույսը, իր զարգացումը սկսելով անսովոր արտաքին պայմաններում, ընտրում է փոփոխված արտաքին պայմաններից այն սնունդը, որը հրամցվում է իրեն իր մարմինը կազմելու համար: Եվ քանի որ զարգացող բույսի ընտրողականությունը արտաքին միջավայրի պայմանների նկատմամբ տեղի է ունենում փոփոխված պայմաններում, ապա ստացվում են փոփոխված բույսեր:

Որքան խիստ են արտաքին պայմանների փոփոխությունները, այնքան խիստ են փոխվում բույսերը, այն էլ այնքան խիստ, որ բույսի մի այլատեսակը դառնում է ուրիշ այլատեսակ, անգամ բույսի մի տեսակը դառնում է մի այլ տեսակ:

Այսպես, օրինակ, Մ. Գ. Թումանյանի փորձերը ցույց են տվել, որ ցորենի «պերսիկում» կոչվող տեսակը իրեն համար անսովոր որոշ պայմաններում ցանվելու դեպքում խիստ կերպով փոխվում է և դառնում կոշտ ցորեն: Մի այլ ցորեն, որը «պուլոնիկում» է կոչվում, ուշ աշնան կամ վաղ ձմռան ժամկետում ցանվելու դեպքում բոլորովին փոխվում է և հանդես գալիս որպես նոր տեսակի ցորեն, որին Մ. Գ. Թումանյանը տվել է «սևանիկում» անունը (այդ ցորենը ստացվել է Սևանա լճի ափին, Դիտությունների Ակադեմիայի Երկրագործության ինստիտուտի



Նկարի մեջ աջ կողմում դրված է պերսիկում ցորենի հասկը, իսկ ձախ կողմում՝ այդ նույն ցորենից ստացված մի հասկ, որը շատ նման է դուրում ցորենին։ Այդ փոփոխությունն ստացվել է այն բանի հետևանքով, որ պերսիկում ցորենի հատիկները ցանվել են խիստ անսովոր ժամկետում։ Հայկական ՍՍՌ Գիտ. Ակադ. իսկական անդամ Մ. Գ. Թումանյանը, իսկ նրանից առաջ ակադեմիկոս Տ. Դ. Լևոնկոն պարզել են, որ բույսերը խիստ անսովոր ժամկետներում ցանվելու դեպքում ենթարկվում են խիստ մեծ փոփոխություններին։

Մարտունու փորձադաշտում): Այնուհետև Մ. Գ. Թումանյանը պարզել է, որ կոշտ ցորենները որոշ ժամկետներում ցանվելու դեպքում դառնում են փափուկ ցորեններ: Օտար ժամկետներում ցանվելու դեպքում խիստ փոփոխություններ են տալիս նաև եզիպտացորենը, քունջութը և առհասարակ բոլոր բույսերը: Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի ասելիքանոց Վ. Կարապետյանը պարզել է, որ կոշտ ցորենները ցանվելով ուշ աշնանը, երբ հատիկները դեռ նոր ծիլ արձակած վիճակում ծածկվում են ձյունով, խիստ կերպով փոփոխության ենթարկվելով՝ տալիս են փափուկ ցորենի բազմապիսի այլատեսակներ: Այստեղ կրկին հիշենք Ի. Վ. Միշուրինի այն խոսքերը, թե «ինչպես ճամեն ինչ հոսում է, ամեն ինչ փոխվում է», այնպես էլ տեսակը փոխվում է:

Այս բոլոր աշխատանքները անընդունելի են մորզանիստների համար, որոնք այսպիսի փոփոխությունները համարում են ժամանակավոր փոփոխություններ, մոդիֆիկացիոն փոփոխություններ, այսինքն փոփոխություններ, որոնք ժառանգաբար չեն անցնում:

Տարբեր ժամկետներում կատարվող ցանքը մի մեթոդ է, որը պարզ կերպով ապացուցում է Ի. Վ. Միշուրինի և Տ. Դ. Լիսենկոյի ուսմունքն այն մասին, որ բույսերը անցնելով իրենց զարգացումը ստադիայից-ստադիա, ընտրում են արտաքին պայմաններից այն ամենը, ինչ անհրաժեշտ է իրենց մարմինը նպատակահարմար ձևով կառուցելու համար, և փոփոխվելով փոփոխված արտաքին պայմաններում, սերնդից-սերունդ անց են կացնում այդ փոփոխությունները, որոնք ամրապնդվում են, կրկնվելով բույսի զարգացման ընթացքում:

Այս բոլորի հիման վրա պարզ կերպով երևում է այն, որ տարբեր ժամկետներում կատարվող ցանքը լավ մեթոդ է բույսերի ժառանգականությունը խախտելու և նոր ձևեր ստանալու համար, մանավանդ եթե այդ ձևերը ստացվում են ազրոտելի-նիկական բարձր ֆոնի վրա: Այդ եղանակով խախտված և փոփոխության ենթարկված բույսերի ընտրության միջոցով կարելի է ստանալ արժեքավոր, բարձր բերքատվություն ունեցող սորտեր:

Եվ իրոք, այս ձևով ստացվել են ցորենի արժեքավոր դեեր, որոնք այժմ ենթարկվում են ընտրության և կասկած չկա, որ ընտրությունը լավ կատարելու դեպքում կստացվեն արտաքին պայմաններին համապատասխանող բարձր բերքատվություն

ունեցող սորտեր: Այս եղանակով արդեն ստացվել է և Արարա-
այան գաշտի կալիսողներում տարածվում է եղիստացորենի մի
նոր սորտ:

Այստեղ պետք է կանգ առնել այն ուսումնասիրություն-
ների վրա, որոնք կատարվել են խաղողի գենետիկայի և սելեկ-
ցիայի ուղղությամբ:

Ի. Վ. Միշուրինը սովորեցրել է, ինչպես այդ մասին ասվել
է վերևում, երկու բան ևս, դրանցից մեկն այն է, որ վեգետա-
տիվ հիբրիդացիայի ժամանակ, երբ երիտասարդ, չձևավոր-
ված սորտի մի կտրոն պատվաստվում է մի սորտի հասուն
ծառի վրա, որի արմատները սեփական չեն, այլ վայրակի են,
սակա այդ վայրակային պատվաստակալն իր պատվաստացուի
միջոցով ազդում է պատվաստված մատաղ կտրոնի և այդ կըտ-
րոնի տված պտուղների ու սերմերի հատկությունների ձևավոր-
ման վրա: Տ. Դ. Լիսենկոն, ելնելով այդ հանգամանքից, խաղո-
ղով դրադվող գենետիկ-սելեկցիոներների առաջ խնդիր է դրել՝
խաղողի խաչաձևումներ կատարելուց առաջ ստանալ սեփականար-
մատ վաղերս: Ահա այս է, որ նկատի է ունեցել իր աշխա-
տանքների ընթացքում գիտությունների թեկնածու Ս. Հ. Պո-
դոսյանը, որն արդեն ստեղծել է խաղողի տնկարան, որի վաղերը
ստացված են սերմերից և, ուրեմն, սեփականարմատ են, սեռա-
կան խաչաձևումները կատարում է այնպիսի սորտերի վաղերի
վրա, որոնք սեփականարմատ են, ստացված հիբրիդային բույ-
սերը գաստիարակելու համար պատվաստել է այնպիսի վաղերի
վրա, որոնք նույնպես սեփականարմատ են:


Ս. Հ. Պոդոսյանը, ի մեծ դարձանք վեյսամանիստների-մոր-
գանիստների-մենդելիստների, պարզել է, որ սերմերից ստաց-
ված բույսերը մեծ մասամբ կուլտուրական են և ոչ թե վայրի:
Նա պարզել է նույնպես, որ այդ բույսերը կուլտուրական լինե-
լով, բիոլոգիապես ավելի ախտիվ են և ունեն համեմատաբար
բարձր դիմացկունություն ցրտի, չորության և հիվանդություն-
ների հանդեպ:

Այժմ պետք է բացատրել, թե վեյսամանիստներն ինչու
պետք է դարձանան այն արդյունքների առթիվ, որոնք ստաց-
վել են Ս. Պոդոսյանի մոտ: Բանն այն է, որ, ինչպես արդեն
ասվել է, վեյսամանիստները ժառանգականությունը կապում են
իդիոպլազմայի հետ, որն անփոփոխ է մնում, որքան էլ արտա-
քին պայմանները փոխվեն, որքան էլ իդիոպլազմայից առաջա-

ցող մարմինը, սոման, փոխվի: Ուստի պարզ է, մտածում են
են վեյսմանիստները, որ խաղողի վաղը այնքան ժամանակ,
որքան ժամանակ կտրոններով բազմացվի՝ կալահպանի իր
տեսքը, բայց երբ սերմերով ցանվի՝ կտա վայրի տեսքի վաղեր,
երևան բերելով իր վայրի նախնիների բնույթը, այսինքն ցու-
ցաբերելով այն երևույթը, որը կոչվում է ատավիզմ:

Ի. Վ. Միշուրինը վճռականապես պայքարել է ատավիզմի
երևույթը այդպես մետաֆիզիկորեն հասկացողների դեմ, այն
մարդկանց դեմ, որոնք պնդել են, թե սերմերից ստացված բու-
յսը բուսականները պետք է անպայման նմանվեն իրենց վայրի
նախնիներին: Նվ ահա, Ի. Վ. Միշուրինը «Ատավիզմը և պլու-
դատու ծառերի նոր սորտերի դուրս բերումը» վերնագիրը կրող
իր հոդվածում զայրույթով գրում է. «Այն արտահայտությունը,
որ պտղատու ծառերի և թփերի կուլտուրական սորտերի բու-
սականները հանդես են բերում ատավիզմ, ծայր աստիճանի տար-
բինակ է, եթե ոչ ավելի: Այդպես կարող են արտահայտվել միայն
այն մարդիկ, որոնք բոլորովին անփորձ են այդ գործի գործ-
նական կողմում: Ընդհակառակը, ես կատեգորիկ կերպով պնդում
եմ, որ ատավիզմ չկա»:

Ի. Վ. Միշուրինը այսպիսի զայրույթով է խոսում նրա
համար, որ ատավիզմը մետաֆիզիկաների կողմից օգտագործ-
վում էր փոփոխականության գաղափարը հերքելու, այդ գա-
ղափարի դեմ պայքարելու համար: Իսկ այդ բանը հսկա-
յական չափերով խանգարում էր պտղաբուծության գործին,
առհասարակ՝ սերմերից ստացված երիտասարդ բուսական օր-
գանիդմների դաստիարակման միջոցով նոր, արժեքավոր սոր-
տեր ստեղծելու գործին: Ի. Վ. Միշուրինն իր աշխատություն-
ներում՝ բազմաթիվ անգամ անդրադարձել է ատավիզմի հար-
ցին և պարզորոշ կերպով բացատրել, թե երբ կարող են բույ-
սերը ատավիստական լինել, այսինքն բույսերը երբ կարող են
նմանվել իրենց վայրի նախնիներին: Նա ասել է, որ բույսերը,
և առհասարակ օրգանիզմները, կարող են ատավիստական լինել
այն ժամանակ, երբ նրանք իրենց զարգացման ժամանակ գլու-
նը վեն այնպիսի պայմաններում, որպիսի պայմաններում եղել
են նրանց վայրի նախնիները: Ավելին, Ի. Վ. Միշուրինը ցույց
է տվել, որ աղքատ սնունդի միջոցով կարելի է զարգացման վի-
ճակում գտնվող երիտասարդ բույսին հասցնել այնպիսի վիճակի,
որ նա նմանվի իր նախնիներին: Բայց,—ավելացրել է Ի. Վ.



Ս. Հ. Պողոսյանը խաչաձևել է «Սպիտակ խժապուռկ»-ը «Վարդա-
 գույն Երևանի»-ի հետ: Հիբրիդի կարոնը պատվաստել է «Արարատի»-ի
 վրա: Ստացվել է նոր սորա, որի պտուղները բաց գույնի՝ «Վարդա-
 գույն Երևանի» են, իսկ բաց ձևի՝ «Արարատի»:


Միշուրինը, — այդ դեռ չի նշանակում, որ այդ ատավիզմ է: Հասարակական տրեքեր, խնդրեմ, ինչպես հասկանալ թեկուզ այն հարցը, որ իմ ձեռքով անցած խնձորենիների, տանձենիների, բալենիների, սալորենիների, վարդենիների կուլտուրական այլատեսակների բուսականների երեք և ավելի սերունդում, և այն, ես չեմ հանդիպել ոչ մեկի (բուսակի), որը նման լինի ոչ միայն պապերին, այլ նույնիսկ հայրերին:

Եվ ահա, Ս. Պողոսյանի հետազոտությունների արդյունքները միանգամայն հաստատել են Ի. Վ. Միշուրինի ասածը: Այն բոլոր բուսականները, որոնք ստացվել են Ս. Պողոսյանի կողմից, ունենալով զարմանալի մեծ բազմազանություն, կուլտուրական են, այդ բուսականների մեջ չի գտնվել և ոչ մի հատ, որն իր զարգացման ընթացքում հանդես բերի վայրակի նշաններ: Ընդհակառակը, այդ բուսականները, մշակվելով բարձր ագրոտեխնիկական ֆոնի վրա, դառնում են փարթամ և բարձր բերքատու բույսեր: Որպես օրինակ կարելի է բերել խաղողի «Ոսկեհատ» («Շարժի»), «Արաքսենի» («Եղանդարի») և «Սաթենի» («Սալիլի») սորտերի բուսականների, այսինքն սերմերից ստացված բույսերի զարգացումը: Դրանք բոլորն էլ դուրս են եկել կուլտուրական և, մշակվելով ագրոտեխնիկական լավ ֆոնի վրա, աչքի են ընկել իրենց կենսունակությամբ, համեմատած նույն սորտերի կտրոններից ստացված վազերի հետ:

Այժմ Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտում Ս. Պողոսյանի կողմից աճեցված է մոտ 5000 հատ բուսակ, որոնք հիբրիդային են կամ պատկանում են խաղողի տեղական սորտերին: Դրանցից շատերն այժմ հասունացել են և տալիս են առաջին բերքը: Եվ, ահա, դիտողությունները երևան են բերել բազմաթիվ ու բազմապիսի փոփոխություններ, ինչպես արդեն նշվեց վերևում:

Այսպես, օրինակ, իծապտուկ խաղողի մի թփի վրա ստացվել են սպիտակ և սև գույնի ողկույզներ: Մի այլ օրինակ. խաղողի կարմիր կախանի սորտի վազերի ծաղիկները բերքատվության առաջին տարում եղել են ֆունկցիոնալ իգական և, առեջները ներքև ծոված լինելով, ընդունակ չեն եղել ինքնափոշոտում կատարելու: Այդ նույն բույսերի ծաղիկները մեկ-երկու տարի հետո փոխվել են և դարձել սովորական հերմոֆրոդիտ ծաղիկներ, բայց դարձյալ անընդունակ ինքնափոշոտման:

Ի՞նչ եղրակացության են հանգեցրել այս աշխատանքները:



Գիտութիւններէ թեկնածու Ս. Հ. Պողոսյանը այս նկարում ցույց տրված խաղողը ստացել է «Կարմիր կախանի» խաղողի սերմերը ցանկու միջոցով: Վեյսմանիստներ-մորզանիստները պնդում են, որ կուլտուրական խաղողներէ սերմերից ստացված բույսերը պետք է վայրէ լինեն, քանի որ նրանց նախնիները վայրէ են եղել, որովհետեւ հատկութիւնը, նրանց կարծիքով, անփոփոխ կերպով պահպանվում է սեռական բջիջների մեջ, իդիոսպլազմայի մեջ, ոչ մի փոփոխութիւն չկրելով արտաքին պայմաններից: Իսկ սերմերից ստացած այս խաղողը (ոչ միայն այս խաղողը, այլ բնդհանրապես) միանգամայն կուլտուրական է, որը հետեւանք է այն բանի, որ նա երկար ժամանակ բազմացվել է կտրոններով, մշակվել բարձր ազրոտեխնիկայի պայմաններում, ազնվացել մի կտրոնային սերնդից մյուս կտրոնային սերունդը, որը վերափոխել է բույսի վայրէ նախնիների հատկանիշները և հատկութիւնները, որը և արտահայտվում է սերմից ստացված բույսերի վրա: Այս խաղողը այն լավ փաստերից է, որոնք հերքում են վեյսմանիզմի-մորզանիզմի կեղծ-գիտական զբույթները ժառանգականութեան մասին:


Նախ այն եզրակացության, որ խաղողի վաղը հարյուրամյակ-
ների ընթացքում կտրոններով բազմացվելով և բարձր ազրո-
տեխնիկական ֆոնի վրա մշակվելով, բնույթով դարձել է կուլ-
տուրական, որը նրա զարգացման ընթացքում աստիճանաբար
ամրապնդվել է, ուստի և սերմերով ցանելու դեպքում տալիս է
կուլտուրական ձևեր: Այլա այն եզրակացության, որ վաղը սեր-
մերով ցանվելով՝ ընկնում է անսովոր պայմանների մեջ, քանի
որ սովորել է դարերի ընթացքում կտրոններով անկվելուն, և
անսովոր պայմանների մեջ ընկնելով՝ սկսում է տարբեր ձևով
ընդունել արտաքին միջավայրի պայմանները, տարբեր ասիմի-
լացիոն պրոցեսներ հանդես բերել, տարբեր ձևով սնվել, ուստի
և տալիս է տարբեր ձևեր, որոնք հանդես են գալիս որպես ար-
ժեքավոր նյութ՝ ստեղծագործական ընտրության համար, սե-
լեկցիայի համար, նոր արժեքավոր սորտեր ստանալու համար:
Մշակելով այդ սորտերը և դաստիարակելով ազրոտեխնիկական
բարձր ֆոնի վրա, կիրառելով վեգետատիվ հիբրիդիզացիա՝ որ-
պես դաստիարակման միջոց, կարելի է ստանալ, և արդեն ստաց-
վել են, խաղողի մեծարժեք սորտեր:

Իսկ դաստիարակման մասին ահա թե ինչ պետք է ասել.
բույսն իր հասակի որոշ շրջանում, հատկապես մատաղ շրջա-
նում, բուռն զարգացման շրջանում ընդունակ է փոփոխության
ենթարկվել՝ համաձայն արտաքին պայմանների ազդեցության:
Պարզ է, որ բուսարուծը հնարավորություն ունի ստեղծելու այս
կամ այն արտաքին պայմանը, ուստի և կարող է բույսը դաս-
տիարակել ըստ իր ցանկության: Վեյսմանիստներն այս բանը
չեն ըմբռնում և չեն էլ կարող ըմբռնել, ուստի և դաստիարակ-
ման դադարի արդյունքում նրանց համար գոյություն չունի:

Իսկ միջուրիչյան բիոլոգիական դիտության մեծադույն
նվաճումներից մեկը դաստիարակության հարցն է, որը մշակ-
վել ու պարզաբանվել է որպես տեսություն, որը և լուսա-
վորում է գործնական հարցերի լուծման ուղին:

Բերենք մի քանի օրինակներ Ս. Պողոսյանի հետազոտու-
թյուններից, որոնք փայլուն կերպով ցույց են տալիս, թե որքան
մեծ է դաստիարակության դերը բույսերի նոր ձևեր և սորտեր
ստանալու գործում:

Ս. Պողոսյանը 1940 թվին պտղաբերության չհասած հիբ-
րիդային առաջին սերնդի բուսակի կտրոնները պատվաստել է
դանազան վաղերի վրա, որպեսզի հիբրիդ բուսակին դաստիա-



Գիտությունների թեկնածու Ս. Հ. Պողոսյանը ցանկել է «Սպիտակ
 իծապտուկ» խաղողի սորտի սերմերը և ստացել մի շարք բույսեր։
 Այդ բույսերը ընդհանրապես տվել են սև պտուղներ։ Մի բույսի վրա,
 որը նույնպես տվել է սև պտուղներ, մի հյուղ տվել է սպիտակ
 պտուղներ։ Այսպիսով պարզվել է այն ճանապարհներից մեկը, որով
 ստեղծվել է մեր խաղողների բազմազանությունը։

բակի պատվաստացուհիների ազդեցության տակ: Յոթ-ութ տարի հետո կատարված դիտողությունները ցույց են տվել, որ խաղողի «Ժծապտուկ» և «Սաթենի» սորտերի հիբրիդային բուսակի կտրոնը պատվաստված լինելով «Ոսկեհատ» վազի վրա, տվել է խոշոր պտուղներ, որոնց մեջ 4—5 կորիզ, որը հատուկ չէ ոչ «Ժծապտուկին» և ոչ էլ «Սաթենուն», բայց հատուկ է «Ոսկեհատին»:

Նույն հիբրիդային բուսակի կտրոնը պատվաստված է եղել խաղողի «Նազելի» սորտի վրա և այս դեպքում արդեն տվել է այնպիսի պտուղներ, որոնք կորիզներ չեն ունեցել, կամ թե ունեցել են մեկական հատ, որը «Նազելիի» մոտ նույնպես նկատվում է, իսկ ստուգիչ բույսերի պտուղները, այսինքն «Ժծապտուկի» և «Սաթենուն» հիբրիդային բույսի վրայի պտուղները ունեցել են 3—4 կորիզ: Ուրեմն, պարզ է, որ բուսակը պատվաստված լինելով «Նազելիի» վրա, ձեռք է բերել նրա հատկությունները:

«Ժծապտուկի» և «Վարդագույն Նրեանի»-ի հիբրիդի բուսակի կտրոնը մի դեպքում պատվաստված է եղել «Արարատի»-ի վրա, մյուս դեպքում՝ «Վարդագույն Նրեանի»-ի: Նրբ պատվաստակալը «Արարատի»-ին է եղել, պատվաստացուի տված պտուղները նման են եղել «Արարատի»-ի պտուղներին, իսկ երբ պատվաստակալը «Վարդագույն Նրեանի»-ին է եղել, ապա պտուղները նման են եղել «Վարդագույն Նրեանի»-ի պտուղներին, բայց ավելի խոշոր:

Կարելի է բերել բազմաթիվ այլ օրինակներ:

Այս բոլոր օրինակները ցույց են տալիս, թե սրճան մեծ է դաստիարակության դերը:

Միջուրինյան դիտության այս մեթոդը իրոք որ մի մեծ նվաճում է բիոլոգիական դիտության մեջ և մի ուժեղ զենք՝ բույսերի բնույթն ըստ ցանկության փոխելու և մարդու կարիքներին հարմարեցնելու համար:

Պատվաստումը որպես դաստիարակության միջոց նշանակություն ունի ոչ միայն բազմամյա կուլտուրաների համար, այլև միամյա կուլտուրաների: Գիտությունների Ակադեմիայի Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտի ավագ գիտ. աշխատակից, դիտությունների թեկնածու Հ. Գ. Բատիկյանը ծավալուն փորձեր կատարելով ցույց է տվել, որ վեգետատիվ հիբրիդիզացիայի միջոցով կարելի է ստանալ տաքդեղի, պամի-

դորի, բաղրիջանի, լորու և այլ կուլտուրաների բազմաթիվ ու
բազմապիսի ձևեր, այնպես, ինչպես այդ կարելի է անել սեռա-
կան հիբրիդիզացիայի միջոցով:

Մորգանիստներ-մենդելիստները չեն ըմբռնում և չըմբռն-
ելով չեն ընդունում այն, որ վեգետատիվ հիբրիդիզացիան ըստ
էությունն նույնն է, ինչ որ սեռական հիբրիդիզացիան: Սակայն
բազմաթիվ փաստեր անհերքելի կերպով ապացուցում են, որ
վեյսամանիստները չարաչար կերպով սխալվում են, իսկ Ի. Վ.
Միչուրինը և Տ. Դ. Լիսենկոն միանգամայն ճշմարտացի են:

Վեգետատիվ հիբրիդիզացիայի մասին Տ. Դ. Լիսենկոն
ասել է. «Վեգետատիվ հիբրիդիզացիան դա զործնական ստու-
գումն է այն տեսություն, որը հնարավորություն է տալիս ճիշտ
հասկանալու արտաքին միջավայրի պայմաններից, կյանքի պայ-
մաններից, ձևակերպվող բուսական օրգանիզմների ժառանգա-
կան բնույթը: Տ. Դ. Լիսենկոն ասել է նաև հետևյալը՝ «Վեգե-
տատիվ հիբրիդները համողիչ ապացույցներ են հանդիսանում
ժառանգականություն այն միչուրինյան ըմբռնման համար: Նրանք
միաժամանակ անանցանելի խոչընդոտ են հանդիսանում մենդել-
իստների-մորգանիստների տեսության համար: Ակադեմիկոս
Տ. Դ. Լիսենկոն վեգետատիվ հիբրիդիզացիային այսպիսի նշա-
նակություն է տվել ելնելով այն բանից, որ ինքը մի այլ անգամ
այսպես է արտահայտել. «... ժառանգականությունը հատուկ է
ոչ միայն քրոմոսոմներին, այլև կենդանի մարմնի յուրաքանչյուր
մասնիկին», և այնուհետև՝ «Վեգետատիվ հիբրիդիզացիայի վե-
րաբերյալ փորձերը անհերքելիորեն ցույց են տալիս, որ այն
ամենը, ինչ կենդանի է՝ ունի ժառանգականություն, որ բջիջն
ասեո, մարմնի որ մասնիկն ասեո, այլ ոչ թե միայն քրոմոսոմ-
ները: Չէ որ ժառանգականությունը բնորոշվում է նյութերի
փոխանակության սպեցիֆիկ տիպով: Կարողացեք փոխել կեն-
դանի մարմնի նյութերի փոխանակության տիպը, և դուք կփո-
խեք ժառանգականությունը»:

Ահա այս տեղից էլ պարզ է, որ ըստ էության տարրերու-
թյուն չկա սեռական և վեգետատիվ հիբրիդիզացիայի միջև,
երկու դեպքում էլ սպեցիֆիկ, յուրահատուկ նյութափոխանակու-
թյան տիպն է, որը բնորոշում է ժառանգականությունը:

Աշխատելով Ի. Վ. Միչուրինի և Տ. Դ. Լիսենկոյի ուսմունքի
հիման վրա Հ. Դ. Բատիկյանը վեգետատիվ հիբրիդիզացիա է
կատարել տաքդեղի տարրեր սորտերի միջև, ձգտելով պարզել,

թե ինչպես է փոխանցվում պտուղի ձևը, գույնը, կծվությունը, մեծությունը, բույսի ձևը, տերևի ձևը և այլն և այլն: Միաժամանակ նա միևնույն սորաերը, որոնց ենթարկել է վեգետատիվ հիբրիդիզացիայի, ենթարկել է նաև սեռական հիբրիդիզացիայի: Այս երկու եղանակով ստացած հիբրիդային սերմերը նա ցանել է միևնույն արտաքին պայմաններում և դիտել, թե ինչպես են ժառանգվում հիբրիդիզացված բույսերի այն հատկությունները, որոնք թված են վերևում: Այս նույն փորձերը, ինչպես ասված է վերևում, Հ. Գ. Բատիկյանը կատարել է բադրիջանի, պամիդորի, լոբու և այլ բույսերի վրա:

Հ. Գ. Բատիկյանի ստացած արդյունքները միանգամայն համընկել են այն արդյունքների հետ, որոնք ստացել են այդ ուղղությամբ աշխատող ուրիշ միջուրինականներ: Այդ դիտողությունները ցույց են տվել, որ թե վեգետատիվ և թե սեռական ճանապարհով հիբրիդիզացված բույսերի հատկությունները հանդես են գալիս միանման, որ բույսի ձևը, տերևի կտրվածքի ձևը, պտղի ձևը, պտղի մեծությունը, պտղի գույնը նույն տիպի փոփոխություններով են հանդես գալիս թե վեգետատիվ հիբրիդների և թե սեռական հիբրիդների մոտ: Մյուս կողմից էլ պարզվել է, որ վեգետատիվ հիբրիդների հատկանիշները ավելի փոփոխական են, քան սեռական հիբրիդներինը, որ վեգետատիվ հիբրիդիզացիայի դեպքում բույսերի ժառանգականությունը ավելի խիստ կերպով է խախտվում և հետագա սերունդներում ավելի մեծ թվով բույսերի բազմադան ձևեր են ստացվում, քան սեռական հիբրիդիզացիայի դեպքում, որը և մեծ արժեք է ներկայացնում սելեկցիայի գործի համար:

Շատ հաճախ վեգետատիվ հիբրիդիզացիայից ստացված բույսերը խիստ կերպով տարբերվում են իրենց մասերով: Այդ երևույթը, որը նկատվել է նաև Հ. Գ. Բատիկյանի փորձերում, ըստ Տ. Դ. Լիսենկոյի բացատրվում է նրանով, որ վեգետատիվ հիբրիդիզացիան «այդ ցեղերի միացման սովորական ճանապարհը չէ, այն ճանապարհն էլ չէ, որ մշակվել է այդ բույսերի էվոլյուցիայի պրոցեսում: Այդ պատճառով պատվաստումների հետևանքով հաճախ ստացվում են խախտված, ուստի և տարբերվող օրգանիզմներ»:

Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի այս ցուցումները հասկանալի են դարձրել այն երևույթները, որոնք նկատվել են վեգետատիվ հիբրիդիզացիայի ժամանակ:



Գիտութիւննքն թեկնածու Հ. Գ. Բատիկյանը ստացել է բազմաթիւ փաստեր
վեղահատարի չկրթելիզացիայի վերաբերելի վերանկարի շարքում, ձախ
կողմում տեղափոխված է Շնչակա՝ կոչով տարեկը, իսկ աճ կողմում
«Օչ-կոչ» կոչովորէ «Օչ-կոչ»-ը պատկաստվել է Շնչակա՝ ի վրա Պատկաս
կատարելու տարում պատկաստացուից՝ «Օչ-կոչ»-ից վերցնել են սեբեբը, որոնք
ցանկել են հետադառում։ Նկարի երկրորդ և երրորդ շարքում ցույց են տրված
երկրորդ տարին ցանած սերմերի (երկրորդ սերմային սերունդի) բույսերի
բազմազանութիւնը։ Այստեղից երևում է, որ ստացվել են բույսեր, որոնց
պտուղներն մեջ կան այնպիսիները, որոնք գույնով նման են «Օչ-կոչ»-ին,
ձևով՝ Շնչակա՝-ին, կամ՝ գույնով նման են Շնչակա՝-ին, ձևով՝ «Օչ-
կոչ»-ին։ Այսինքն, այստեղ տեղի է ունեցել այնպիսի ճեղքավորում, որպիսի
«ին նկատվում է սեռական հիբրիդիզացիայի դեպքում։


Վեգետատիվ հիբրիդիզացիան ոչ միայն տալիս է տեսական արդյունքներ, այլև գործնական: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ վեգետատիվ հիբրիդ բույսերը լինում են փաթեամ, հզոր և բարձր բերք տվող: Այսպես, օրինակ, տաքդեղի «Օշ-Կոշ» և «Շչիպկա» սորտերի սեռական և վեգետատիվ հիբրիդային բույսերը բերքի տեսակետից դրվել են համեմատության մեջ թե միմյանց հետ և թե իրենց ծնողների: Բերքի քանակի չափումները պարզել են հետևյալը. «Օշ-Կոշի» և «Շչիպկայի» մեկ բույսի տված միջին բերքը ընդունվել է 100-ական միավոր, սրա համեմատությամբ մեկ սեռական հիբրիդ բույսի միջին բերքը կազմել է 102,6 միավոր, իսկ վեգետատիվ հիբրիդ բույսինը՝ 162,2-ից մինչև 260,9 միավոր: Պարզվել է, որ վեգետատիվ հիբրիդների պտուղների մեջ ավելի շատ կա չոր նյութ, շաքարներ և վիտամին C, քան ստուգիչ բույսերում:


Նույն երևույթը նկատվել է բադրիջանի վերաբերյալ: Այս բույսի տեղական մի սորտ վեգետատիվ և սեռական ճանապարհով հիբրիդացման է ենթարկվել «Դելիկատես» սորտի հետ: Այնուհետև հաշվի է առնվել բոլոր բույսերի լրիվ բերքը և դուրս է բերվել միջին բերքը: Պարզվել է հետևյալը. տեղական սորտի և «Դելիկատեսի» ծնողական մեկ բույսի միջին բերքը 100 միավոր ընդունելու դեպքում մեկ սեռական հիբրիդ բույսի միջին բերքը կազմել է 113 միավոր, իսկ մեկ վեգետատիվ հիբրիդ բույսինը՝ 140—175 միավոր:

Կատարած դիտողությունները երևան են բերել նաև վեգետատիվ հիբրիդների պտուղների խոշորություն, լավ ձև և բարձր որակ, համեմատած ինչպես ծնողական բույսերի հետ, այնպես էլ սեռական հիբրիդների: Վեգետատիվ հիբրիդացման ճանապարհով ստացված հիբրիդներից շատերը, լուրջ սելեկցիոն աշխատանքից հետո, կարող են ներդրվել արտադրության մեջ որպես սորտեր: Ստացած հիբրիդներից մի քանիսը նախնական հավանության են արժանացել կոնսերվային արտադրության կողմից:

Հետաքրքրական են այն աշխատանքները, որոնք կատարվել են ցորենի ներսորտային խաչաձևման, կարտոֆիլի ամառային ցանքի, բամբակենու ծերատման ուղղությամբ:

Ցորենի ներսորտային խաչաձևումը Հայկական ՍՍՌ-ում սկսվել է 1937 թվին, մասսայաբար կատարվել է 1938 թվին, Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Գ. Հ. Բաբաջա-





շնորհակալ եմ ձեր հարգանքների համար, որոնք
 ինձ հասնում են ձեր հարգանքների միջոցով։
 Ես հույսով եմ սպասում, որ ձեր հարգանքների
 միջոցով ինձ հասնում են ձեր հարգանքների
 միջոցով։

նյաճի ղեկավարութեամբ: Այս աշխատանքներին մասնակցել են մեր ռեսուրսը լիկայի համարյա թե բոլոր գիտա-հետազոտական հիմնարկները, գիտական աշխատողները, Գյուղատնտեսութեան միջնորդութիւնը (այն ժամանակ Հողօգտագործութեան), հողբաժինները, գյուղատնտեսները և հազարավոր կոլխոզնիկներ: Կասկած չկա, որ այս աշխատանքի շնորհիւ ստեղծվել է բարելավված սերմացուի ֆոնդ: Ներսորտային խաչաձևումից 1938 թվին ստացված սերմացուն ցանվել է նույն թվի աշնանը, կամ եթե դարնանացան է եղել, ցանվել է հաջորդ տարվա գարնանը: 1939 թ. կատարած դիտողութիւնները ցույց են տվել, որ ներսորտային խաչաձևումից ստացված սերմերի ցանքերը համեմատաբար ավելի լավ են, քան սովորական սերմերի ցանքերը: Նույն արդյունքներն են ցույց տվել նաև 1940 և 1941 թվականներին կատարած դիտողութիւնները:

Այստեղ նորից շեշտենք, որ ներսորտային խաչաձևման արդյունքները լավ պետք է լինեն: Լավ պետք է լինեն, քանի որ երբ բույսերը խաչաձևում են ազատ կերպով, ապա նրանց բեղմնավորութիւնը տեղի է ունենում բիոլոգիական տեսակետից ավելի օգտակար ազատ ընտրողականութեան միջոցով, բացի այդ, ստացված հիբրիդային բույսերը պարունակում են իրենց մեջ երկու ծնողի ունակութիւն՝ արտաքին պայմաններին հարմարվելու և այդ պայմաններից սնունդ վերցնելու տեսակետից, որի հետևանքով էլ նրանք լինում են ավելի թարմ և ավելի բերքատու, քան նրանց ծնող բույսերը առանձին-առանձին վերցրած:

Ավելի ևս լավ արդյունքներ են ստացվում, երբ ազատ փոշոտումը տեղի է ունենում տարբեր սորտերի ցորենների միջև: Եվ իրոք, այս աշխատանքի հիման վրա առանձնացվել են ցորենի արժեքավոր գծեր, որոնք ստացվել են տարբեր սորտերի ազատ փոշոտման հիման վրա, որոնցից մեկն արդեն իսկ արժեքավոր սորտ է և այժմ փորձարկվում է Պետսորտհանձնաժողովի Եղվարդի փորձադաշտում: Այդ սորտը՝ «Եղվարդի 4»-ը, որը ստացել են Բույսերի գենետիկայի ինստիտուտի աշխատակիցներ Ա. Ա. Մկրտչյանը և Ա. Հ. Եղիկյանը, ցույց է տալիս շատ բարձր, իր պայմանների համար չգերազանցված բերքատվութիւն, որի մասին ավելի մանրամասն կասենք փոքր ինչ հետո:

Այստեղ անհրաժեշտ է նորից հիշել այն մասին, որ ցորենների խաչաձևումը, համաձայն ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի առաջարկած մեթոդի, շատ կարևոր է և պետք է մշտապես կի-

բառովի: Պետք է ազատ փոշոտման հիման վրա ժամանակ առ ժամանակ, առնք 3—4 տարին մեկ անգամ, կատարել ներսորտային և միջսորտային խաչաձևում: Ավելի լավ արդյունք կըստացվի այն ժամանակ, երբ ներսորտային խաչաձևման համար կատարվի հատուկ ցանք, որի սերմացուն ընտրված է լավագույն ցանքից, լավագույն ցանքից էլ՝ լավագույն թփից, լավագույն թփից էլ՝ լավագույն հասկից, իսկ լավագույն հասկից էլ պետք է ընտրել ամենալավ հատիկները և դրանք ցանել ու այդ ցանքի մեջ ներսորտային խաչաձևում կատարել: Նույն բանը պետք է կատարել միջսորտային խաչաձևման համար: Այս դեպքում պետք է ընտրել ավելի վայրին համապատասխան մի քանի սորտ, և սերմացուն դարձյալ ընտրությամբ վերցնելով, այդ սորտերը ցանել իրար կողքի և ազատ փոշոտման միջոցով խաչաձևման ենթարկել ու ստացած հիբրիդային սերմերը խնամքով բազմացնել:

Կրկնում ենք, ակադ. Տ. Դ. Լիսենկոյի ուսմունքից բխող այսպիսի խաչաձևումը շատ ավելի դրական արդյունք կտա:

Հայկական ՄՍՌ-ում կարտոֆիլի ամառային ցանքի փորձերը՝ հին պալարներով առաջին անգամ կատարվել են 1938 թվին ավագ դիտական աշխատակից Գ. Գ. Թումանյանի կողմից, համաձայն ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի մեթոդի:

Ինչպես հայտնի է, կարտոֆիլը տաք կլիմա ունեցող շրջաններում միայն մեկ տարի է լավ բերք տալիս: Մեկ տարուց հետո նրա պալարները սկսում են ալլասերվել, որը արտահայտվում է նրանով, որ նրանք փոքրանում են, բառամում և նրանց ցանքից չնչին բերք է ստացվում, կամ բերք չի ստացվում: Մինչև ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի ուշադրություն դարձնելն այս աշխատանքի վրա, տաք կլիմա ունեցող շրջաններում կարտոֆիլի բերք ստանալու համար միայն մեկ ձև գիտեին: Այդ ձևը կայանում է նրանում, որ այդպիսի շրջանները ամեն տարի սերմացու էին բերում սառը կլիմա ունեցող շրջաններից և միայն այդ դեպքում էին բերք ստանում:

Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն պարզել է, որ հարավային շրջաններում ևս կարելի է ստանալ կարտոֆիլի առատ և բարձրորակ բերք: Այդ հարցը նա լուծել է կարտոֆիլի ամառային ցանքի միջոցով: Նա համոզիչ կերպով ապացուցել է, որ երբ կարտոֆիլը ցանվում է ամառը և պալարները թփի տակ ձևակերպվում են աշնանը, շուրերն անցած ժամանակ, ապա այդ պայ-

մաններում ստացվում են զարմանալի առողջ և շատ խոշոր պալարներ և ապահովվում է բարձր բերք, նույնիսկ, լավ մշակության դեպքում՝ զարմանալի բարձր բերք:

Այնուհետև ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն այն եզրակացությանն է հանգել, որ տաք շրջաններում կարելի է զբաղվել կարտոֆիլի մշակությամբ, առանց սերմացու բերելու ցուրտ շրջաններից: Սրա միջոցը նա գտել է նրանում, որ ամառային ցանքը պետք է սերմացու տա լճարնան ցանքի համար, իսկ զարնան ցանքը՝ ամռան ցանքի համար:

Այստեղից էլ այն եզրակացությունը, թե ամռան ցանքը պետք է կատարել զարնան ցանքի տված պալարներով, այսինքն՝ թարմ պալարներով: Հայտնի էր, որ թարմ պալարները դժվարությամբ են ծլում, ուստի և կատարվել են ընդարձակ հետազոտություններ՝ թարմ պալարները ծլեցնելու ուղղությամբ: Պարզվել է, որ թարմ պալարները կարելի է ծլեցնել մոտ $70-80^{\circ}/_{10}$ -ով որոշ խոնավությամբ, որոշ ցածր ջերմությամբ և թթվածնի առկայությամբ պայմաններում: Պարզվել է նաև, որ երկարատև տաք աշուն ունեցող վայրերում կարելի է հաջողությամբ կիրառել թարմ պալարների ցանքը: Միաժամանակ պարզվել է, որ թարմ պալարներով ցանք կատարելը դժվարությունների է հանդիպում այն վայրերում, որտեղ տեղի են ունենում վաղ աշնանային ցրտահարություններ:

Հայկական ՍՍՌ-ի հիմնական տաք վայրը՝ Արարատյան դաշտը նույնպես ունի աշնանային վաղ ցրտահարություններ և հենց այդ է պատճառը, որ այնտեղ ամառային ցանքը թարմ պալարներով մնացել է թերավարտ: Պետք է ենթադրել, որ մեր դիտնականները դարձյալ կվերադառնան այդ հարցին:

Շարունակենք քննության ենթարկել նաև այն խնդիրը, թե սերմնարուծական որպիսի մեծ նշանակություն ունի կարտոֆիլի ամառային ցանքը: Բանն այն է, որ կարտոֆիլի ամառային ցանքը նշանակություն ունի ոչ միայն տաք վայրերի համար, այլև ցուրտ վայրերի: Տարբերությունը տաք վայրերի և ցուրտ վայրերի այն է, այս հարցի տեսակետից, որ տաք վայրերում ամռան ցանքը պետք է ավելի ուշ կատարել, իսկ ցուրտ վայրերում՝ ավելի շուտ: Բայց որ ամռանը կատարած ցանքը ցուրտ շրջաններում ևս տալիս է թարմացած, բիոլոգիական տեսակետից ակտիվացած, ավելի լավ սերմացու հանդիսացող պալարներ, ոչ մի կասկած չի հարուցում և հրաշալի կերպով ապացուցված է:






[illegible]

Կարող են հարցնել, թե՛ ապա ինչպես է, որ, օրինակ, մեր
ռեսպուբլիկայում, լեռնային շրջաններում, բազմաթիվ տարի-
ների ընթացքում կարտոֆիլի սերմացուն չեն փոխում և այն
միշտ էլ մնում է բարելավ չիճակում, չի այլասերվում: Այս
հարցը, իհարկե, շատ հետաքրքիր է և արժե, որ սրա պատասխանը
փոքր ինչ մանրամասն կերպով տրվի:

Նախ և առաջ Վիճել չի կարելի, որ սառը կլիմա ունեցող
շրջանները, ինչպես մեզ մոտ լեռնային շրջանները, կարտոֆիլի
մշակության համար անհամեմատ ավելի բարենպաստ են, քան
տաք կլիմա ունեցող վայրերը: Բայց բանը հենց այն է, որ
ցուրտ, կամ լեռնային շրջաններում ևս ցանքի պայմաններում
փոփոխություն է տեղի ունենում, որն, իհարկե, պլանային կեր-
պով չի արվում, մտածված կերպով չի կատարվում, ուստի և
հաճախ կամ չի նկատվում, կամ եթե նկատվում էլ է, հաշվի չի
առնվում: Սակայն պարզ է, որ մի կոլխոզ իր ցանքը մի օրում,
կամ մի շաբաթում չի կատարում, այլ սովորաբար ունենում է
և՛ վաղ ցանք, և՛ ուշ ցանք: Այնուհետև, ցանքը կատարվում է
ոչ միանման վայրերում, այլ տարբեր վայրերում: Բացի այս,
պալարները հավաքվում են տարբեր ժամկետներում: Եվ վեր-
ջապես, սերմացուն անջատվում է ընտրության միջոցով, ըստ
որում ընտրվում է լավը: Այն էլ ասենք, որ հաջորդ տարվա
ցանքը, անխուսափելիորեն, իր բոլոր պայմաններով, շեշտում
ենք՝ բոլոր պայմաններով, տարբերվում է նախորդ տարվա ցան-
քից: Սրա հետևանքն ի՞նչ է լինում: Սրա հետևանքը լինում է
այն, որ կարտոֆիլի սերմացուն ազատվում է երկարատև միա-
նման, երկարատև միապաղաղ արտաքին պայմաններից, այ-
սինքն՝ երկարատև միանման, երկարատև միապաղաղ սննդից,
այլապես նա կզղվեր և կհոգներ այդպիսի սննդից ու կհյուժվեր:
Եվ քանի որ կարտոֆիլի պալարն ազատվում է այդ պայման-
ներից, ապա նա մնում է բիոլոգիապես թարմ, բարելավված:

Այս երևույթը համարյա թե ճիշտ նույն ձևով հատուկ է
նաև կենդանական օրգանիզմին, որը նույնպես զղվում է միա-
պաղաղ պայմաններից ու միապաղաղ սննդից և կհիվանդանա
ու կհյուժվեր, եթե այդ պայմանները չփոխվեին: Հայտնի է, թե
որքան մեծ նշանակություն ունի ակտրժակը առողջության հա-
մար: Եվ որքան մեծ է սննդի փոփոխության նշանակությունը
ակտրժակի պահպանության համար:





Գիտութիւններն թեկնածու Ն. Գ. Բատիկյանը կատարել է նաև բազմաթիւ
ներն սեռական խաչաձևում: Նա խաչաձևել է նույն ճիւղում, եկեղեցւոյս 42
և ճիւղիկատես՝ սորտերը, առաջինը վերցնելով ուրախ մայր և երկրորդը՝ ուր-
պես հայր: Նկարի նկարողը չափով ճշուց է տրված երկրորդ սերունդում տե-
ղի ունեցած ճիւղավորումը:

Երկրագործն իր փորձի հիման վրա վաղուց ի վեր կիրա-
ռում է սերմնափոխություն և ցանքի ժամանակի փոփոխություն:
Ինչո՞ւն է կայանում սերմնափոխությունը. նրանում, որ
սերմացուն ամեն տարի նույն վայրի ցանքից չի վերցվում, այլ
որևէ հարևան վայրից և այսպիսի սերմացունով կատարած ցան-
քից ավելի բարձր բերք է ստացվում:

Իսկ ինչո՞ւն է կայանում ցանքի ժամանակի փոփոխու-
թյունը. նրանում, օրինակ, որ երկսեզոն ցորենը, որը կարող է
ցանվել և՛ դարնանը, և՛ աշնանը, ցանվում է թարմացման են-
թարկվելով: Այսինքն՝ մի քանի տարի աշնանը ցանվելով հող-
նում է, և այսպես էլ ասում են՝ «սերմացուն հողնել է», և երբ
այդպիսի հողնած սերմացուն ցանում են դարնանը ու դարնան
ցանքից ստացած սերմացուն նորից ցանում աշնանը, պարզ
կերպով տեսնում են, որ ավելի բարձր բերք է ստացվում: Այդ
նշանակում է, որ մի քանի տարի իրար հետևից աշնանը ցանելու
հետևանքով հողնած ցորենը մի տարի դարնանը ցանվելով՝ թար-
մանում է և դարձյալ աշնանը ցանվելով՝ տալիս է բարձր բերք:

Շատ բան են ասում նաև այն փորձերը, որոնք կատարվել
են բազմահար կորնզանների սերմի բերքը ավելացնելու ուղղու-
թյամբ: Այդ փորձերը, որոնք կատարվել են գիտությունների
դոկտոր Ա. Ա. Մաթևոսյանի կողմից, ցույց են տվել, որ կորըն-
դանի տարրեր հարերից ստացած սերմացուն ունի տարրեր որակ:
Այդ, իհարկե, հասկանալի է. ամեն մի հարի սերմ ձևակերպվում
է տարվա տարրեր սեզոնում. ուրեմն տարրեր էլ պետք է լինի:
Բայց ահա թե ինչն է չափազանց կարևոր սերմնարուծական
տեսակետից. Ա. Ա. Մաթևոսյանը հավաքել է կորնզանի տարրեր
հարերի սերմացուն և հետո խառնել ու ցանել: Այս ձևով կա-
տարված ցանքը 29,5 — 50,4% -ով ավելի սերմի բերք է տվել,
քան սովորական ցանքը: Նա պարզել է նույնպես, որ այդ եղա-
նակով ստացած սերմացուն հաջորդ տարիներում ցանվելով,
տալիս է թե խոտի և թե սերմի ավելի բարձր բերք, համեմա-
տած սովորական սերմացուի հետ: Այս նշանակում է, որ կորըն-
դանի տարրեր հարերը տալիս են բիոլոգիապես փոխված սեր-
մեր և, ուրեմն, բույսեր: Այս բույսերը հանդես են բերում ավելի
մեծ փոխադարձ ընտրողականություն, ավելի ազդեցիկ խաչածե-
վում, ուստի և տալիս են բիոլոգիական տեսակետից ավելի հա-
րուստ, ավելի ազդեցիկ բույսեր, որոնք և, պարզ է, պետք է ցույց
տան և ցույց են տալիս է՛լ ավելի բարձր բերքատվություն:

Հիշատակենք մի ուրիշ շատ հետաքրքիր փորձ ևս, որը կատարվել է ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի ղեկավարությամբ։ Հայտնի է, որ աշորան ինքնափոշոտման դեպքում տալիս է թույլ սերունդ։ Վերցրել են աշորայի մեկ բույս և լավ թփակալած ժամանակ բաժանել մի քանի մասի և ամեն մի մասը անցրել տարբեր պայմաններում։ Այնուհետև հենց այդ նույն թփերի մեջ կատարել են խաչաձև փոշոտում։ Պարզվել է, որ այդ ձևով աշորան տալիս է ավելի լավ պտղակալություն և բիոլոգիապես ավելի ակտիվ սերունդ։

Ահա այս բոլոր փաստերը ցույց են տալիս, թե որքան կարևոր է և խորիմաստ այն, որ ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն խորհուրդ է տվել ամառային ցանք կատարելը, բացատրել է կարտոֆիլի ամառային ցանքի սերմնաբուծական մեծ նշանակությունը։ Ուրեմն լեռնային շրջաններում ևս պետք է կիրառել կարտոֆիլի ամառային ցանք՝ սերմացուն բիոլոգիական տեսակետից թարմացնելու և հետևապես նրա բերքատվությունը բարձրացնելու նպատակով։

Այժմ վերադառնալով 1938 թվին կարտոֆիլի ամառային փորձնական ցանքին հին պալարներով, պետք է ասել, որ այդ փորձերը տվել են լավ արդյունքներ։ Փորձերի նպատակն է եղել պարզել, թե ինչ ժամկետներում պետք է կատարել կարտոֆիլի ցանքը Արարատյան դաշտավայրում։ Պարզվել է, որ ամենից նպատատվոր ժամկետը հուլիսի վերջերը և օգոստոսի սկիզբն է, իսկ լեռնային շրջանների համար՝ հուլիսի վերջերը։

Բամբակենու ծերատումը, բամբակենու ծերտման այն եղանակը, որը մշակել և առաջարկել է Տ. Դ. Լիսենկոն, Հայկական ՍՍՌ-ում կիրառվել է որպես լայն արտադրական փորձ 1938 թվին՝ դիտությունների թեկնածու Գ. Գ. Թումանյանի կողմից։ Պարզվել է, որ բամբակենին Արարատյան դաշտի պայմաններում պետք է ծերատել 11—12 բերքատու ճյուղի հանդույցի վրա։ Այդ աշխատանքների հիման վրա բամբակենու ծերատումը Հայկական ՍՍՌ-ում մտել է աղբյուրանոցների մեջ և այժմ լայն չափերով կիրառվում է մեր բամբակադործական կոլխոզների կողմից։

Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն իր լավագույն աշակերտներից մեկի՝ Ա. Ա. Ավագյանի հետ միասին բույսերի ստադիական դարգացման տեսության հիման վրա մշակել է բամբակենու ծերատման եղանակը և առաջարկել արտադրությանը։

Տ. Դ. Լիսենկոն ցույց է տվել, որ բամբակենու զարգացման առաջին շրջանում, երբ կոկոններն են ձևավորվում, բույսի սննդառության ուժեղացումը խիստ օգտակար է։ Օգտակար է, քանի որ նոր ձևավորվող և դեռևս չամրապնդված կոկոններն ուժեղ սնունդ են պահանջում և ստանալով այդ սնունդը ամրապնդվում են, ապրում, զարգանում և բերք դառնում։ Իսկ այն դեպքում, երբ սնունդը պակաս է լինում, կոկոնների մի զգալի մասը թափվում է և տեղի է ունենում բերքի խիստ զգալի կորուստ։

Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն անալիզի ենթարկելով այս երևույթները, առաջարկել է բույսերի կոկոնավորման ժամանակ կտրել ու հեռացնել բույսի այն մասերը, որոնք խլում են կոկոնների սնունդը։ Նա մատնանշել է միաժամանակ, որ բույսի աճող մասերը շատ մեծ քանակությամբ սնունդ են խլում և, աճման պրոցես ապրելով, դեպի իրենց են քաշում սննդի մի զգալի մասը և այդպիսով ավելի պակասեցնում կոկոնների սննդաբաժինը։ Այդ հիման վրա Տ. Դ. Լիսենկոն առաջարկել է կտրել և հեռացնել բամբակենու մոնոպոդիալ ճյուղերն ու աճման գագաթները և այդպիսով խնայել բույսի սնունդը կոկոնների համար, այսինքն կոկոններին տրամադրել այն սնունդը, որը բույսը վերցնում է հողից և օդից։

Այժմ հարց է ծաղում, թե՞ եթե ժամանակի տեսակետից պարզ է մոնոպոդիաների կտրելն ու հեռացնելը, ապա երբ պետք է կտրել բույսի աճման գագաթը և ի՞նչ բարձրության վրա, բույսի որ հանգույցում։

Պարզվել է, որ եթե տվյալ բամբակադործական շրջանում բամբակենին բացվող կնգուղ է տալիս, ասենք թե մինչև 12-րդ բերքատու ճյուղը, ապա միանգամայն ավելորդ է թույլ տալ, որ բույսը շարունակի աճել և առաջացնել հաջորդ ճյուղերը։ Ուրեմն, երբ բույսի վրա առաջացել է 12-րդ բերքատու ճյուղը, ապա պետք է կտրել բույսի գլխավոր ցողունի աճման գագաթը հենց այդ 12-րդ ճյուղից բարձր։

Ահա այս է բամբակենու ծերատման նպատակը ու եղանակը, որը լավ հայտնի է մեր բամբակացան կոլխոզնիկներին, որոնք գիտեն բամբակենու ծերատում կատարել։ Այժմ Հայաստանում մի քանի հազար հեկտարի վրա բամբակենու ծերատում է կատարվում և կասկած չկա, որ այն նպատարում է բամբակենու բերքատվության բարձրացմանը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Բույսերի
զննետիկայի և սելեկցիայի ինստիտուտը, որը, ինչպես ասվեց
վերևում, 1938 թվին պարզել էր բամբակենու ծերատման կիրա-
րումը Հայաստանի պայմաններում, շարունակել է այդ հարցի
ուսումնասիրությունը, առաջ դնելով ակադեմիկոս Տ. Դ. Լիսեն-
կոյի նշած նախապայմանը: Հարցն այսպես էր դրված. մենք բույ-
սի կոկոնակալման ժամանակ կտրում ենք և հեռացնում բույսի
մոնոպոզիալ նյութերը և զլխավոր ցողունի զաղաթը, որով ուժե-
ղացնում ենք կոկոնների սնունդը և այսպիսով թույլ չենք տա-
լիս, որ նրանք վատ սնվելու պատճառով թափվեն, ուրեմն ապա-
հովում ենք բույսի վրա կոկոնների որոշ քանակը, այսինքն
ասպանում ենք բերքը: Իսկ չի՞ կարելի, արդյոք, բույսը ծե-
րատման ենթարկել նաև այն ժամանակ, երբ նա սկսում է ձե-
լավորել և հասունացնել իր կնդուղները, չի՞ կարելի, արդյոք,
բերքատվությունը բարձրացնելու նպատակով ուժեղացնել կրն-
դուղների սնունդը, կտրելով և հեռացնելով բույսի այն մասերը,
որոնք իրենց վրա բերք չունեն, որի հետևանքով իսկ ավելորդ
են բույսի համար, իդուր են պահվում բույսի վրա և խլում այն
սնունդը, որը կարող էր տրամադրվել կնդուղներին: Մեր փոր-
ձերի հիման վրա պարզվել է, որ կարելի է:

Ահա այս հիման վրա մեր կողմից առաջարկվել է բամբա-
կենու ծերատման մի նոր եղանակ, որը, ի տարբերություն ար-
դեն հայտնի սովորական ծերատումից, կոչվել է խոր ծերատում:
Բամբակենու ծերատման այս ձևը խոր է կոչվում նրա համար,
որ այս դեպքում ոչ թե կտրվում ու հեռացվում է բույսի զլխա-
վոր ցողունի աճման զաղաթը, այլ կտրվում է բույսի մի զղալի
մասը, այն մասը, որն իրեն վրա բերք չունի, որի վրա եղած
կոկոններն ու ծաղիկները ուշ ձևավորված լինելու պատճառով
բերք չեն դառնալու: Կտրվում ու հեռացվում են նաև մոնոպո-
զիալ նյութերի այն մասերը, որոնք իրենց վրա բերք չունեն:
Այսպիսով բույսն ազատվում է ավելորդ մասերից, որի շնորհիվ
զղալի կերպով ուժեղանում է կնդուղների սնունդը: Բույսը որ-
քան շատ ազատվի ավելորդ մասերից, այնքան լավ՝ կնդուղների
համար, քանի որ վերջիններս ստանում են կտրված ու հեռաց-
ված մասերի սննդարժիքը:

Կա նաև մի շատ կարևոր հանգամանք, այդ այն է, որ սո-
վորական ծերատումը կատարվում է բամբակենու զարգացման

առաջին շրջանում, երբ բույսը զբաղված է իր աճեցման գործով, իսկ խոր ծերատումը կատարվում է բույսի զարգացման 2-րդ շրջանում, երբ բույսը զբաղված է իր պտուղների, կրնգուղների, բերքի հասունացման գործով: Պարզվել է, որ բույսի սննդի ուժեղացումն այս շրջանում նպաստում է բերքի հասունացմանը, կնգուղների շուտ բացվելուն, մասնավորապես ավելացնում է մինչև առաջին ցրտահարությունն ստացվող բերքը, որը շատ կարևոր հանգամանք է բերքի բարձր որակ ապահովելու համար:

Ծերատման այս ձևը կիրառվել է արտադրական-փորձնական պայմաններում, 1943—1944 թվականներին, էջմիածնի շրջանի մի քանի կոլխոզներում, գիտ. թեկն. Գ. Թումանյանի կողմից և պարզվել է, որ այս միջոցառման շնորհիվ մի հեկտարից ստացվում է 3—4 ցենտներ ավելի բերք:

Բամբակենու խոր ծերատումը փորձարկել է նաև Հայաստանի Տեխնիկական կուլտուրաների ինստիտուտը (գիտ. թեկն. Հ. Գրիգորյան) և ստացել է դրական արդյունքներ:

1947 թվին, ՀՍՍՌ Գյուղատնտեսության Մինիստրության անմիջական հսկողությամբ բամբակենու խոր ծերատման լայն արտադրական փորձ է կատարվել 3 շրջանում՝ Հոկտեմբերյանում, Արտաշատում, էջմիածնում և պարզվել է, որ՝ քիչ բացառություններով, ստացվում են լավ արդյունքներ: ՀՍՍՌ Մինիստրների Սովետը 1948 թվին որոշում է կայացրել բամբակենու խոր ծերատում 2000 հեկտարի վրա կատարելու մասին:

Մեր բամբակացան կոլխոզիկները կարող են հաջողությամբ կատարել և կատարում են բամբակենու ծերատումը և խոր ծերատումը շնորհիվ այն բանի, որ մեզ մոտ կան կոլխոզային լավ, հասուն և գործը բավականին խորը կերպով հասկացող կադրեր՝ գյուղատնտեսներ, ագրոտեխնիկներ, բրիգադիրներ և օղակավարներ:

Հայկական ՍՍՌ-ում վերջին տարիների ընթացքում զգալի աշխատանքներ են կատարվել ցորենի, պամիդորի և պտղատու ծառերի սորտերի ստացման ուղղությամբ: Մինչև վերջին տարիներս Հայկական ՍՍՌ-ում մշակվելիս է եղել ցորենի միայն մեկ սելեկցիոն սորտ՝ «Ուլրախնկան», որը ստացվել է Միրոնովյան սելեկցիոն կայանում: Այս սորտը, դժբախտաբար, ունի մի շարք բացասական հատկություններ: Ամենից առաջ այդ սորտի

սերմը խիստ կերպով թափվող է: Շատ հատիկ է թափվում մանավանդ այն ժամանակ, երբ բերքահավաքը կատարվում է կոմբայնով կամ գերանդիով: Այնուհետև այդ սորտը չափազանց ուժեղ կերպով վարակվում է քարամբիկով և դորշ ու ցողունային ժանդով: Այսքան բացասական հատկությունների պատճառով, սլարդ է, «Ուկրաինական» պետք է փոխարինվի այլ սելեկցիոն սորտով:

Պետք է ասել, որ «Ուկրաինական» փոխարեն նոր սորտ ապու գործը Հայկական ՍՍԻ-ում այնքան էլ դժվար չէ: Դժվար չէ, քանի որ մեր ռեսպուբլիկան շատ հարուստ է ցորենների տեսակներով, այլատեսակներով և բավականին արժեքավոր տեղական սորտերով, որոնք հնարավորություն են տալիս սելեկցիոն աշխատանքի միջոցով նոր սորտ ստանալ:

Բույսերի արժեքավոր սորտեր ստանալու խնդիրը հրատապ կերպով դրվել է մեր գիտնականների առաջ 1938 թվին: Այժմ կարելի է ասել, որ մեր գիտնականները հասել են ողորջ նվաճումների, ստանալով գյուղատնտեսական բույսերի արժեքավոր սորտեր:

Առաջին հերթին պետք է նշել ցորենի «Արմյանկա» սորտը, որն անհատական ընտրության միջոցով ստացել է գիտությունների թեկնածու Բ. Մ. Գարասեֆերյանը: Այդ սորտը պատկանում է փափուկ ցորենների խմբին, ֆերուզինեում այլատեսակին, նախատեսված է լեռնային շրջաններում ցանելու համար և այժմ գրավում է մի քանի հազար հեկտար տարածություն: Պետք է ասել, որ «Արմյանկա» սորտի բույսերի ցողունները ամուր են, ուստի և նրա ցանքը նորմալ ագրոտեխնիկական պայմաններում չի պառկում, որը կարևոր է այնպիսի խոնավ շրջաններում, ինչպիսին են Կալինինոյի և Ստեփանավանը: Այդ սորտը համեմատաբար դիմացկուն է սնկային հիվանդությունների հանդեպ, որը նույնպես շատ կարևոր է խոնավ վայրերի համար: Պետք է նշել, որ «Արմյանկայի» հատիկները լավ որակի են և տալիս են բարձրորակ հաց:

Անհրաժեշտ ենք համարում բերել մի քանի տվյալներ «Արմյանկա» սորտի բերքատվության վերաբերյալ: Այդ տվյալներն ստացվել են Կալինինոյի և Ստեփանավանի շրջանների կոլխոզներում, որտեղ այդ սորտը լայնորեն տարածված է և տարեցտարի շարունակում է ընդարձակվել (աղ. 1):

Ցանքի վայրը	Սորտի անունը	Մեկ հեկտարի բերքը առանձին տարիներում (ցենտներով)			
		1940	1941	1947	1948
Կալինինո	«Արմյանկա»	—	—	16,0	15,6
	«Ալթի աղաջ»	—	—	14,0	10,3
Շահնաղար	«Արմյանկա»	—	—	20,5	—
	«Ալթի աղաջ»	—	—	11,5	—
Կիրով	«Արմյանկա»	—	—	9,8	24,3
	«Ալթի աղաջ»	—	—	9,4	19,6
Վարդաբլուր	«Արմյանկա»	—	—	—	13,5
	«Ալթի աղաջ»	—	—	—	12,5
Ուռուտ	«Արմյանկա»	21,2	23,6	—	—
	«Գյուլգանի»	13,4	12,6	—	—

Այսպիսով մենք տեսնում ենք, որ «Արմյանկա» սորտը ունի անհամեմատ բարձր բերքատվութիւնը, քան «Գյուլգանին», որը այդ շրջանների հիմնական տեղական սորտն է հանդիսացել շատ երկար ժամանակի ընթացքում: «Արմյանկայի» հեղինակը առաջարկելով իր սորտն այս շրջանների համար՝ առաջին հերթին նպատակ ուներ փոխարինել «Գյուլգանի» ցածրարժեք սորտը բերքատու «Արմյանկա» սորտով: Աղյուսակում բերած տվյալները ցույց են տալիս, որ Բ. Մ. Գարասեֆերյանը հաջող կերպով լուծել է այդ խնդիրը: Մյուս կողմից էլ մենք պարզ կերպով տեսնում ենք, որ «Արմյանկա» սորտը բարձր բերք է տալիս նաև «Ալթի աղաջի» համեմատութեամբ:

Իր բերքատվութեամբ աչքի է ընկնում ցորենի «Եղվարդի 4» սորտը: Այդ սորտն ստացել են Գիտութիւնների Ակադեմիայի Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտի գիտ. աշխատակիցներ Ա. Եղիկյանը և Ա. Մկրտչյանը՝ ներսորտային խաչաձևման ժամանակ հայտարարված հիբրիդային ցորեններից, վերջիններս մի քանի տարի շարունակ ենթարկելով անհատական ընտրութեան: Իր արտաքին հատկանիշներով այդ ցորենը նման է գրեկում ցորենին, այսինքն հասկերը քիստավոր են, առանց մազմզուկների և սպիտակ գույնի, հատիկը սպիտակ: Հատիկների ձևը և գույնը շատ լավ է, տված հացը բարձր որակի է: Բույսերը միջակ չափով վարակվում են դեղին ժանգով, սակայն հասունացման վաղ շրջանում, ուստի և համարյա թե չեն տուժում: Հունձն ուշանալու դեպքում համարյա թե կո-



Յորենի «Արմյանկա» սորտի հասկերը:
Այս սորտը այժմ արագութեամբ բազմացվում և տարածվում է
Հայկական ՍՍՌ-ի խոնավ լեռնային շրջաններում:

բուստ չի լինում՝ շնորհիվ այն բանի, որ ցողունը կտրվող չէ, և հատիկն էլ չի թափվում: «Նդվարդի 4» ցորենը առայժմ բազմացվում է Պետսորտստոեցման հանձնաժողովի Նդվարդի փորձադաշտում և Գիտ. Ակադեմիայի Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի էքսպերիմենտալ բազայում: Նա իր հատկություններով համապատասխանում է Հայկական ՍՍՌ-ի հարավային նախալեռնային շրջաններին, որտեղ և այդ ցորենը պեպ է տարածվի, որի համար այն այժմ արագ կերպով բազմացվում է: Ահա մի քանի թվական տվյալներ, որոնք ցույց են տալիս այդ ցորենի բերքատվությունը Նդվարդի փորձադաշտի պայմաններում (աղ. 2):

«Նդվարդի 4» սորտի բերքատվությունը Նդվարդի փորձադաշտում
Աղյուսակ 2

Տ ա ր ե թ . ի վ	«Նդվարդի 4»	«Սալիտակահատ» (ստուգիչ)
	1 հեկտ. բերքը (ցենտ.)	1 հեկտ. բերքը (ցենտ.)
1946 . . .	42,2	35,1
1947 . . .	31,0	22,9
1948 . . .	36,7	28,9
1946—1948 . .	36,6	29,3

Այս թվերը ցույց են տալիս, թե «Նդվարդի 4» սորտը որքան բարձր բերք է տալիս: Նրեք տարվա ընթացքում այն միջին հափով մոտ 8 ցենտներ ավելի բերք է տվել, քան թե ստուգիչը՝ սալիտակահատը: Նրբ այդ ցորենը սկսի մշակվել բազմահեկտար տարածությունների վրա, այժմյան սովորական ագրոտեխնիկայի պայմաններում, ապա նրա բերքատվությունը փոքր ինչ կարող է իջնել, բայց, այնուամենայնիվ, այն կպահպանի իր բարձր բերքատվությունը: Իսկ բարձր ագրոտեխնիկայի դեպքում՝ խոտադաշտային ցանքաշրջանառության և դաշտապաշտպան անտառաշերտերի դեպքում, «Նդվարդի 4»-ի բերքատվությունը անշուշտ շատ ավելի բարձր կլինի, քան այժմյան բերքատվությունը փորձադաշտի պայմաններում:

Ցորենի լավ սորտ է նաև «Արտաշատի 42»-ը: Այդ ցորենը ստացել են Գիտ. Ակադեմիայի գիտ. աշխատակիցներ Վ. Գուլքանյանը, Ս. Պողոսյանը և Գ. Սուրմիրյանը, որոնք կոլխոզային



Յորենի «Նդվարդի 4» սորտի հասկերը
 Բարձր բերքատու սորտ է, ստացվել է չոր նախալեռնային
 շրջանների համար:

դաշտերում ընտրել են մի քանի հազար գիծ, այնուհետև փորձադաշտային պայմաններում ենթարկել կրկնակի ընտրության:

Այդ ցորենը նույնպես պատկանում է փափուկ ցորենների խմբին, հասկերը կարմիր են, քստավոր, հասկի թեփուկները ծածկված են մազմզուկներով, հատիկը սպիտակ է: Այս ցորենից ստացվում է լավ ալյուր և լավ հաց: Սրա բույսերը վարակվում են դեղին ժանգով թույլ կերպով, այն էլ իրենց զարգացման ուշ շրջանում, ուղտի համարյա թե չեն տուժում. չեն տուժում նաև խորշակից: Այս ցորենը հարմար է ցածրադիր շրջաններում մշակվելու համար, այն վայրերում, որտեղ բամբակ են ցանում:

Բերքատվության տեսակետից այս ցորենը նույնպես ցույց է տվել լավ հատկություններ: Բերենք, ըստ առանձին տարիների, այն տվյալները, որոնք ստացվել են Պետսորտստուգման հանձնաժողովի էջմիածնի փորձադաշտում (աղ. 3):

«Արտաշատի 42» սորտի բերքատվությունը Արարատյան դաշտավայրի պայմաններում

Աղյուսակ 3

Տ ա ր ե թ է վ	«Արտաշատի 42»	Համադանիկում (ստուգիչ)
	1 հեկտ. բերքը (ցենտ.)	1 հեկտ. բերքը. (ցենտ.)
1944	28,6	28,6
1945	38,3	37,4
1946	25,0	20,7
1947	26,3	15,3
1948	27,5	26,4
1944—1948	29,3	25,7

Այսպիսով մենք տեսնում ենք, որ «Արտաշատի 42» սորտը 5 տարվա ընթացքում միջին չափով մոտ 4 ցենտներ ավելի բերք է տվել, համեմատած ստուգիչի՝ Համադանիկումի հետ:

Այս տարբերությունն այնքան էլ մեծ չէ, մանավանդ եթե հաշվի առնենք, օրինակ, 1944 թվի կամ 1948 թվի տվյալները: Բայց բանն այն է, որ ստուգիչը՝ Համադանիկումը, խիստ կերպով տուժում է ժանգից, հատկապես դեղին ժանգից, որը շատ տարածված է Արարատյան դաշտում և որով այս ցորենը ուժեղ կերպով վարակվում է: Համադանիկումը ուժեղ կերպով տուժում է նաև խորշակից: Իսկ ժանգի ու խորշակի պատճառով այս ցորենը որոշ տարիներ չնչին և վատորակ բերք է տալիս,



Յոթենի «Արտաշատի 42» սորտի հասկերը:
Բարձր բերքատու սորտ է, ստացվել է ցածրադիր տաք, բամբակա-
ցան շրջանների համար: Այժմ բազմացվում և տարածվում է Հայ-
կական ՍՍՌ-ում:

որից մեր կոլխոզները սաստիկ տուժում են: Իսկ «Արտաշատի 42»-ը դիմացկուն և կայուն սորտ է, որի բերքը, ճիշտ է, նույնպես տատանվում է ըստ առանձին տարիների պայմանների, բայց հինգ տարվա ընթացքում այն չի իջել 25 ցենտներից, մինչդեռ Համադանիկումի բերքը իջել է մինչև 15,3 ցենտներ մեկ հեկտարից: Պետք է սպասել, որ «Արտաշատի 42»-ը խոտադաշտային ցանքաշրջանառության և դաշտապաշտպան անտառաշերտերի պայմաններում շատ ավելի բարձր բերք կտա:

Ներկայումս «Արտաշատի 42»-ը դրադեցնում է մոտ 400 հեկտար տարածություն Արարատյան դաշտավայրի շրջաններում: Արտադրության պայմաններում կատարած դիտողությունները ապացուցել են այս ցորենի առավելությունը: Պարզվել է, որ «Արտաշատի 42»-ը տեղ-տեղ երկու անգամ ավելի բերք է տալիս, համեմատած Համադանիկումի հետ:

Այսպիսով, մենք կարող ենք նշել, որ Հայկական ՄՍԽ-ում աշխատող միջուրինական գիտնականները ստացել են ցորենի 3 սորտ, որոնք հարմար են դաշտային, նախալեռնային և լեռնային գոնաներում մշակվելու համար: Երկու-երեք տարուց հետո այդ սորտերը կգրադեցնեն իրենց մշակության համար պիտանի բոլոր վայրերը:

Սակայն կա երկու խնդիր, որոնք հաշվի են առնվում մեր գիտնականների կողմից, այդ այն է, որ ցորենի 3 սորտը Հայաստանի բազմազան պայմանների համար քիչ է, ուրեմն պետք է աշխատել, որպեսզի մեր ռեսպուբլիկայի բոլոր ռայոնները ապահովվեն համապատասխան սորտերով: Այնուհետև մեր գիտնականները գիտեն, որ պետք է ստեղծել ցորենի այնպիսի սորտեր, որոնք առաջիկա 5—10 տարվա ընթացքում մեկ հեկտարից 50—60 ցենտներ բերք տան: Չէ որ պարզ է, որ երբ լիակատար կերպով իրականանա անտառային շերտերով պաշտպանված խոտադաշտային ցանքաշրջանառությունը, այն ժամանակ շատ զգալի չափերով կբարձրանա այժմ մշակվող ցորենի սորտերի բերքատվությունը: Մյուս կողմից էլ պետք է ստեղծել այնպիսի սորտեր, որոնք կարողանան լրիվ օգտագործել մեր դաշտերի բերրիությունը: Նկատի պետք է ունենալ, որ ցորենի այժմյան սորտերը հազիվ թե կարողանան լիովին ընդունել այն սնունդը, որը կստեղծվի հողում՝ երկրագործության խոտադաշտային սխտեմի ժամանակ: Ուրեմն պետք է ստեղծել ցորենի նոր սորտեր, որոնք ընդունակ լինեն հողի մեջ եղող լիառատ սնունդը վերց-



Այս նկարում, ձախ կողմում, ցույց է տրված հյուսիսային հասկ ունեցող ցորենը, որը շատ բերրի հող է պահանջում և, եթե այդ պահանջը բավարարվում է, տալիս է շատ բարձր բերք։ Նկարի աջ կողմում ցույց է տրված նույն ցորենը, բայց աղքատ սննդառու թյան պայմաններում աճեցրած. ինչպես տեսնում ենք, այս դեպքում հասկը չի հյուսիսայնորվել (աղագրերի հոս Ա. Ա. Ավագյանի փորձերից)։

նելու և համապատասխան բերք տալու: Այդ պահանջը, հավա-
նաբար, կբավարարի ճյուղավոր ցորենը, կամ ճյուղավոր ցորե-
նից դուրս բերած մի ավելի արժեքավոր սորտ: Եթե այդ ժա-
մանակը դա, իսկ այն հեռու չէ, ապա ցորենի 50—60 ցենտներ
բերքը մեկ հեկտարից չափազանց քիչ կլիմա:

Պետք է ասել նաև, որ հողի այն մեծ բերրիության պայ-
մաններում, որը ստեղծվելու է, մեր այժմյան ցորենի սորտերը
անձանաչելի կերպով կփոխվեն, քանի որ տվյալ սորտի համար
անսովոր սնունդն ևս փոխում է նրան՝ վատ դեպքում վատացնե-
լով, նվազեցնելով, իսկ լավ դեպքում, լիակատար առատության
դեպքում՝ անձանաչելի կերպով փարթամեցնելով: Այսպես, օրի-
նակ, ակադեմիկոս Ա. Ա. Ավագյանը փորձի միջոցով ապացուցել
է, որ ճյուղավոր ցորենը վատ սննդառության պայմաններում
կորցնում է իր ճյուղավորությունը և անգամ հատիկ չի բռնում:
Մենք մեր փորձերի ընթացքում ուժեղ սննդի միջոցով միա-
հատիկանի ցորենը (ամոնոկոկում) դարձրել ենք երկու և երեք-
հատիկանի, երկհատիկանի ցորենը (գդիկոկում) — դարձրել
ենք երեք և ավելի հատիկանի, երկհատիկանի (գդիկոկում) և
«պերսիկում» ցորեններից ստացել ենք ճյուղավոր ձևեր:

Ահա թե որքան մեծ է առատ սննդի նշանակությունը:

Իսկ երբ ստեղծվի այդ առատ սնունդը, որն իրականանալու է
խոտադաշտային ցանքաշրջանառության և դաշտապաշտպան ան-
տառագոտիների պայմաններում, այն ժամանակ սելեկցիան նոր
ստեղծագործական թափ կստանա և կստեղծի բույսերի նոր, հո-
յակապ սորտեր:

Մյուս կողմից էլ բարձր բերքի հիման վրա կստեղծվի առատ
կերային բազա, որը հնարավորություն կտա առատ կերակրման
միջոցով բարելավելու, և ոչ միայն բարելավելու, այլև ստեղծելու
անասունների նոր, փարթամ, խոշոր, բարձր մթերատու ցեղեր,
որի ապացույցը տվել են խոշոր եղջյուրավոր անասունների Կա-
րավայեվոյի ցեղի ստեղծողները:

Այժմ մենք մի քանի խոսք պետք է ասենք այն մասին,
թե ցորենի «Արմյանկա», «Արտաշատի 42» և «Նդվարդի 4»
սորտերն ինչ եղանակով են ստացվել: Այդ բանը և՛ հետաքրքրա-
կան է և՛ միաժամանակ ուսանելի:

«Արմյանկա» սորտը ստացվել է հատիկի նմուշ վերցնելու
միջոցով: Այդ սորտի հեղինակը Հայաստանի տարբեր վայրերից
հավաքել է զանազան ցորենների նմուշներ, մի քանի հարյուր



Այս նկարում ցույց է տրված, որ ուժեղ սնման շնորհիվ կարելի է սովորական ցորենները ճյուղավոր դարձնել: Նկարում բերված է «պերսիկում» ցորենը: Ձախ կողմի հասկը սնվել է ուժեղ և ճյուղավորվել է, աջ կողմի հասկը ստացել է սովորական սնունդ և մնացել սովորական վիճակում (Վ. Հ. Գուլբանյանի փորձերից):

գրամի սահմաններում: Այնուհետև, նա այդ նմուշները մի քանի տարի ցանել է փորձադաշտերում և այդ ցանքերի մեջ կրկնակի ընտրություն կատարելով՝ առանձնացրել է «Արմյանկա» սորտը:

«Արտաշատի 42» սորտը ստեղծվել է կոլխոզային ցանքերի մեջ ընտրություն կատարելու միջոցով: Այս սորտի հեղինակները շրջել են կոլխոզային ցանքերի մեջ և ընտրել լավագույն թփեր: Այս թփերից ստացած հատիկները նրանք ցանել են փորձադաշտային պայմաններում և մի քանի տարի բոլոր դժերի մեջ ընտրություն կատարելուց հետո առանձնացրել են «Արտաշատի 42» սորտը:

«Նդվարդի 4»-ը ստեղծվել է կոլխոզային ցանքերում ցորենի տարբեր այլատեսակների մեջ ազատ խաչաձև փոշոտում կատարելու միջոցով: Հնարավոր է, որ այս դեպքում մի ցորենի խաչաձևումը կատարված լինի ոչ թե միայն մեկ ուրիշ ցորենի ծաղկափոշիով, այլ գուցե մի քանի ուրիշ այլատեսակի ցորենների ծաղկափոշիներով, որոնք և անշուշտ նպաստել են բեղմնավորման պրոցեսին և, հետևապես լավ սերունդ ստանալուն: «Նդվարդի 4» ցորենի որակի լավ լինելը կարելի է սրանով էլ բացատրել: Այնուհետև այս սորտի հեղինակները հավաքել են հիբրիդային հասկերը և նրանցից ստացած սերմացուն մի քանի տարի ցանելով փորձադաշտի պայմաններում, ենթարկել են կրկնակի ընտրության և առանձնացրել «Նդվարդի 4» սորտը:

Ինչպես տեսնում ենք, ցորենի այս երեք սորտերը ստացվել են միմյանցից տարբեր եղանակով: «Արմյանկա»-ն ստացվել է ամենից պարզ եղանակով: Այս եղանակի թերությունն այն է, որ ընտրությունը կատարվել է սահմանափակ բույսերի մեջ: «Արտաշատի 42»-ի ստացման եղանակի առավելությունը, «Արմյանկա»-յի համեմատությամբ, այն է, որ այս դեպքում ընտրությունը կատարվել է բազմահեկտար ցանքերի մեջ, հետևապես միլիոնավոր բույսերի մեջ և ընտրության հնարավորությունը անհամեմատ մեծ է եղել: «Նդվարդի 4»-ի առավելությունը «Արմյանկա»-յի և «Արտաշատի 42»-ի համեմատությամբ այն է, որ այս դեպքում սորտը ստացվել է ազատ խաչաձևման, հետևապես մեկ բույսի մեջ երկու, գուցե և ավելի ծնողների հատկությունները ընտրողական բեղմնավորման հիման վրա միացնելու միջոցով, որի շնորհիվ էլ պետք է ստացվեր և ստացվել է բիոլոգիապես ավելի ակտիվ սերունդ:

Սրանով միայն կարելի է բացատրել այն, որ «Նդվարդի



Այս նկարում ցույց է տրված ուժեղ ֆունուցման ազդեցութիւնը
ցորենների վրա: «Դիկոկում» ցորենի բույսերը մի դեպքում աճեցվել
են շատ ուժեղ ֆունուցման պայմաններում և տվել են ճյուղավոր հաս-
կեր (նկարի աջ կողմի հասկը), մյուս դեպքում առաջել են սովորա-
կան ֆունուցում և փոփոխութեան չեն ենթարկվել (Վ. Հ. Գուլբանյա-
նի փորձերից):

42-ը ավելի բերքատու է, քան «Արմյանկա»-ն և «Արտաշատի 42»-ը:

Պետք է այս ամենին ավելացնել, որ այս երեք սորտի հեղինակները կիրառել են այն ամենը, ինչ հայտնի է բույսերի դաստիարակության վերաբերյալ:

Այստեղ պետք է նշել նաև Հայաստանի Պտղարանջարարուծական սելեկցիոն կայանում գիտությունների թեկնածու Ա. Ա. Անանյանի կողմից ստացված պամիդորի «Անահիտ» սորտը, որը մտել է ստանդարտի մեջ: Այդ սորտը ստացվել է ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի կողմից առաջարկած ընտրողական փոշոտման և լավ ազրոտելսնիկական պայմաններում դաստիարակելու մեթոդի հիման վրա: Սա մի արժեքավոր սորտ է կոնսերվի արտադրության համար, որը նաև մեծ բերքատվություն ունի: Նրա բերքը մեկ հեկտարից, բարձր ազրոտելսնիկայի դեպքում, հասնում է 30—35 տոննայի:

Շատ հետաքրքրական արդյունքներ են ստացվել պտղարուծության դոկտ. Հայաստանի Պտղարանջարարուծական սելեկցիոն կայանի Լենինականի բաժանմունքում, որտեղ ժրաջան և արդյունավետ աշխատանք են կատարում ակտիվ միջուրինականներ Ս. Լ. Ազուլյանը և Պ. Գ. Գարանյանը: Աշխատելով 13 տարի, նրանք հավաքել են միջուրինյան և զանազան տեղական ու այլ պտղատու ծառերի սորտեր և կադմակերպել տնկարան: Այդ տնկարանի սորտերից նրանք տարածել են մերձակա շրջաններում, որտեղ արդեն կան և պտղաբերում են 45 հազար պտղատու ծառեր: Այս հիմնարկությունում կատարվում են հիբրիդիզացիոն աշխատանքներ, որի ընթացքում Ի. Վ. Միջուրինի ուսմունքի հիման վրա ընտրվում են ծնողական ձևեր, հիբրիդիզացիայի ենթարկվում և, այնուհետև, սրանցից ստացված հիբրիդները դաստիարակվում են ազրոտելսնիկական լավագույն պայմաններում մշակելու և մենտոր հանդիսացող սորտերի ծառերի վրա պատվաստելու միջոցով: Այս եղանակով Ս. Լ. Ազուլյանը ստացել է խնձորենու «Սաղովայա կիտայկա» և բերսվի ու տեղական սորտերի արժեքավոր հիբրիդներ, որոնք տարեցտարի ընտրության են ենթարկվում և բարելավվում:

Պ. Գ. Գարանյանը խաչաձևել է տանձենու երկու սորտ՝ «Լեանայա կրասավիցա» և միջուրինյան «Բերեզիմայա»: Այս խաչաձևման նպատակն է եղել ստեղծել տանձի ցրտադիմացկուն սորտ, որը և լուծվել է հաջողությամբ:

Անհրաժեշտ է նշել, որ մեր ուսուցիչական շատ հարուստ է պտղատու ծառատեսակներով: Հայտնի են, և բավականին տարածված, գեղձի ալիսի սորտեր, ինչպիսին են՝ «Նարինջին», «Զաֆրանին», «Արաշատին» (որը քաղցր կորիզ ունի), «Աշտարակին» (որը նույնպես քաղցրակորիզ է և ճղովի, իսկ մյուս երեք սորտը ճղովի չեն): Ծիրանի սորտերից հայտնի են՝ «Երևանին» («Շալախը»), «Սաթենին» («Թարարզան»), «Խոսրովինին» և այլն: Կան տանձենու, խնձորենու, սալորենու, ալուչենու և այլ պտղատուների բազմաթիվ արժեքավոր սորտեր: Վերջին տարիների բնթացքում կատարած հետազոտությունները ցույց են տվել, որ Հայաստանում կա սերկևիլի ավելի քան 50 տեսակ: Ուրիշ պտղատուների վերաբերյալ կատարվող ուսումնասիրություններն ևս ցույց են տվել, և ցույց կտան, թե պտղատուների որքան մեծ բազմազանություն կա մեզ մոտ:

Մեր ուսուցիչականի մի շարք ուսյաններ՝ Ղափանը, Մեղրին, Շամշադինը, Իջևանը, Նոյեմբերյանը, Ալավերդին և այլն, հարուստ են բազմապիսի վայրի պտղատու ծառատեսակներով, որոնք բավականին մեծ տարածություն են բռնում և շոշափելի դեր են խաղում մեր կոլխոզների և կոլխոզնիկների տնտեսություն մեջ: Պետք է հիշատակել տանձը, խնձորը, հոնը, ղկեռը, մոշը, մոռը, սալորը և այլն և այլն:

Ինչ կղրակացություն պետք է հանդել այս ամենի հիման վրա: Այն կղրակացություն, որ մեր կուլտուրական և վայրի ծառատեսակները պետք է լայնորեն օգտագործվեն՝ պտղարուծությունը մեզ մոտ էլ ավելի զարգացնելու նպատակով: Ի. Վ. Միչուրինի և Տ. Դ. Լիսենկոյի ուսմունքի հիման վրա պետք է այդ ծառատեսակները՝ թե կուլտուրական և թե վայրի, օգտագործել սելեկցիայի գործի համար և ստեղծել նոր, ավելի արժեքավոր սորտեր:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Բույսերի գենետիկայի ինստիտուտում Ա. Մ. Վերմիշյանը և իր աշխատակիցները զգալի աշխատանք են կատարել Հայաստանի պլանտացիայի ծառատեսակների հայտնաբերման և ուսումնասիրման ուղղությամբ: Նրանք միաժամանակ կատարել են զանազան պտղատուների խաչաձևումներ՝ նոր սորտեր ստանալու նպատակով:

Առաջնահերթ խնդիրը, որի ուղղությամբ աշխատել է Ա. Մ. Վերմիշյանը, այդ գեղձենու ցրտադիմացկուն սորտ ստեղծելն է:

Այդ նպատակով նա դեղձենու տեղական լավագույն սորտերը, ինչպես, օրինակ, «Զաֆրանին», «Նարինջին» խաչաձևել է վայրի նշենու և դեղձանշենու հետ: Վայրի նշենին և դեղձանշենին ցրտադիմացկուն են ու, միաժամանակ, չորադիմացկուն և այդ խաչաձևման նպատակն է եղել սրանց այս արժեքավոր հատկութունը փոխանցել դեղձենու կուլտուրական սորտերին:

Ի. Վ. Միչուրինը մշակել է կրկնակի խաչաձևման մեթոդը:

Ի՞նչ է նշանակում այս: Նա երբ որ մի ծառատեսակ խաչաձևել է մի այլ ծառատեսակի հետ ու ստացել հիբրիդային ծառատեսակ, նկատել է, որ այդ հիբրիդի մոտ պակասում են լավ ծնողի հատկութունները: Որպեսզի այդ պակասը լրացնի, նա այդ հիբրիդը կրկին խաչաձևել է արժեքավոր ծնողի ծաղկափոշիով: Ահա այս եղանակն էլ կիրառվել է Ա. Մ. Վերմիշյանի աշխատանքներում, որը դեղձենու ու նշենու և դեղձենու ու նշադեղձենու հիբրիդների առաջին սերունդի ծաղիկները նորից փոշոտել է դեղձենու արժեքավոր սորտերի ծաղկափոշիով:

Սրա հետ միաժամանակ օգտագործվել է մենտորի եղանակը. հիշած ձևով ստացված հիբրիդների բուսակները պատվաստվել են դեղձենու արժեքավոր սորտերի հասուն և լավ ծառերի վրա, որպեսզի դաստիարակվեն նրանց ազդեցության տակ և զարգացնեն լավ հատկութուններ: Այսպես, օրինակ, դեղձենու «Արտաշատ»-ի սորտի և նշադեղձենու հիբրիդի առաջին սերունդի բուսակը պատվաստվել է «Արտաշատ»-ի սորտի ծառի վրա, որի հետևանքով նրա պտուղները, համեմատած չպատվաստված հիբրիդի պտուղների հետ, լավացել են թե խոշորության և թե համի տեսակետից:

Մեր ոեսպուրիկայի լեռնային շրջանները պտղատու ծառեր չունեն, կամ չափազանց քիչ ունեն: Խնդիր է դրված՝ բուսեղծել այնպիսի ծառատեսակներ, որոնց մշակումը լեռնային շրջաններում հնարավոր լինի: Իսկ դրա համար անհրաժեշտ են այնպիսի սորտեր, որոնք ցրտադիմացկուն են: Ահա ցրտադիմացկուն սորտեր ստեղծելու նպատակով, խնձորենու տեղական մի տեսակ՝ մարգախնձորենին պատվաստվել է ցրտադիմացկուն «Կիտայսկայա ժյուտայա» խնձորենու տեսակի վրա: Այս հիբրիդացումից ստացված բուսակները դաստիարակման են ենթարկվել այնպես, ինչպես այդ սովորեցրել են Ի. Վ. Միչուրինը և Տ. Դ. Լիսենկոն: Այս հիբրիդները փորձարկվելու և տարածվելու են լեռնային շրջաններում:

Մարդախնձորենին հիբրիդիզացիայի ժամանակ որպէս ծնողական ձև օգտագործելն ունի նաև մի այլ նշանակութիւն, որը չափազանց կարևոր է: Բանն այն է, որ բաղմաթիվ արժեքավոր, անտեսական մեծ դեր խաղացող ծառատեսակներ, ինչպէս, օրինակ, դեղձենին, տանձենին, ծիրանենին, խնձորենին կտրոններով չեն կարող բաղմացվել: Այդ կուլտուրաները տարածելու համար մի քանի ձևեր կան, որոնցից մենք այստեղ կ'իշխատակենք միայն մեկը: Տարածման ենթակա բույսի սերմերը ցանում են, բուսակներ ստանում, որոշ չափով մեծացնում և նրանց վրա պատվաստելով կուլտուրական ծառատեսակների աչքերը կամ շիվերը, ստանում են այդ ձևով անկիւններ և հետո միայն այդ անկիւնները տարածում: Պարզ է, որ այս բանը և՛ ժամանակ է խլում, և՛ միջոցներ, մի խոսքով՝ ահադին դժվարութիւնների հետ է կապված: Իսկ մարդախնձորենու կտրոնները հեշտութեամբ արմատակալում են, որի շնորհիվ այդ տեսակը կարելի է հեշտութեամբ բաղմացնել և տարածել: Եվ ահա, խընդիր է դրված՝ ստանալ մարդախնձորենու և այլ արժեքավոր սորտերի հիբրիդներ, որոնք պահպանեն իրենց բոլոր լավ կողմերը և միաժամանակ ձեռք բերեն կտրոններն արմատակալելու հատկութիւնը: Այս խնդիրը լուծելի է և հույս կա, որ այն կլուծվի մոտիկ ապագայում: Իսկ երբ այդ խնդիրը լուծվի, ապա պարզ է, որ խնձորենու սորտերի և՛ բաղմացնելը, և՛ տարածելը անհամատ կերպով կթեթեանա:

Այստեղ բնականորեն հարց կարող է ծագել, թե չենք կարող, արդյոք, պտղատուները սերմերով բաղմացնել, չէ որ այդ ավելի հեշտ է, քան կտրոններով կամ, առավել ևս, պատվաստված անկիւններով բաղմացնելը: Վերևում այդ հարցը մենք արդեն շոշափեցինք և մեջ բերինք Ի. Վ. Միշուրինի կարծիքն այն մասին, որ բույսերը սերմերով պետք է բաղմացնել ավելի համարձակ կերպով: Նա հետևողականորեն և հաստատակամորեն պնդում էր, որ պտղաբուծութիւնը պետք է տարածել տեղական սորտեր դուրս բերելու միջոցով, որի համար ցանքը պետք է կատարել սերմերով և, ստացված բուսակների մեջ խիստ ընտրութիւն կատարելով՝ թողնել ամենահարմարվածները տեղի կլիմայական-հողային պայմաններին և ամենաարժեքավորները՝ պտուղների որակի և բերքի քանակի տեսակետից: Օրինակ, ներկայումս, երբ մեր ռեսպուբլիկայում եռանդուն միջոցառումներ են ձեռք առնվում սուրտրոպիկական կուլտուրաների լայն տա-

բաժման համար, պետք է ելնել Ի. Վ. Միչուրինի տված այդ դրույթից՝ ցանքը սերմերով կատարել, ստանալ տվյալ վայրում սերմից ստացված բույսեր, որոնք իրենց մարմինը ձևավորեն տվյալ արտաքին պայմաններից, ուրեմն, ձևավորեն իրենց՝ տվյալ պայմաններին հարմար կերպով, տվյալ պայմաններին համապատասխան կերպով: Այնուհետև, ինչպես արդեն ասվեց, ընտրություն կատարել այդ բույսերի մեջ, ընտրելով ամենալավերը:

Ի. Վ. Միչուրինը, այսպիսի դրույթ տալով, հիմնավոր կերպով քննության է ենթարկել պտղաբուծների այն կարծիքը, թե պտղատու ծառերի սերմերը ցանելու դեպքում ստացվում են միայն վայրակային տիպի բույսեր: Այս հարցը նա մանրամասն կերպով է քննության առել, նկատի ունենալով, որ այդպիսի կարծիքը մեծ խոչընդոտ է հանդիսանում պտղաբուծության տարածման ու զարգացման համար: Քննության առնելով այդ կարծիքը, նա եկել է այն եզրակացության, որ կուլտուրական պտղատուների սերմերից ստացվում են վայրակային տիպի բույսեր այն դեպքում, եթե այդ բույսերը չեն խնամվում, չեն դաստիարակվում, լավ սնունդ չեն ստանում, ծաղկման առաջին տարիներում փոշոտվում են (միջատների միջոցով) ոչ թե կուլտուրական ծառատեսակների ծաղկափոշիով, այլ մոտակայքում գտնվող վայրի պտղատուների փոշիով և այլն: Ուրեմն, բացահայտելով այդ բոլորը՝ Ի. Վ. Միչուրինը ճանապարհ է ցույց տրվել սերմերից ստացված բույսերի մեջ կուլտուրական հատկություններ զարգացնելու համար: Նա սովորեցրել է, որ սերմից ստացված բույսը աստիճանաբար է դառնում կուլտուրական: Օրինակ, այն ժամանակ երբ սերմից ստացված երիտասարդ ծառի ներքևի տերևները, ճյուղերը վայրակի տիպի են լինում, վերևի ճյուղերը աստիճանաբար, ճյուղից ճյուղ, ցածրի զոնայից դեպի վերևի զոնան, ստանում են կուլտուրական տեսք, դառնում են կուլտուրական:

Ի. Վ. Միչուրինը և Տ. Դ. Լիսենկոն սովորեցրել են, որ վայրակի վրա պատվաստված կուլտուրական պատվաստակալի տված սերմն իր մեջ կրում է այդ վայրակային պատվաստակալի ազդեցությունը, որը երևան է գալիս այդ սերմից ստացած բույսի մեջ: Այդ պատճառով նրանք խորհուրդ են տվել սեփականարժատ բույսեր ստանալ բոլոր այն դեպքերում, երբ այդ հնարավոր է: Իսկ այդ հնարավոր է, օրինակ, թղենու, նոնենու,

թթենու, մարգախնձորի, սերկևիլի, փշատի և այլ ծառատեսակ-
ների վերաբերյալ: Իսկ, ինչպես վերևում ասվեց, մարգախնձո-
րենու շնորհիվ կարելի է արմատակալող դարձնել նաև խնձորե-
նու մյուս տեսակների կտրոնները: Պարզ է, որ այսպիսի բազմա-
ցումը կնպաստի, որպեսզի սերմերից ստացվեն կուլտուրական
բույսեր: Իսկ մնացած դեպքերում, երբ սերմը, ձևավորված լի-
նելով վայրակային պատվաստակալի աղդեցության տակ, ցան-
վելու դեպքում երևան է բերում այդ պատվաստակալի հատկու-
թյունները, պետք է աշխատել դործը շտկել դաստիարակության
միջոցով: Չէ, որ այդպիսի բույսը իրեն մեջ ունենալով վայրա-
կային պատվաստակալի հատկությունները, ունի նաև պատվաս-
տացուի կուլտուրական հատկությունները, ուրեմն դաստիարա-
կության միջոցով պետք է աշխատել հենց այդ կուլտուրական
հատկությունների դարգացումն էլ ապահովել:

Կարևոր է նշել այն բանը, որ ծառատեսակների սերմերը
ցանելու ժամանակ պետք է ընտրություն կատարել, սերմերը
վերցնելով ամենալավ ծառից, ամենալավ ծառի ամենալավ
պտղից, ամենալավ պտուղների սերմերից էլ պետք է ցանելու
համար առանձնացնել ամենալավերը:

Ա. Մ. Վերմիշյանի ղեկավարությամբ այժմ աշխատանք է
տարվում պարզելու համար, թե ղեղձենու լավագույն տեսակնե-
րի սերմերը ցանելու դեպքում ինչպիսի՞ բույսեր են ստացվում,
միշտ մոր նման, թե՞ խայտարղետ՝ թե՞ ըստ պտուղների հասու-
նացման ժամկետի, թե՞ ըստ պտուղների դույնի, ձևի, համի և
այլն: Մի բան պարզ է՝ այն, որ միջակ աղբոտեխնիկական պայ-
մաններում ղեղձենու լավ տեսակների կորիզներից ստացվում
են մինչև 80% կուլտուրական բույսեր: Ավելի բարձր աղբոտեխ-
նիկա ապահովելու դեպքում կարելի է 100%-ով կուլտուրական
բույսեր ստանալ: Եթե այս բանը լրիվ պարզվի, իսկ այն պետք
է որ այդպես էլ լինի, այն դեպքում ղեղձենու բազմացումը և
տարածումը մեծ չափերով կհեշտանա: Հենց այստեղ էլ պետք է
ասել, որ անհրաժեշտ է այսպիսի ուսումնասիրություններ կա-
տարել նաև մյուս պտղատուների վերաբերյալ: Օրինակ, կարելի
է ասել, որ ղեղձենու նման արդյունքներ պետք է ստացվեն նաև
ծիրանենու վերաբերյալ:


Ահա համառոտակի կերպով այն նվաճումները, որոնք ձեռք
են բերված Հայկական ՍՍՌ-ում, մեծ դիտնական Իվան Վլադի-
միրովիչ Միշուրինի և նրա դործի լավագույն շարունակող և

զարգացնող ակադեմիկոս Տրոֆիմ Դենիսովիչ Լիսենկոյի ուսմունքի հիման վրա:

Իվան Վլադիմիրովիչ Միշուրինը մեծ և ազնիվ քաղաքացի է եղել: Նրա մեծագույն ցանկությունն է հանդիսացել՝ ծառայել իր հայրենիքին, իր հայրենի երկրի ժողովրդին: Իր ստեղծագործական կյանքի մի զգալի մասը նա անց է կացրել ցարական բռնակալության օրոք, հալածանքներ կրելով ցարական չինովնիկների, կղերականների և ռեակցիոն գիտնականների կողմից: Նա նյութական ծանր վիճակ է ապրել և իր ստեղծագործական աշխատանքը ծավալել չկարողանալու դառնությունն է կրել: Ու մեծ սիրով է սիրել նա իր մեծ հայրենիքը ու նրա ժողովրդին և ապրել նրա հետ ու աշխատել նրա համար: Նյութական ծանր վիճակում լինելով, իր ձեռնարկած մեծ գործը շարունակել չկարողանալու դրության մեջ գտնվելով, նա զզվանքով է լսել ամերիկացի գիշատիչ ձեռնարկատերերի առաջարկը՝ Ամերիկա փոխադրվելու և դուլլարներով, օգնականներով ու բարեկեցիկ կյանքով ապահովվելու վերաբերյալ: Նա մեծագույն արհամարհանքով մերժել է այդ առաջարկը և մնացել իր ժողովրդի մեջ, իր երկրում և նրա հետ միասին հասել Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի օրերին, Սովետական իշխանության դարաշրջանին:

Սովետական կարգերը փշրել են այն կապանքները, որոնք արգելք էին հանդիսանում ուսման մեծ ժողովրդի ստեղծագործական ուժերի լիակատար զարգացման համար: Ահա այդ պայմաններում է հայտարարվել և գնահատվել Ի. Վ. Միշուրինը իմաստուն առաջնորդներ Լենինի և Ստալինի կողմից և մեծ օժանդակություն ստանալով՝ հսկայական աշխատանքներ ծավալել իր տեսությունը զարգացնելու և բույսերի նոր սորտեր ստեղծելու ուղղությամբ:

Իր ժողովրդի հետ անխախտ կապերով կապված գիտնականն ասել է. «Այն գործը, որի վրա ես աշխատում եմ 60 տարի, անխախտելիորեն կապված է մասսաների հետ, հանդիսանում է մասսաների գործը»: Ի. Վ. Միշուրինը բուռն կերպով և հաստատակամորեն ձգտել է օգտագործել սելեկցիան, որպես մի հզոր զենք, սոցիալիզմի կառուցման համար: «Նժե մենք, — ասել է Ի. Վ. Միշուրինը, — կոչված ենք այն բանի համար, որպեսզի ոչ միայն բացատրենք, այլև փոխենք աշխարհը, որպեսզի այն ավելի լիակատար համապատասխանի աշխատավորության կարիքներին, ապա ես տեսնում եմ, որ սելեկցիան սոցիալիզմ կառուցող ժամանակակից հասարակության հզոր զենքն է»:



Վասիլի Վասիլևիչ Դոկուչան

«... Ձի կարելի անցնել այն անկասկածելի հոգր ազգեցության կողքով, որպիսին պետք է թողնելն քննվող վայրի ջրային տնտեսության վրա տափաստանային անտառները»:

Վ. Վ. Դոկուչանով

«Ձպետք է մոռանալ նույնպես, որ ամառը անտառները վայրը պահպանում են չորացնող շոգ քամիներից, կանգնեցնում են ավազների շարժումը և հողի լվացումը»:

Վ. Վ. Դոկուչանով

Նրաշտային տարիներին հացաբույսերը եվ խոտերը տափաստաններում ավելի լավ աճում են անտառների մեջ եվ նրանց մերձակայում, կենդանի ցանկապատների և անտառային անկարկների պաշտպանության տակ, բանից դուրս է դալիս, որ հողը այստեղ համեմատաբար ավելի խոնավ է»:

Վ. Վ. Դոկուչանով

Ի. Վ. Միշուրինն իր մեծ մտքով հասկացել է, որ սելեկցիան որպես հզոր գենք կարող է ունենալ և կիրառել միայն հզոր ժողովուրդը: Նա ըմբռնել է, որ մենատնտեսատիրական գյուղացիությունը զուրկ է այդպիսի մեծ ուժից, հզորությունից, ուստի ամենայն ջերմությամբ ողջունել է կոլխոզային կարգերը, դիտելով այն, որպես միակ ճանապարհ՝ բնության ուժերը նվաճելու և ժողովրդի կարիքներին ծառայեցնելու համար: «Ես տեսնում եմ,—ասել է Ի. Վ. Միշուրինը,—որ կոլխոզային կարգը, որի միջոցով կոմունիստական պարտիան սկսում է վարել հողի նորոգման մեծ գործը, աշխատավորական մարդկությանը կհասցնի իրական հզորության՝ բնության ուժերի վրա»:

Այսպիսով մենք տեսնում ենք, թե որքան իմաստալից է մեծ գիտնականի ճանապարհը, որը ձգտել է իր գիտությունը ավելի հզորացնել՝ այն տալով մասսաների ձեռքը, որը ձգտել է իր գիտությունը ազնվագույն դարձնել՝ այն գործադրելով որպես հզոր գենք սոցիալիզմի կառուցման համար, ձգտել է իր գիտությունը անպարտելի դարձնել՝ այն դնելով կոլխոզային մասսաների ձեռքը: Այսպես է ահա մեծ գիտնականը ըմբռնել և կիրառել Լենինի—Ստալինի գիծը:

Մարդկային հասարակության մեծագույն վերակառուցողը՝ Ստալինը ուղղել և ուղղում է մեր ժողովրդի ջանքերը դեպի բնության ուժերի նվաճման և մարդու կարիքներին ծառայեցնելու մեծ նպատակը: Դեռևս 1924 թվին նա ասել է. «Մենք վճռել ենք... անել այն ամենը, ինչ հնարավոր է այն բանի համար, որպեսզի ապագայում ապահովագրենք մեզ երաշտի պատահականություններից»: Այնուհետև, մեծ առաջնորդը գտել է, որ այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է. «ձիշտ ցանքաշրջանառությունների կիրառում, մաքուր ցեղերի լայնացում, սերմի գործի բարելավում» և, այնուհետև,—«անտառների և պաշտպանական անտառաշերտերի ստեղծում Անդրվոլգյան արևելյան շրջաններում»:

Այդ հոյակապ ծրագիրը՝ կոմունիզմին հասնելու կարևորագույն միջոցներից մեկը, չէր կարող իրագործվել մենատնտեսատիրական գյուղատնտեսության միջոցով, որը թույլ էր իր մասնատված լինելու հետևանքով, հողագործությունը մանր հողակտորների վրա վարելու պատճառով: Եվ ահա, Ստալինի հանճարեղ ղեկավարությամբ իսպառ փոխվում է մեր գյուղատնտեսության դեմքը, այն դառնում է կոլխոզային, սոցիալիստական:



Պափեկ Անդրեանի Կոստիշե

«... ոչ միայն բուսական ու կենդանական աշխարհի
դոյութիւնը, այլև մարդու անձնական և հասարակական
կյանքը սերտ կախման մեջ է դանձում հոգի վերին շեր-
տի հասկութիւններէ»:


Պ. Ա. Կոստիշե

Շնորհիվ կոլխոզային կարգերի մեր գյուղատնտեսությունը դարձել է անսահման ուժերի ու հնարավորությունների տեր։ Այդ կարգերն այնքան էին ամրապնդվել ու հզորացել, որ դեռ Հայրենական մեծ պատերազմից առաջ կարող էին ձեռնարկել հողագործությունը հիմնովին վերակառուցելու գործը։ Սակայն մեծ առաջնորդն իր պայծառ և հեռուները տեսնող հզոր մտքով կռահել էր մեր Հայրենիքին սպառնացող ահավոր վտանգը ֆաշիստական երկրների կողմից և, իրոք, նա ստիպված եղավ մարտի հանել Սովետական Բանակը և ողջ ժողովուրդը։ Հզորամիտ Գեներալիսիմուսը փայլուն հաղթանակի հասցրեց սովետական երկիրը, ջախջախելով գերմանական ֆաշիզմի զինված ուժերը, միջազգային ֆաշիզմի այդ ողնաշարը։

Մեր Սովետական Հայրենիքը պատերազմից դուրս եկավ ավելի հզորացած։ Նա կարողացավ կարճ ժամանակամիջոցում վերականգնել իր սոցիալիստական տնտեսության նախապատերազմական վիճակը և սկսել նոր վերելք՝ սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ճանապարհին։ Նա հասավ այնպիսի վիճակի, որ կարող էր ձեռնարկել մեծ առաջնորդի մեծ մտահղացումներից մեկի իրականացումը՝ մեր երկրի բնությունը վերափոխելու և այն մարդու կամքին ենթարկելու մասին։

Եվ ահա մեծ Ստալինի նախաձեռնությամբ 1948 թվին ընդունվում է Շրջառաքառաքան ծառատնկումների, խոտադաշտային ցանքաշրջանառությունների ներդրման, լճակների և ջրամբարների կառուցման պլանը՝ ՍՍՌՄ եվրոպական մասի տափաստանային և անտառատափաստանային շրջաններում բարձր և կայուն բերք ապահովելու համար։ Այդ վիթխարի պլանը ծավալուն կերպով սկսվել է իրագործվել հենց իր հաստատման օրից և 1948 թվի վերջում կատարած ստուգումը ցույց է տվել, որ այն հաջողությամբ իրականացվում է և արդեն զգալի աշխատանք է կատարվել։ Եվ պարզ է, որ այդ պլանը հաջողությամբ կիրականացվի, քանի որ ինքը իմաստուն Ստալինն է ամեն օր հող տանում այդ մասին և միլիոնավոր եռանդուն սովետական մարդիկ են աշխատում այդ գործի համար։

Միանգամայն հասկանալի է, որ հեռու չէ այն օրը, երբ մեր երկրի դաշտերը անսահման կերպով բերրի կդառնան և խառառ ազատ կլինեն երաշտի վտանգից։ Բույսերի մեր այժմյան սորտերը և անասունների ցեղերը ապահովված կլինեն առատ սնունդով և դրա շնորհիվ նրանք կբարելավվեն ու առատ ար-



Վասիլի Ռոբերտովիչ Վիլյամս

«... կյանքում չեմ ունեցել և չունեմ այլ նպատակ, բացի ժողովրդին ծառայելու նպատակից»:

Վ. Ռ. Վիլյամս

«Հողագործության խոտաղաշտային սխտեմը—գլխույթյան կեսդարյա ջանքերի արդյունքը, իմ ամբողջ կյանքի բաղձանքը—դառնում է ժողովրդի համընդհանուր սեփականություն, կոլխոզները և սովխոզները ստանում են ամենուրեք բարձր բերքի ստացման մեղ հայտնի միակ ազդեցությունից՝ միջոցը: Հողը կաշխատել սոցիալիզմի համար: Սովետների երկիրը ընդունակ է աշխարհում չտեսնված բերքեր հավաքելու, և ես հավատում եմ, որ հեռու չէ այն ժամը, երբ 100 ցենտները մեկ հեկտարից իմ հայրենիքի միջին բերքը կլինի»:

Վ. Ռ. Վիլյամս

դյուռնքներ կտան մեր ժողովրդին: Կիրականա՞նա ուսման մեծ գիտական Կ. Ա. Տիմիրյազևի երազանքը՝ երկու հասկ աճեցնել այնտեղ, որտեղ միայն մեկն էր աճում:

Սակայն որոշակի ու պարզ է նաև, որ գյուղատնտեսության այն նոր ու ավելի բարձր մակարդակը, որը ստեղծվելու է Ստալինյան 15-ամյա պլանի իրականացման շնորհիվ, դնում է նոր պահանջներ: Այն պահանջելու է բարձր մակարդակ՝ գիտությունից, ավելի բարձր կուլտուրական և գիտա-ագրոտեխնիկական մակարդակ՝ գյուղատնտեսության մեջ գործնական աշխատանք տանողներից, պահանջելու է նաև ավելի սերտ կապ՝ գիտության և գործնական գյուղատնտեսության մեջ: Չէ որ հասնելու է այն ժամանակը, երբ գործնական գյուղատնտեսության մակարդակը հավասարվելու է գյուղատնտեսական գիտության մակարդակին, երբ գյուղը իր անտեսական և կուլտուրական մակարդակով հավասարվելու է քաղաքին: Այժմ իսկ հսկայական են մեր մեծ Սովետական Հայրենիքի նվաճումները այդ ուղղությամբ, բայց երբ իրագործվի մեր երկրի բնության վերափոխման Ստալինյան պլանը, այն ժամանակ էլ ավելի մեծ թափով կվերանա քաղաքի և գյուղի տարբերությունը:

Այն գիտությունը, որը արդեն մեծ ծառայություններ է մատուցել գյուղատնտեսությանը և ի վիճակի է բավարարելու նրա պահանջները նաև նրա զարգացման ավելի բարձր աստիճանի ժամանակ, հանդիսանում է ագրոքիոլոգիական գիտությունը, այսինքն այն գիտությունը, որ ստեղծել է մեր օրերի մեծ գիտնական ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն, գեղեցիկ կերպով միավորելով միջուկինյան բիոլոգիան Կոստիչևի, Դոկուչաևի և Վիլյամսի ուսմունքի հետ: Ագրոքիոլոգիան, որը զարգանում է ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի հմուտ ղեկավարությամբ, հանդիսանում է բիոլոգիական-գյուղատնտեսական գիտության մի նոր, ավելի բարձր շրջան: Խորապես յուրացված և զենք դարձած ագրոքիոլոգիական գիտությունը հնարավորություն է տալիս ստեղծելու բույսերի նոր սորտեր և կենդանիների նոր ցեղեր:

Հայկական ՍՍՌ-ում աշխատող գիտնականները նույնպես պետք է աշխատեն ստեղծել բույսերի նոր, արժեքավոր սորտեր և անասունների նոր ցեղեր: Ի՞նչպիսի պատկեր գոյություն ունի մեզ մոտ այդ տեսակետից:

Ցավելով պետք է ասել, որ մեր ռեսպուբլիկան մինչև այժմ չունի բամբակենու լավ սորտեր: Հայաստանի բամբակագործնե-

բը չիշում են բամբակենու «915», «0246», «Շրեդեր» և այլ սոր-
տերը, որոնք մեր պայմաններին համապատասխան չլինելու
պատճառով խաղառ դուրս են եկել, կամ դուրս են դալիս: Ներ-
կայումս մշակվում է «1298» սորտը, որը նույնպես չի բավա-
րարում եղող պահանջները: Ուրեմն պարզ է, որ բամբակենու
սորտ տալը հրատապ, անհետաձգելի, ձգձգման ոչ ենթակա
խնդիր է: Մեր բամբակադործ կոլխոզնիկները բամբակենին լավ
են մշակում և այդ մշակությունը ավելի ևս բարձր կլինի ան-
տառային դոտիներով պաշտպանված խոտադաշտային ցանքա-
շրջանառության դաշտերում, և եթե բամբակադործ կոլխոզնիկ-
ներն ունենան իրենց տրամադրության տակ համապատասխան
սորտ, ապա նրանք կարող են շատ ավելի բարձր բերք տալ մեր
երկրի կարիքների համար: Մեր սելեկցիոներները կարող են և
պետք է տան բամբակենու նոր սորտեր:

Մեր միշուրինական դիտնականները, ինչպես արդեն աս-
վել է վերևում, ավել են ցորենի երեք սորտ՝ «Արմյանկա»-ն, «Ար-
տաշատի 42»-ը և «Եղվարդի 4»-ը, որոնք բավարարում են Հա-
յաստանի լեռնային, նախալեռնային և դաշտային մասերի պա-
հանջները: Սակայն անհրաժեշտ է ավելի թվով սելեկցիոն սոր-
տեր ունենալ Հայաստանի բազմազան հողա-կլիմայական պայ-
մանների համար:

Ներկայումս Հայաստանում այս երեք սորտից և «Ուկրա-
ինկա»-յից բացի, այլ սելեկցիոն սորտեր չկան: Գարնանացան
սելեկցիոն սորտ ամենեին չունենք: Ինչպես արդեն ասվել է,
«Ուկրաինական» պետք է հանվի իր մի շարք բացասական հատ-
կությունների պատճառով: Մնացած սորտերը տեղական սոր-
տերն են, երբեմն բարելավված, երբեմն էլ ոչ: Այդ տեղական
սորտերից — «Զարդան» (համադանիկումը) փոխարինվելու է
«Արտաշատի 42»-ով, «Սպիտակահատը» փոխարինվելու է «Եղ-
վարդի 4»-ով, «Գյուլգանին» փոխարինվելու է «Արմյանկա»-յով:
Առայժմ սելեկցիոն սորտով չեն կարող փոխարինվել հետև-
յալ տեղական սորտերը՝ «Բռիկը» (Դելֆին), էրինացերումը,
ոուբրիցեպուր, «Ալթի աղաջը», «Կարմիր սլֆահատը», «Սպի-
տակ սլֆահատը», պերսիկումը, «Կալերը» և «Տաշտունը»: Մեր
առաջին նպատակը պետք է լինի՝ ցորենի այս տեղական սոր-
տերը փոխարինել սելեկցիոն սորտերով, բայց դրա համար հա-
մեմատարար երկար ժամանակ է պետք, ուստի մինչև սելեկցիոն

սորտեր ստեղծելը պետք է բարելավել այդ տեղական ցորեն-
ները:

Պետք է միշտ հիշել, որ բույսերի բոլոր սորտերը ժամա-
նակի ընթացքում ծերանում են, հոգնում են: Այդ պատճառով
պետք է միջոցներ ձեռք առնել նրանց թարմացման հա-
մար: Միաժամանակ պետք է հարատև, չընդհատվող, մշտա-
կան աշխատանք տանել եղած լավ սորտերը, այդ թվում նաև
«Արմյանկա», «Արտաշատի 42» և «Նիվարդի 4» սորտերը լավա-
դույններով փոխարինելու նպատակով:

Լուրջ հարցեր են դրվում նաև ծխախոտի վերաբերյալ:
Ինչպես հայտնի է, այդ կուլտուրան բավականին մեծ տարածու-
թյուն է բռնում մեր ռեսպուբլիկայի ոչ միայն դաշտային ու
նախալեռնային, այլև լեռնային շրջաններում: Բայց բանն այն
է, որ եթե դաշտային ու նախալեռնային շրջաններն ապահովված
են սորտերով, ապա լեռնային շրջաններն ապահովված չեն:
Մինչև այժմ մեր սելեկցիոներներն այդ հարցի լուծումով չեն
զբաղվել, այնինչ այդ շատ կարևոր է, կարելի է ասել՝ հրատապ է,
և մեր գիտնականները այդ խնդիրը պետք է լուծեն առաջիկա
2—3 տարվա ընթացքում:

Կարտոֆիլի կուլտուրայի վերաբերյալ ևս շատ անելիքներ
կան: Հայտնի է, որ Հայկական ՍՍՌ-ում այժմ մշակվում է այն-
պիսի բերքատու սորտ, ինչպիսին է «Լորխը», ըստ որում մեր
կոլխոզնիկները լավ ազրոտելիս կա կիրառելով միշտ էլ ստա-
նում են բարձր բերք: Սակայն վերևում արդեն ասվեց, որ լավ
սորտերը պետք է փոխարինվեն լավադույններով: Ուրեմն, պետք
է աշխատել այդ ուղղությամբ: Իսկ աշխատելու հնարավորու-
թյունները բավականին լայն են: Այսպես, օրինակ, պետք է վե-
րականգնել տեղում. վաղուց մշակվող կարտոֆիլի «Ժողովրդա-
կան» կոչվող արժեքավոր սորտը և մի կողմից բարելավել այն,
մյուս կողմից էլ նրանից դուրս բերել նոր արժեքավոր սորտ:
Նույն նպատակների համար պետք է աշխատել օգտագործել Լե-
նինականի շրջանում վաղուց ի վեր մշակվող «Սպիտակ ծաղիկ»
և «Կարճաքոք» կոչվող սորտերը: Պետք է լուրջ աշխատանք տա-
նել նաև գիտությունների դոկտոր Տ. Ս. Տեր-Սահակյանի ստա-
ցած կարտոֆիլի «Սևան» սորտի բարելավման համար, և վերջա-
պես նոր սորտ ստանալու նպատակով կարելի է ու պետք է օգ-
տագործել նաև «Լորխ» սորտը և այլ բերովի սորտեր, որոնք պետք
է լուրջ հետևողականությամբ ստուգվեն մեր պայմաններում:

Համագանց կարեւոր հարցեր են դրվում նաև խաղողագոր-
 ծության առաջ, Խաղողի կուլտուրան մեր ուսպուրիկայի տե-
 րիտորիայի վրա մշակվել է հաղարամյակների ընթացքում:
 Վարպետ խաղողագործների ձեռքերով ստեղծվել են, և այժմ
 կան, խաղողի բաղմաթիվ ու բաղմապիտի սորտեր, որոնք ունեն
 շատ բարձր արժեք: Խաղողի այդպիսի հարուստ ասորտիմենտը
 հնարավորութուն է տալիս շատ մեծ աշխատանքներ ծավալել
 նոր, լավագույն սորտեր ստեղծելու համար: Միայն թե անհրա-
 ժեշտ է խորը կերպով ուսումնասիրել այն բոլոր տեսակները,
 որոնք կան, և նրանցից միջուրինյան բիոլոգիայի հիման վրա
 կարելի կլինի ստանալ նոր սորտեր, այնպիսի բաղմազանու-
 թյամբ և այնպիսի հատկություններով, որոնց մասին մեր նա-
 խահայերը երազել էլ չէին կարող: Այդ չի նշանակում, որ մին-
 չև այդպիսի սորտեր ստանալը հին սորտերը պետք է անուշա-
 դիր թողնել: Ընդհակառակը, պետք է երևան բերել այդ սորտե-
 րից լավագույնները և նրանց լայնորեն տարածել արտադրու-
 թյան մեջ: Բացի այդ, լավագույն սորտերից պետք է ընտրել
 այնպիսի ծնողական ձևեր, որոնք հիբրիդացման ենթարկվելով՝
 տան ավելի մեծարժեք սորտեր: Պետք է լայնորեն օգտագործել
 ագրոբիոլոգիական գիտությունը, ձգտելով ստանալ այնպիսի
 սորտեր, 1) — որոնք կարողանան մշակվել առանց վաղը ձմեռ-
 ները թաղելու, 2) — որոնք դիմացկուն լինեն լեռնային պայ-
 մանների համար, ուստի և ունենան կարճ վեգետացիոն շրջան,
 3) — որոնք հարմար լինեն անջրդի պայմաններում մշակվելու,
 դոնե այնպիսի շրջաններում, ինչպիսին են Հայաստանի հյուսիսա-
 յին շրջանները՝ Շամշադինը, Իջևանը, Նոյեմբերյանը, Ալավեր-
 դին և այլն: Այս ամենի համար վճռական դեր է խաղալու խա-
 ղողի վաղի ագրոտեխնիկան, որը պետք է ամենայն լրջությամբ
 ուսումնասիրվի մեր ուսպուրիկայի բաղմազան պայմաններում:
 Այս բոլոր հարցերի ուսումնասիրության և լուծման ընթացքում
 պետք է միշտ նկատի ունենալ դինու զանազան տեսակների՝
 սեզանի դինիների, շամպանյան դինիների և զանազան այլ դի-
 նիների արտադրության հարցը:

Մեր ժողովրդական տնտեսության համար լուրջ նշանակու-
 թյուն ունի նաև պտղաբուծությունը: Պտղաբուծության բնագա-
 վառն ևս այնպիսիներիցն է, որտեղ ժողովրդական սելեկցիան
 շատ բան է արել և ստեղծել է զանազան պտղատուների լավագույն
 սորտեր, օրինակ՝ ծիրանի, տանձի, խնձորի, սալորի և այլն: Այս

նշանակում է, որ միջուրինյան բիոլոգիան իր տրամադրության տակ ունի հարուստ մատերիալ, ուստի կարող է հաջողությամբ լուծել այն հարցերը, որոնք առաջադրվում են իրեն։

Կարևորագույն խնդիրը, որը մեր ռեսպուբլիկայում դրվում է պտղաբուծության առաջ, հանդիսանում է ցրտադիմացկուն սորտերի ստեղծումը։ Պետք է ստեղծել այնպիսի արժեքավոր սորտեր, որոնք կարողանան դիմանալ վաղ աշնանային և ուշ գարնանային ցրտերին։ Ամենից վտանգավոր են այն ցրտերը, որոնք տեղի են ունենում գարնան վերջերին։ Նկատված է, որ ցրտին ավելի շատ դիմանում են այն սորտերը, որոնք գարնանային ուշ ցրտերի ժամանակ դեռևս բացված չեն, նաև այն սորտերը, որոնք վաղ են վերջացնում իրենց հասունացումը և այս բանի շնորհիվ չեն վախենում վաղ աշնանային ցրտերից։ Մի խոսքով, պետք է դուրս բերել այնպիսի սորտեր, որոնք ունեն կարճ վեգետացիոն շրջան, ուրիշ խոսքով՝ հասունացման կարճ շրջան։ Օրինակ, Արարատյան դաշտավայրի պայմաններում բույսերը ցրտադիմացկունության տեսակետից բարելավելը ամենից ավելի վերաբերում է ծիրանենուն, դեղձենուն, նշենուն, այնուհետև՝ բալենուն, խնձորենուն և այլն։ Հասկանալի է, որ ցրտադիմացկուն սորտերի ստեղծումով հնարավորություն կլինի բավարարել նաև Հայաստանի լեռնային շրջանների պահանջները։ Պտղաբույծները պետք է առանձին ուշադրությամբ ուսումնասիրեն նաև այն հարցը, թե որ պտղատուներն են, որոնք մտցվելու են դաշտապաշտպան անտառադաշտիների մեջ։

Պտղաբուծության հարցերը լուծելիս պետք է ուշադրություն դարձնել երկու կարևոր խնդրի վրա։ Առաջինն այն է, որ մեր կոնսերվային արդյունաբերությունը պետք է որքան հնարավոր է երկար ժամանակ ապահովված լինի հումքով և այն էլ համաչափ կերպով։ Այդ նշանակում է, որ պետք է կոնսերվացմանը համապատասխան մրգեր լինեն բույսերի պտղատվության բոլոր ամիսների ընթացքում։ Մինչդեռ մեզ մոտ վիճակն այնքան էլ լավ չէ։ Օրինակ, ծիրանի բերքը վերջանալուց հետո մինչև դեղձի ու խաղողի հասնելը, այլ մեծաքանակ մրգեր չկան, ըստ որում չկան ոչ միայն կոնսերվի արդյունաբերության, այլև ուտելու համար։ Միջուրինյան սելեկցիան, իհարկե, ի վիճակի է այս հարցը լուծելու։ Ներկորդն էլ այն է, որ միջուրինյան դիտությունը ավելի ակտիվ կերպով պետք է աշխատի հարստաց-

նել մեր սեպուրիկայի պաղատունների ասորտիմենտը՝ դրսից բերված և մեր պայմաններում վերադաստիարակված ու հարմարեցված թանկարժեք սորտերով, հատուկ ուշադրություն դարձնելով շոր սուրտրոսիկական պաղատունների՝ թուղի, նռան, ձիթենու և այլն, և սուրտրոսիկական պաղատունների՝ լիմոնի, մանդարինի և այլ բույսերի սորտերի վրա:

Մենք այստեղ թվեցինք գյուղատնտեսական մի քանի գլխավոր կուլտուրաներ և չխոսեցինք շատ այլ բույսերի մասին, որոնք նույնպես չափազանց կարևոր են, օրինակ՝ եղիպտացորենը, դարին, կերախոտերը, կաավհատը, բանջարանոցայինները և այլն և այլն: Մենք այստեղ կանգ չառանք այն հարցերի վրա, որոնք պետք է նոր հիմունքներով ուսումնասիրեն մեր հողագետները, ագրոքիմիկները, բուսաբանները և այլ մասնագետները, որոնց համար բացվում են հետազոտությունների նոր, անսահման և դրավիչ հեռանկարներ: Սրանք բոլորը պետք է պատշաճ ուշադրության արժանանան մեր գիտնականների կողմից:

Այս բոլոր հարցերը հեշտ չեն, բայց լուծելի են շնորհիվ Միչուրինի—Լիսենկոյի մշակած տեսության, շնորհիվ Կոստիչևի—Դոկուչանի—Վիլյամսի մշակած խոտադաշտային երկրագործության սխեմայի: Միայն անհրաժեշտ է, որ այդ գիտությունը՝ ագրոքիոլոգիան, խորապես յուրացվի, լայնորեն կիրառվի և կիրառվելով դարդանա ու հարստանա: Նկատի պետք է ունենալ, որ ագրոքիոլոգիական գիտությունը մեծ և հզոր զենք է, որին պետք է կարողանալ տիրապետել և որը պետք է կարողանալ գործադրել: Հայաստանի միչուրինականները—լիսենկոյականները ապացուցել են, որ նրանք գիտեն այդ զենքի գործադրությունը և կաշխատեն այն ավելի լայնորեն օգտագործել բույսերի նոր մեծարժեք սորտեր ստանալու համար: Մյուս կողմից էլ՝ միչուրինյան գիտության ուժը կբաղմապատկվի, եթե այն դառնա մասսայական: Ինչպես է դրությունը այս տեսակետից մեղմոտ, Հայկական ՍՍՌ-ում:

Ինչպես ողջ Սովետական Միությունում, այնպես էլ Սովետական Հայաստանում տարեցտարի աճել է գոլխողային դաշտերի բարձր բերքի վարպետների թիվը: Նրանցից շատերն արժանացել են Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի բարձր կոչման: Այստեղ կարելի է հիշատակել Ա. Դրիզորյանի, Ս. Վար-

գանյանի, Մ. Մարտիրոսյանի, Մ. Սարգսյանի և ուրիշների ա-
նունները:

Ինչպէս է պատահել, որ այդ մարդիկ Սոցիալիստական աշ-
խատանքի հերոս են դարձել: Այդ հարցին պատասխանելը դժվար
է. այդ բանը հետեւանք է նախ և առաջ կոլխոզային կարգերի,
որի շնորհիվ մեր գյուղի կուլտուրան բարձրացել է, ստեղծվել
է հնարավորութիւն ազատ ստեղծագործական աշխատանքի,
այնպիսի աշխատանքի, որը ոչ միայն բարձր եկամուտ է բե-
րում, այլև՝ բարձր պատիւ: Այն էլ կարեւոր է, որ մեր կոլխոզնե-
րում մեծացել է այն մարդկանց թիւը, որոնք հասել են կուլ-
տուրական և քաղաքական բարձր մակարդակի, կրթութիւն են
ստացել մեր սովետական դպրոցներում, մեր սովետական իրա-
կանութեան մեջ, խորապէս ըմբռնել բոլշևիկյան պարտիայի գի-
ծը, սոցիալիզմից կոմունիզմին անցնելու վե՛հ գաղափարը: Եվ
վերջապէս, կարեւոր է այն, որ այս պայմաններում, բնականա-
բար, հղկվում է մարդկանց ընդունակութիւնը, որոնք նայում
են իրենց շրջապատին ստեղծագործական աչքերով:

Բնական է, որ այդ կարգի մարդիկ պետք է ձգտեն և ձգե-
տում են դեպի գիտութիւն: Առավել ևս բնական է, որ այդ
մարդիկ բուռն կերպով ձգտում են յուրացնելու ագրորիոլոգիա-
կան գիտութիւնը, որը հարազատ է իրենց և մոտիկ: Ահա այս
գործում նրանք պետք է անհրաժեշտ օգնութիւն ստանան: Ագ-
րորիոլոգիական գիտութիւնը մասսաների սեփականութիւնը
դարձնելու խնդրում. մեծ դեր պետք է խաղան առաջին հերթին
մեր ագրոնոմները, որոնք պետք է աշխատեն պահպանել իրենց
դեկավար դերը, աշխատեն բարձր պահել խոտքով ու գործով
սովորեցնող և կազմակերպող գյուղատնտեսի դիրքը: Պետք է
լրիվ օգտագործել նաև այն բոլոր հնարավորութիւնները, որոնք
ունեն խրճիթ-լարորատորիաները, նրանց առաջ դնելով մեկ-եր-
կու հարց, որոնք ամենից կարեւորն են տվյալ կոլխոզի համար:

Ագրորիոլոգիական գիտութիւնը մասսաների մեջ լայնորեն
տարածելու գործում հսկայական անելիքներ ունեն հատկապէս
գիտական աշխատողները և հիմնարկները: Առաջին հերթին պետք
է հայերեն լեզվով գրականութիւն ստեղծել ագրորիոլոգիայի
վերաբերյալ: Անհրաժեշտ է թարգմանել Միշուրինի, Լիսենկոյի,
Կոստիչևի, Դոկուչակի և Վիլյամսի ամենահիմնական աշխատու-
թիւնները: Ոչ միայն պետք է թարգմանել այդ աշխատութիւն-
ները, այլև անհրաժեշտ է օգնել, որ կոլխոզային լայն ակտիվը

կարողանա յուրացնել նրանց բովանդակությունը, հասկանա
իմաստը: Անհրաժեշտ է դասախոսություններ կարդալ շրջանա-
յին կենտրոններում և գյուղերում: Ազրոբիոլոգիական գիտու-
թյան պրոպագանդայի լավ միջոց է այն, որ մեր գիտական հիմ-
նարկությունները սեփականեր ու գիտական նիստեր են կազմա-
կերպում շրջաններում, կոլխոզային ակտիվի ներկայացուցիչնե-
րի հետ միասին: Շատ մեծ նշանակություն ունեն այն դասա-
խոսությունները, որոնք կարդացվում են զանազան կուրսերում՝
թե՛ ուսպուրչիկայի կենտրոնում՝ Նրեանում և թե՛ շրջանային
կենտրոններում: Դիտական աշխատողները և հիմնարկները պետք
է ավելի ակտիվ կերպով կազմակերպեն իրենց գիտա-հետազո-
տական աշխատանքների դորձնական արդյունքները արտադրու-
թյան մեջ ներդնելու դորձը, լայն կերպով ներդրավելով գյու-
ղատնտեսներին և կոլխոզային ակտիվին:

Կան, և կարելի է թվել, բազմաթիվ այլ միջոցներ, որոնք
հնարավորություն են տալիս պրոպագանդայի ենթարկելու Մի-
չուրինի—Լիսենկոյի—Կոստիչևի—Դոկուչաևի—Վիլյամսի ուսմուն-
քը և այն դարձնելու մասսաների սեփականությունը: Ազրոբիոլո-
գիական գիտությամբ զինված կոլխոզնիկները, գյուղատնտեսները
և գիտնականները հաջողությամբ կլուծեն այն հոյակապ հարցերը,
որոնք նշված են բնությունը վերափոխելու Ստալինյան 15-ամ-
յա վիթխարի պլանում:



**Տպագրվում է Հայկական ՍՍՌ-ի ԳԱ
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ.**

**Պատ. խմբագիր Գ. Հ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ
Տեխ. խմբագիր Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Կոնսուլ ռեդակցիայի Մ. ՊԱՐՈՆԻԿՅԱՆ**

ԳԱ ԽՀԽ № 18.

**Հանձնված է արտադրության 27/IX 1949 թ., ստորագրված է տպագրության
27/X 1949 թ. ՎՃ 04167, պատ. 440, հրատ. № 668, տիրած 3000,
տպագր. 5¹/₂ մամ. + 4 ներգիր, 1 մամուլում 38400 տպանիշ:**

Հայկական ՍՍՌ-ի ԳԱ տպարան, Երևան, Արովյան 124:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0010800

Գրք 3 Ռ. 304.

A $\frac{\pi}{15856}$